

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

(2015-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների
ծրագրի վերլուծություն)



Բովանդակություն

Ներածություն.....	3
Կոռուպցիոն իրավիճակն ու հակակոռուպցիոն պայքարը ՀՀ կրթության ոլորտում	5
Կոռուպցիա և ոչ կոռուպցիա.....	5
Թվեր և ընկալում	7
Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ կրթական համակարգում	10
2009-2012թթ. հակակոռուպցիոն ռազմավարությանն ու դրա իրագործմանը բնորոշ հիմնախնդիրները.....	13
Կրթական կոռուպցիայի համակարգային բնույթն ու գործառական նշանակությունը	14
Կոռուպցիոն մշակույթը ՀՀ կրթական համակարգում	16
Կոռուպցիոն հիմնախնդիրների այլընտրանքային վերլուծություն	18
Հակակոռուպցիոն ռազմավարությանը հասուկ խնդիրները	34
Որո՞նք են նախորդ ռազմավարության արդյունքները.....	34
Որո՞նք են կոռուպցիոն ռիսկերը	35
Հիմնախնդիրներ թե՞ նպատակներ	36
Կրթական այլ մակարդակների «անտեսումը»	37
Հիմնախնդիրների և միջոցառումների միջև կապի բացակայությունը	38
Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրին հասուկ խնդիրները.....	39
ԿԳՆ և բուհական հակակոռուպցիոն ծրագրերը	45
Եզրահանգումներ	46
Առաջարկություններ.....	50
Օգտագործված գրականության ցանկ	55

Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N 18868:

Վերլուծությունն արտահայտում է հեղինակի տեսակետները, որոնք կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Հանրային քաղաքականության ինստիտուտի ստեղծման գաղափարը ծագել է դեռևս 2012թ., երբ մի խումբ հետազոտողներ համախմբվեցին այն գաղափարի շուրջ, որ ժողովրդավարական պետության կայացման գործում նշանակալի ներդրում կարող է ունենալ անկախ թինկ թանկը (think tank), որը կկարողանա ձևավորել հանրային քաղաքականության օրակարգ և առաջ մղել քաղաքականության փոփոխությանը միտված իրատեսական ծրագրեր:

Հանրային քաղաքականության ինստիտուտի (ՀՔԻ) անդամները փորձառու վերլուծաբաններ են և հանրային քաղաքականության ձևավորման գործում անհատական ներդրում ունեցած մասնագետներ:

ՀՔԻ ստեղծման գործում անկյունաքար է հանդիսացել «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագիրը, որի կրթաթոշակառուներն են հանդիսացել թինկ թանկի նախաձեռնող խմբի գրեթե բոլոր անդամները: «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագիրն ընդլայնեց այսօր ՀՔԻ անդամ հանդիսացող վերլուծաբանների՝ քաղաքականության հետազոտության և բարելավման առաջարկությունների մշակման հնարավորությունները:

ՀՔԻ առաքելությունն է՝ նպաստել թափանցիկ և հաշվետու հանրային քաղաքականության զարգացմանը՝ խթանելով մարդկային զարգացումը, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և արդյունավետ կառավարումը: Հանրային քաղաքականության ինստիտուտը մշակում և իրականացնում է հետազոտություններ և քաղաքականության ուսումնասիրություններ, կազմակերպում է սեմինարներ, դասընթացներ և հանրային բանավեճեր, խթանում և աջակցում է հանրային քաղաքականության մշակման գործընթացում հասարակության ներգրավմանն ու իրազեկմանը:

Ներածություն

2014թ. ապրիլի 10-ի նիստում ՀՀ կառավարությունը հաստատեց Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ): Փաստաթուղթն ունի հանրային կարևոր նշանակություն, քանի որ ՀՀ կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության շարունակականությունն է ապահովելու առաջիկա տարիներին: Հայեցակարգը պատրաստվել էր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի շրջանակում ձևավորված աշխատանքային խմբի կողմից: Աշխատանքային խմբում ընդգրկված են եղել ինչպես Կառավարության, այնպես էլ՝ այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, փորձագետներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Այնուամենայնիվ, Հայեցակարգի հաստատմանն անմիջապես հետևեց մի շարք կազմակերպությունների քննադատությունն այն մասին, որ փաստաթուղթը հաստատվել է առանց հանրային քննարկումների և հանրային մասնակցության ապահովման: Նման գործելակերպը համարվել է հակասող՝ հրապարակայնության, թափանցիկության, պետական կառավարմանը հանրային մասնակցության սկզբունքներին¹:

2014թ. աշնանը հրապարակվեց ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը (այսուհետ՝ Ռազմավարություն): Դրանում առանձնացված են հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման 4 ոլորտներ՝ առողջապահություն, կրթություն, պետական եկամուտների հավաքագրում և ոստիկանություն: Որոշ ժամանակ անց Արդարադատության նախարարության կայքում տեղադրվեց Ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Միջոցառումների ծրագիր):

Այս ուսումնասիրության համար, որպես վերլուծության հիմնական օբյեկտ, ընտրվել են վերոնշյալ փաստաթղթերի՝ ՀՀ կրթության ոլորտին առնչվող հատվածները: Նշված 4 ոլորտներից մեկի ընտրությունը հիմնված է այն համոզման վրա, որ կրթությունը հիմնարար, գերակա նշանակություն ունի հասարակության կյանքի որակի և զարգացման համար: Հենց այս ոլորտում իրականացվող բարեփոխումներն ունեն հեռահար ազդեցության ավելի մեծ ներուժ: Ընդ որում, փոխադարձ ազդեցությունների համակարգում նույնպես կրթության ոլորտը որոշ գերակայություն ունի մյուս 3 ոլորտների նկատմամբ: Կրթության ոլորտում արդյունավետ հակակոռուպցիոն պայքարի միջոցով է հնարավոր մասամբ չեզոքացնել կոռուպցիոն վարքի ընդօրինակումն ապագա մասնագետների կողմից:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է նաև հեղինակի՝ բարձրագույն կրթության բնագավառում դասախոսական աշխատանքի ավելի քան 7 տարվա փորձառությամբ: Կարծում ենք, այս փորձը լավ նախադրյալ է՝ կրթության խնդիրների խորքային, «ներսի հայացքով» հասկացման համար:

Պետական հակակոռուպցիոն քաղաքականության նախորդ փորձի² ուսումնասիրությունը թույլ է տալիս վկայել բազմաթիվ խնդիրների առկայությունը.

- Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների թերի պլանավորում,
- Որոշ միջոցառումների բովանդակային հակասություն՝ ինչպես օրենսդրական ակտերի պահանջներին, այնպես էլ՝ պետական այլ ծրագրերին,
- Միջոցառումների կատարման նկատմամբ մոնիթորինգի կայուն և հիմնավորված մեխանիզմների բացակայություն,
- Ծրագրերի արդյունքների և ազդեցության գնահատման հստակ համակարգի բացակայություն,

¹ Անընդունելի են համարում առանց հանրային քննարկումների «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգի ընդունումը / 168 ժամ, <http://goo.gl/LHJqSD>

² Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի վերլուծությունը:

- և այլն:

Այս հետազոտության մեկնակետն այն համոզումն է, որ առանձին ոլորտում հակակոռուպցիոն պայքարի հաջողությունը մեծապես պայմանավորված է տվյալ ոլորտի ինստիտուցիոնալ և մշակութային առանձնահատկությունների, կոռուպցիոն վարքի մոդելների և նորմերի իմացությամբ: Ցավոք, մինչ այժմ պետական հակակոռուպցիոն ծրագրերում անհրաժեշտ չափով չի պահպանվել **մասնագիտացվածության** պահանջը³: Կոռուպցիոն հիմնախնդիրների նկարագրությունը դրանցում բավական լայն է և ոչ հստակ, իսկ առաջարկվող լուծումներում հիմնականում արտացոլված չեն տվյալ բնագավառի առանձնահատկությունները:

Ուսումնասիրության **նպատակն է** վերլուծել ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերի՝ կրթության ոլորտին առնչվող հատվածներն ու կատարել դրանց բարելավման առաջարկություններ:

Ծրագրի **խնդիրներն են**.

1. Վերհանել ՀՀ կրթության ոլորտում առավել տարածված կոռուպցիոն խնդիրներն ու կոռուպցիոն վարքի ինստիտուցիոնալ և նորմատիվ առանձնահատկությունները,
2. Վերլուծել հակակոռուպցիոն նոր ռազմավարությունն ու միջոցառումների ծրագիրը տարբեր դիտանկյուններից՝ հիմնախնդիրների և միջոցառումների տրամաբանական կապի առկայություն, միջոցառումների անհրաժեշտություն, հիմնավորվածություն և փոխկապակցվածություն, և այլն,
3. Առաջարկել կրթության ոլորտում հակակոռուպցիոն պայքարի վերաիմաստավորման այլընտրանքային մոտեցումներ/հայեցակետեր:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ուսումնասիրության շրջանակներում կիրառվել են հետազոտության որակական մեթոդներ: Դրանք էին.

Փաստաթղթերի վերլուծություն: Վերլուծության ենթարկված փաստաթղթերի տեսակներն են.

- Կրթության ոլորտին առնչվող իրավական ակտերն ու նախագծերը, ծրագրերն ու ռազմավարությունները (առաջին հերթին՝ հակակոռուպցիոն ծրագրերը),
- Տարատեսակ հետազոտություններն ու զեկույցները թե՛ կոռուպցիայի, թե՛ ՀՀ կրթության ոլորտում կոռուպցիոն խնդիրների վերաբերյալ,
- Մամուլի հրապարակումները (այդ թվում՝ հոդվածներ, հարցազրույցներ):

Փաստաթղթերի ամբողջական ցանկը ներկայացված է «Օգտագործված գրականության ցանկ» հատվածում:

Կիսաձևայնացված հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ: Այս հարցազրույցները հիմնականում իրականացվել են ուսումնասիրության ավարտական փուլում: Դրանց միջոցով քննարկվել և վերստին ստուգվել են հեղինակի առաջ քաշած վարկածները, եզրահանգումներն ու առաջարկությունների կիրառելիությունը (իրատեսականությունը): Առանցքային տեղեկատուների թվում են.

- Կրթական հաստատությունների (բուհեր և հանրակրթական դպրոցներ) մանկավարժական և վարչական անձնակազմերի ներկայացուցիչները,
- Բուհերի ուսանողներն ու շրջանավարտները,
- Կրթության ոլորտի փորձագետները:

³ Ինչը հակակոռուպցիոն պայքարին ներկայացվող, միջազգայնորեն ընդունված չափանիշ է: Մասնագիտացվածության պահանջը ենթադրում է «տարբեր դաշտերում հատուկ մասնագիտացվածություն, գիտելիքներ և ունակություններ, ներառյալ իրավունք, ֆինանսներ, տնտեսագիտություն, հաշվապահություն, հասարակական գիտություններ, սոցիալական գիտություններ և այլ մասնագիտություններ: Կոռուպցիան այն եզակի հանցագործություններից է, որ պահանջում է համակարգային մոտեցում և տարատեսակ մասնագիտությունների և իրավասությունների համադրում»:

Կոռուպցիոն իրավիճակն ու հակակոռուպցիոն պայքարը ՀՀ կրթության ոլորտում

Կոռուպցիա և ոչ կոռուպցիա

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետազոտություններից մեկում ներկայացված է կոռուպցիայի պարզ սահմանումներից մեկը՝ «պաշտոնի չարաշահում անձնական օգուտ ստանալու նպատակով»: Ընդ որում, կոռուպցիան լինում է՝ «ըստ կանոնների» (երբ պաշտոնյան անձնական օգուտ է ստանում օրենքով սահմանված իր պարտականությունները կատարելու համար) և «ընդդեմ կանոնների» (երբ պաշտոնյան անձնական օգուտ է ստանում այնպիսի ծառայության կամ գործողության համար, որը իրավունք չունի տրամադրելու կամ կատարելու)⁴: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի այլ փաստաթղթերում կոռուպցիան նույն իմաստն ունի, փոքր-ինչ այլ ձևակերպմամբ՝ «վստահված իշխանության չարաշահում՝ անձնական շահ ստանալու նպատակով»:

Բազրատ Հարությունյանը ժամանակակից հայ հասարակությունում կոռուպցիայի դրսևորումների սոցիոլոգիական վերլուծության մեջ ներկայացնում է երևույթի սոցիոլոգիական ընկալումը. կոռուպցիան շեղվող վարքի տարատեսակ է՝ ուղղված անձնական նպատակների իրագործմանը՝ ի վնաս պետական շահերի: Նաև՝ սոցիումի անդամների դերային գործառույթների խախտումն է մասնավոր շահերի անմիջական ազդեցությամբ: Նույն հետազոտության մեջ տրված է նաև կոռուպցիայի մշակութաբանական ընկալումը. կոռուպցիան յուրահատուկ սոցիալական պրակտիկա է՝ հիմնված յուրահատուկ մշակույթի (ենթամշակույթի) վրա, որն ունի իր յուրահատուկ լեզուն, խորհրդանշանների համակարգը, էթիկան ու փիլիսոփայությունը⁵:

Առավել տարածված տեսակետի համաձայն, կոռուպցիան լատիներեն *corruptio* բառից է ծագում, ինչը նշանակում է փչացում, քայքայում, այլասերում:

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. որոշման համաձայն. «Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները⁶:

Կոռուպցիայի սահմանումների թվարկումը կարելի է շարունակել, սակայն վերը բերվածն էլ բավարար է այս հետազոտության շրջանակներում հասկացությունը որոշակի բովանդակությամբ կիրառելու համար: Որքան էլ կոռուպցիայի սահմանումները նեղ կամ լայն լինեն, դրանցում առանցքային նշանակություն ունեն՝

1. դիրքի չարաշահման և
2. անձնական օգուտի ստացման

տարրերը:

Ընդ որում, դիրքը կարող է լինել ինչպես ֆորմալ ամրագրված՝ պաշտոն, այնպես էլ՝ ոչ ֆորմալ՝ բարոյական հեղինակությամբ կամ դերային սպասումներով արտահայտվող: Մեր առանձնացրած մյուս տարրը նույնպես բազմաթիվ դրսևորումներ կարող է ունենալ: Անձնական օգուտը միայն

⁴ Հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանում / Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան, Երևան, 2006, <http://goo.gl/nOFWlJ>, էջ 6:

⁵ Социологический анализ проявлений коррупции в современном армянском обществе. Диссертация / Арутюнян Б., Ереван, 2007, էջ 13:

⁶ ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, <http://goo.gl/5vmxO5>

նյութական արտահայտում չունի: Այն կարող է բարոյական ու սոցիալական չափումներ ունենալ՝ հեղինակության ու համբավի բարելավում, սոցիալական կապիտալի ձեռքբերում, և այլն:

Այսպիսով, առանձնացված տարրերի և՛ դրսևորումները, և՛ դրանց համադրությունները բազմաթիվ են ու բազմատեսակ: Յուրաքանչյուր համադրություն կոռուպցիոն գործողության որոշակի դրսևորում է ենթադրում: Հետևաբար, կոռուպցիոն վարքը բավական բարդ ու անկանխատեսելի կառուցվածք է: Անկանխատեսելիությունը բխում է հնարավոր չարաշահման և հնարավոր օգուտի մասին մեր պատկերացումների սահմանափակությունից: Կոռուպցիոն վարքն առավել կանխատեսելի է այն բնագավառներում, որտեղ դիրքի չարաշահման հնարավոր ձևերի և ակնկալվող օգուտի վերաբերյալ մեր գիտելիքը բավարար է: Մովորաբար, մինչ այժմ այդ գիտելիքը ձևավորվել է մարդկային փորձի հիման վրա, իսկ կանխատեսումը մեծ հաջողություն չի ունեցել:

Կոռուպցիոն գործողությունը (իսկ եթե այն կայուն ու կրկնվող բնույթ ունի՝ կոռուպցիոն վարքը) նպատակադիր, հետևաբար՝ գիտակցված բնույթ ունի: Այս պնդումը չի բացառում կոռուպցիոն գործողության վրա ներհոգեկան կամ միջավայրային գործոնների ազդեցությունը: Այնպիսի ազդեցությունը, որն անձի կողմից երբեմն դժվար գնահատելի է, հաճախ՝ ոչ ընկալելի: Մակայն, որևէ երևույթի «կոռուպցիոն» բնորոշումը տալուց առաջ հարկավոր է նախ համոզվել դրանում ներգրավված անձանց նպատակադիր վարքի մեջ: Պարզ ասած՝ կոռուպցիոն գործողության սուբյեկտը գիտակցում է և միտված է դեպի ակնկալվող օգուտը: Հնարավոր չարաշահման վերաբերյալ նույնպես որոշակի պատկերացում պետք է լինի, որպեսզի գործողությունը համարենք կոռուպցիոն:

Առաջին հայացքից պարզ թվացող այս դիտարկումները կարևոր են, քանի որ հանրային քննարկումներում և անգամ պետական հակակոռուպցիոն ծրագրերում բացակայում է կոռուպցիոն վարքի հստակ տարանջատումը իրավախախտ կամ շեղվող վարքի այլ տեսակներից:

Արդյո՞ք պաշտոնյայի կողմից իր պարտականությունների կատարման թերացումը, որը հետևանք է պաշտոնյայի արհեստավարժության պակասի, գիտելիքների և հմտությունների ցածր մակարդակի, կարելի է համարել կոռուպցիայի դրսևորում: Կոռուպցիոն ռիսկը թերևս այլ մակարդակում է գտնվում. ոչ արհեստավարժ մասնագետին աշխատանքի ընդունող անձի գործողություններում: Եթե հնարավոր չէ անձի վարքի մեջ բացահայտել նպատակադիր գործողության (չարաշահման) և/կամ ակնկալվող օգուտի գիտակցումը, միգուցե տեղին է այդ վարքը բնութագրել որպես անբարեխիղճ պահվածք կամ արհեստավարժության բացակայություն, սակայն ոչ կոռուպցիա: Այսպիսով, կարևոր է անձի մոտիվացիան՝ օգուտ ստանալուն ուղղված նպատակադիր (հետևաբար՝ գիտակցված) վարքը:

Թվացյալ «կոռուպցիոն» վարքի իրական պատճառ կարող է լինել, օրինակ, տվյալ պարտականության կատարման անհարկի բարդ կամ ժամանակատար ընթացակարգը: Կամ պաշտոնյան կարող է թերանալ որոշակի պարտականությունների կատարման մեջ, որպեսզի ինայված ժամանակն օգտագործի մյուս պարտականությունների կամ վերադասի լրացուցիչ առաջադրանքների կատարման համար: Այս դեպքում անձնական օգուտը (ինայված ժամանակը) թվացյալ է, իրականում անձը չի ստանում ոչ մի շոշափելի օգուտ: Այլ հարց է, որ կոռուպցիոն ռիսկերը կարող են գտնվել այլ մակարդակներում՝ վարչարարության, վատ կառավարման, և այլն: Անգործությունը, պարտականությունների թերի կատարումը կոռուպցիայի դրսևորում կարելի է համարել այն դեպքում, երբ աշխատանքի կատարման համար սահմանված ժամանակը տվյալ պաշտոնյան օգտագործում է իր անձնական կարիքների համար: Կամ՝ անգործություն է դրսևորում՝ կաշառք ստանալու ակնկալիքով:

Այսպիսով, կոռուպցիոն գործողությունը/վարքը միշտ էլ կոնկրետ է և իրավիճակային: Չկա վերացական կոռուպցիա: Կան կոնկրետ կոռուպցիոն գործողություններ, որոնք կատարվում են որոշակի անձանց կողմից որոշակի իրավիճակներում՝ կոնկրետ օգուտներ ստանալու ակնկալիքով: Արտաքին հատկանիշներով համանման գործողությունը՝ իրականացվող այլ անձի կողմից, այլ իրավիճակում, կարող է ամենևին կոռուպցիոն բնույթ չկրել: Գործողության կոռուպցիոն բնույթը բացահայտելու համար հարկավոր է հասկանալ այն կատարող անձի

մոտիվացիան, նրա վարքին ներկայացվող մշակութային և ինստիտուցիոնալ պահանջները, մյուս ակտորների նպատակները, միջավայրային այլ առանձնահատկությունները:

Անգամ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը կոռուպցիայի հավաստի նշան չէ: Հարկավոր է հասկանալ գործողության խորքային պատճառները. արդյոք այն սովորական մարդկային թափթփվածության, անպատասխանատվության ու իռացիոնալության հետևանք է, թե՛ միտումնավոր գործելակերպ՝ անձնական շահի բավարարմանը միտված: Անպատասխանատու և իռացիոնալ վարքը կարող է պայմանավորված լինել ինստիտուցիոնալ մշակույթով, սովորույթներով ու նորմերով: Պարտադիր չէ, որ դրանում գիտակցված չարաշահման կամ օգուտի տարրեր առկա լինեն:

Կոռուպցիոն գործողությունը կարող է հասկացվել միայն կոնկրետ մշակույթի համակարգում: Միևնույն խորհրդանիշը մի նշանային համակարգում (լեզվում) ունի մեկ նշանակություն, մյուս նշանային համակարգում՝ միանգամայն այլ նշանակություն: Նույն սկզբունքն է գործում կոռուպցիոն գործողության պարագայում: Այնքան կարևոր չեն դրա արտաքին հատկանիշները, որքան՝ տվյալ նշանային համակարգում (մշակույթում) ունեցած նշանակությունը:

Ցավոք, թե՛ Հայեցակարգում, թե՛ Ռազմավարության մեջ բացակայում է կոռուպցիա երևույթի և Հայաստանում դրա մշակութային առանձնահատկությունների վերլուծությունը: Մահմանված չէ անգամ «կոռուպցիա» հասկացությունը: Բացակայում է կոռուպցիոն գործողության հստակ տարանջատումը գործողության այլ տեսակներից: Որպես հետևանք, թե՛ Միջոցառումների ծրագրում, թե՛ ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերում կոռուպցիոն հիմնախնդիրները հստակ տարանջատված չեն կրթական այլ հիմնախնդիրներից: Դրանց կոռուպցիոն բնույթը ոչ միշտ է համոզիչ կերպով պատկերված:

Թվեր և ընկալում

Ըստ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) արդյունքների՝ ՀՀ-ում 2013թ. կրթական համակարգը 58 տոկոսով տեղ է գտել առավել կոռումպացված ոլորտների շարքում: 2010թ. կրթությունը ամենակոռումպացված երեք ինստիտուտներից մեկն էր համարվում Հայաստանում՝ համաձայն Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի՝ տնային տնտեսությունների հետազոտության⁷:

2009թ. իրականացված մեկ այլ հետազոտության արդյունքներով, առաջին աստիճանի ամենակոռումպացված ոլորտներ են գնահատվել առողջապահությունը (23.1%), ընտրական համակարգերը (14.7 %), ոստիկանությունը (9.4 %) և կրթությունը (7.4 %): Երկրորդ աստիճանի կոռումպացվածությամբ հերթականությունը հետևյալն է՝ կրթություն (11.7%), հարկային ծառայություններ (9.7 %), ընտրական համակարգեր (9.6 %) և ոստիկանություն (9.4 %)⁸:

ԵԱՀԿ իրականացրած հետազոտության համաձայն, հարցված ուսանողների զգալի մասի՝ գրեթե 40%-ի կարծիքով, բուհական կոռուպցիան համակարգային բնույթ է կրում՝ պայմանավորված հենց իր՝ համակարգի անկատարությամբ: Կոռուպցիայի այլ պատճառների շարքում նշվել են՝ ուսանողների ծուլությունը (24%), դասախոսների ծանր սոցիալական վիճակը (14%), ուսանողների անտեղյակությունը իրենց իրավունքներից (8%) և այլն⁹:

Հարցվածների մեծ մասը՝ գրեթե 40%-ը, կոռուպցիոն առումով առավել ռիսկային փուլ է համարել ընդունելության քննությունները: Դրան էապես չի զիջում բուն ուսուցման գործընթացի կոռումպացվածության գնահատականը. ուսման տարիները կոռուպցիոն առումով առավել

⁷ Կոռուպցիան և հակակոռուպցիոն պայքարը Հայաստանում. ընդհանուր իրավիճակի նկարագիր / Թրանսփարենսի Բնթերնեշլ, հեղինակներ՝ Ուիլբերգ Ս., Նոկտանյան Վ., 2013, <http://goo.gl/wtrLNz>, էջեր 8-9:

⁸ Կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա / Թադևոսյան Ա., Երևան, 2009, <http://goo.gl/h4iP1B>, էջեր 12-13:

⁹ Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին / Սալանյան Լ., Գյումջիբաշյան Գ., Գրիգորյան Ա., Խաչատրյան Ս., Հասսայան Ա., Երևան, 2010, <http://goo.gl/ZRQszz>, էջեր 12-13:

ռիսկային է գնահատել յուրաքանչյուր 3-րդ հարցվածը: Բուհերում պետական քննությունների կոռուպցիոն ռիսկայնության գնահատականը պակաս նշանակալից է. այդ փուլն առավել ռիսկային են գնահատել հարցվածների շուրջ 12%-ը¹⁰:

Բերված մեկնաբանությունները համահունչ են Բ. Հարությունյանի կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքներին. հարցվածների միայն 5.7%-ն է պետական ավարտական քննությունները, ինչպես նաև՝ մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի քննությունները կոռուպցիոն ռիսկերով ծանրաբեռնված համարել: Ըստ հեղինակային մեկնաբանության, նման ընկալման հիմքում ընկած է հասարակական այն պատկերացումը, որ 5 տարի թեկուզ ձևական առումով սովորած ուսանողը միայն այդ փաստի ուժով արժանի է ավարտական վկայականի¹¹:

ԵԱՀԿ հետազոտության շրջանակներում հարցված յուրաքանչյուր 3-րդ ուսանողը, գնահատելով կոռուպցիան որպես համակարգային երևույթ, համոզված է, որ դրա բացահայտված դեպքերում ներառվածները չեն պատժվի: Դժվար է որպես հուսադրող գնահատել այն հանգամանքը, որ հարցվածների առավել մեծ խմբաքանակը՝ ավելի քան 40%-ը, համոզված չլինելով պատժի անխուսափելիության հարցում, ընդամենը հնարավոր է համարում «ինչ-որ միջոցների» ձեռնարկումը: Հարցվածների գրեթե 2/3-ի գնահատմամբ, պետական մարմինները կոռուպցիայի դեմ կամ չեն պայքարում (մոտ 27%), կամ ընդամենը ձև են անում, թե պայքարում են (գրեթե 36%): Պայքարի դրսևորումներ տեսնում է հարցվածների միայն 27.6%-ը, ընդ որում՝ նրանցից միայն յուրաքանչյուր երրորդն է կարծում, որ այդ պայքարն արդյունավետ է¹²:

Բավական հետաքրքիր են «Այ Փի Էս Սի» կազմակերպության՝ 2011 և 2013 թվականներին իրականացրած սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Այսպես, 2013թ. հունիսին, հարցման անցկացման պահից վերջին մեկ տարվա ընթացքում կառավարության գործունեությունը կրթության և գիտության ոլորտում բացասական են գնահատել հարցվածների 40.5%-ը:

2013թ. մարտ և հունիս ամիսներին հարցվածների համապատասխանաբար 4.3% և 4.4%-ն է որպես ձեռքբերում նշել կաշառակերության նվազումը կրթության և գիտության ոլորտում: Եթե հաշվի առնենք փաստը, որ 2011թ. հետազոտության արդյունքներով կաշառակերության վերացման մասին նշել է հարցվածների 7.6%-ը, ապա այստեղ որոշակի հետընթաց է նկատելի:

2013թ. մարտ և հունիս ամիսներին հարցվածների համապատասխանաբար 8.5%-ը և 9.3%-ը որպես բացթողում նշել են կաշառակերության և դրամահավաքի առկայության մասին: 2011թ. հունիսին և սեպտեմբերին հարցվածների համապատասխանաբար 12%-ը և 6.8%-ը նշել են նույն խնդրի մասին: Փաստորեն, այս հարցում նույնպես դրական դինամիկա չի նկատվում:

2013թ. հունիսին հարցվածների 8.8%-ը նշել է դպրոցներում, իսկ 2.6%-ը՝ բուհերում հավելյալ/լրացուցիչ վճար կատարելու մասին:

Դպրոցների հետ առնչված անձանց 19.1%-ը 2013թ. (իսկ 2011թ.՝ հարցվածների 14.5%-ը) նշել է, որ կոռուպցիայի մակարդակն աճել է, իսկ 39.9%-ը (2011թ.՝ հարցվածների 37.7%-ը) հակառակը՝ խոսել է նվազման մասին:

Բուհերի հետ առնչված անձանց դեպքում այս ցուցանիշները գրեթե հավասար են. 2013թ. հարցվածների 28.1%-ը նշել է նվազման, իսկ 26.1%-ը՝ աճի մասին: 2011թ. հետազոտության արդյունքները էականորեն չեն տարբերվում. 29.9%-ը նշել է կոռուպցիայի մակարդակի նվազման, իսկ 23.9%-ը՝ աճի մասին:

2013թ. հունիսին հարցվածների 17.8%-ը համարել է, որ կրթության և գիտության ոլորտում առավել շատ անօրինականություններ են տեղի ունենում (համեմատած այլ ոլորտների հետ):

¹⁰ Նույն տեղում, էջ 15:

¹¹ Социологический анализ проявлений коррупции в современном армянском обществе. Диссертация / Арутюнян Б., Ереван, 2007, էջ 92:

¹² Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին / Սալանյան Լ., Գյումրիբաշյան Կ., Գրիգորյան Ա., Խաչատրյան Ս., Հասսայան Ա., Երևան, 2010, <http://goo.gl/ZRQszz>, էջ 17:

2011թ. հունիսին նույն կարծիքն է ունեցել հարցվածների 16.9%-ը: Կրթության և գիտության ոլորտն այս ցուցանիշով հայտնվել է առավել «անօրեն» ոլորտների եռյակում թե՛ 2011թ., թե՛ 2013թ.:

2013թ. հարցման արդյունքներով, դպրոցներում և բուհերում անարդարության հիմնական դրսևորումներն են, ըստ առաջնահերթության.

1. Կաշառակերությունը,
2. Դրամահավաքը,
3. Խտրական վերաբերմունքը,
4. Ծանոթ/բարեկամների ինստիտուտը

2011թ. նույնպես հարցվածները խնդիրների շարքում առաջինը նշել են կաշառակերության մասին¹³:

ՀՀ կրթական համակարգում կոռուպցիայի իմաստավորման մեկ այլ դիտանկյուն է առաջարկվում ՀՀ-ում ակադեմիական անազնվության երևույթի ուսումնասիրությանը նվիրված հետազոտության մեջ: Այստեղ կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից հատկանշական է ոչ ֆորմալ համաձայնությունների խնդիրը: Այդ հետազոտության շրջանակներում «Համաձայնություններ» գործոնի ներքո դիտարկվել են ակադեմիական անազնվության 3 տեսակներ՝

- Գնահատական ստանալու շուրջ համաձայնություն ուսանողի և դասախոսի միջև (հարցվածների մոտ 42%-ի կողմից գնահատվել է որպես հազվադեպ առկա, իսկ մոտ 17%-ի կողմից՝ որպես հաճախ առկա երևույթ),
- Գնահատական ստանալու նպատակով դասախոսին միջնորդում (օրինակ՝ դասախոսի, կոլեգայի միջոցով) (հարցվածների մոտ 38%-ի կողմից գնահատվել է որպես հազվադեպ առկա, իսկ մոտ 20%-ի կողմից՝ որպես հաճախ առկա երևույթ),
- Գնահատականը ստանալու նպատակով ղեկավարի միջնորդություն (հարցվածների մոտ 34%-ի կողմից գնահատվել է որպես հազվադեպ առկա, իսկ մոտ 23%-ի կողմից՝ որպես հաճախ առկա երևույթ):

Մրանք բուհական համակարգում հազվադեպ, սակայն օրինաչափ կերպով դրսևորվող երևույթներ են, որոնք նվազեցնում են ակադեմիական միջավայրի արդյունավետությունը¹⁴:

Ակադեմիական անազնվության՝ իրենց համար ամենամտահոգիչ տեսակների շարքում ուսանողների 42.3%-ը (ամենաբարձր ցուցանիշն է) նշել է «համաձայնություններ» գործոնի ներքո խմբավորված երևույթները: Հատկանշական է, որ հարցվածների 52.3%-ը այս խնդիրը առաջինն է մատնանշել մյուսների շարքում: Այսինքն՝ յուրաքանչյուր 2-րդ հարցվածը «համաձայնություններ»-ը, անազնվության մյուս տեսակների հետ համեմատած, դիտարկում է որպես առաջնահերթ հիմնախնդիր¹⁵:

Նշված հետազոտության շրջանակներում ակադեմիական անազնվության տեսակներից մեկը՝ սուբյեկտիվությունը, բացատրվել է 6 հիմնական պատճառների ազդեցությամբ: Հատկանշական է, որ բարձր ցուցանիշներ են արձանագրել այն պատճառները, որոնք կոռուպցիոն ենթատեքստ ունեն: Օրինակ, «Դասախոսը սուբյեկտիվ է վերաբերում ուսանողին իր իսկ ղեկավարության պահանջով» պատճառը հաճախ հանդիպող է համարում հարցվածների մոտ 31%-ը: «Դասախոսը սուբյեկտիվ է վերաբերում ուսանողին իր բարեկամների, ընկերների, կոլեգաների խնդրանքով» պատճառը հաճախ հանդիպող է համարում հարցվածների մոտ 30%-ը: Մյուս պատճառները,

¹³ ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները. սոցիոլոգիական հետազոտություն GS Index-2/13 / «Այ Փի Էս Մի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, հուլիս 2013, <http://goo.gl/iwcEqH>, նաև՝ ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները. սոցիոլոգիական հետազոտություն GS Index-3/11 / «Այ Փի Էս Մի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, հոկտեմբեր 2011, <http://goo.gl/3fDXQN>

¹⁴ Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում / Անտոնյան Բ., 2013, <http://goo.gl/7ZCh0d>, էջեր 25-26:

¹⁵ Նույն տեղում, էջ 30:

որոնք առավելապես անձնական բնույթի են՝ համակրանք/հակակրանք, միննույն ծննդավար/բնակավայր՝ հարցվածների շրջանում ավելի ցածր ցուցանիշներ են արձանագրել¹⁶:

Հետազոտական տվյալների մեջբերումները կարելի է շարունակել: Սակայն վերը նշվածն էլ բավարար է՝ համոզվելու համար, որ կոռուպցիան ՀՀ կրթական համակարգում բավական ակտուալ խնդիր է: Ընդ որում, կոռուպցիան առաջնահերթ խնդիր է՝ կրթության այլ հիմնախնդիրների շարքում: Կրթության ոլորտն էլ, տարբեր տարիների հետազոտություններում, պարբերաբար հայտնվում է առավել կոռուպացված ոլորտների շարքում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ կոռուպցիայի մակարդակի ընկալման առումով էական դրական առաջընթաց չի նկատվում: Այս փաստը կասկածի տակ է դնում վերջին տարիներին կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետությունը:

Ցավոք, թե՛ Հայեցակարգում, թե՛ Ռազմավարության մեջ բացակայում են կրթության ոլորտում կոռուպցիայի քանակական ցուցանիշները¹⁷: Տրված չէ այս ոլորտում կոռուպցիոն հիմնախնդիրների ակտուալության ու տարածվածության պատկերը (ըստ հասարակական կարծիքի):

Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ կրթական համակարգում

Ինչպես նշվեց ներածության մեջ, այս ուսումնասիրությունն անդրադառնում է հակակոռուպցիոն նոր Ռազմավարության ու Միջոցառումների ծրագրի՝ կրթության ոլորտին վերաբերող բաղադրիչին: Նախ, հարկավոր է չգերազանահատել հակակոռուպցիոն ծրագրերի նշանակությունը հակակոռուպցիոն պայքարի ընդհանուր համակարգում: Դրանք, անկասկած, կարևոր են՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի իրավական շրջանակի տարրեր: Ի թիվս վավերացված միջազգային կոնվենցիաների ու պետության ստանձնած այլ պարտավորությունների, այդ ծրագրերը կոնկրետ ազգային կանոնակարգեր են ձևավորում: Հակակոռուպցիոն միջոցառումներն առավել հստակեցնում են հասարակության առջև պետության պարտավորությունների շրջանակը: Սա անհրաժեշտ հիմք է՝ պետական ինստիտուտների հանրային հաշվետվողականության համար:

Մյուս կողմից, սակայն, առանց համարժեք ինստիտուցիոնալ շրջանակի (կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների առկայություն, դրանց անկախություն և մասնագիտացվածություն, արդյունավետ համագործակցություն, և այլն) լավագույն ծրագրերն էլ կմնան թղթի վրա: Ի վերջո, հատկապես հայաստանյան իրավիճակի համար, չափազանց մեծ նշանակություն ունի «քաղաքական կամք»-ի գործոնը: Այս գործոնը, թեև բավական քննարկվող ու մատնանշվող է, առավելապես ինտուիտիվ ընկալում ունի: Այն արտացոլում է, թերևս, հանրության սպասումը՝ իշխանության բարի կամքի դրսևորման նկատմամբ: Միայն «վերնների» ցանկության ու պատրաստակամության դեպքում է հնարավոր համարվում ցանկացած բարեփոխում: Նշված ինստիտուցիոնալ ու իրավական մեխանիզմներն աշխատեցնելու գլխավոր խթանը քաղաքական կամքն է համարվում:

Վերջապես, կարևոր է կոռուպցիայի մշակութային ասպեկտն ու հասարակության մասնակցությունը այդ պայքարին: Հասարակություններում, որտեղ կոռուպցիան խորապես արմատացած մշակութային դրսևորումներ ունի, ընկալվում է որպես նորմալ կամ օրինաչափ երևույթ, որտեղ հասարակությունն օտարված է զգում (զերծ պատասխանատվությունից) դրա դեմ պայքարից, անհնար է նշանակալի ձեռքբերումներ ակնկալել:

¹⁶ Նույն տեղում, էջ 36:

¹⁷ Քանի որ կոռուպցիան սովորաբար բնույթ է կրում, բնականաբար, նկատի ունենք կոռուպցիայի մակարդակի և բովանդակության **ընկալման** քանակական ցուցանիշները: Կոռուպցիայի գրեթե բոլոր չափումները մարդկանց ընկալման հետ գործ ունեն: Միայն կոռուպցիոն հանցագործությունների դեպքում է առկա պաշտոնական վիճակագրություն, որը, սակայն, կոռուպցիա երևույթի փոքր մասն է արտացոլում:

Այսպիսով, կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր պատկերում հակակոռուպցիոն ծրագրերը բավական համեստ գործառնական նշանակություն ունեն: Դրանց գործողությունն անհնարաբար է վերը նշված և բազմաթիվ այլ գործոններից:

Կատարված վերապահումներն անհրաժեշտ են՝ այս վերլուծության նկատմամբ համարժեք ակնկալիք ձևավորելու տեսանկյունից: Այս վերլուծության եզրահանգումներն ու առաջարկները վերաբերելու են կրթական կոռուպցիայի դեմ պայքարի միայն ծրագրային բաղադրիչին: Ուստի դրանց օգտակարությունը՝ հակակոռուպցիոն պայքարի լայն համատեքստում, օրինաչափորեն «համեստ» կարող է լինել:

Հակակոռուպցիոն պայքարը Հայաստանի Հանրապետությունում ֆորմալ առումով սկիզբ է առնում 2003թ.-ից, երբ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեցին ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007թթ. ծրագիրը: Այդ ռազմավարության նպատակն էր կոռուպցիայի հաղթահարումը, այն ծնող և տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացումը: 2009թ. հոկտեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց հակակոռուպցիոն հաջորդ ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը: Այս ծրագրի նպատակ էր սահմանվել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը, իսկ ակնկալվող արդյունքներն էին՝ կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի տարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, և այլն:

Նշված ծրագրերում կրթությունը, ի թիվս այլ ոլորտների, ներառված էր հակակոռուպցիոն միջոցառումների հիմնական թիրախների շարքում: Նոր Հայեցակարգն ու Ռազմավարությունը ընդամենը սահմանափակել են ոլորտների թիվը 4-ով, որոնցից մեկն էլ կրթությունն է: Կիրառված նոր մոտեցումը թույլ է տալիս ուշադրությունը բնեռել սահմանափակ թվով ոլորտների վրա, ենթադրաբար, ռեսուրսների առավելագույն կենտրոնացում և ջանքերի ֆոկուսացում ապահովելու համար:

Հակակոռուպցիոն քաղաքականության հաջորդ մակարդակը ԿԳՆ կողմից մշակվող հակակոռուպցիոն ծրագրերն են: Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի՝ նախարարության կողմից հաստատված ծրագրեր են գործել 2011-2012թթ. և 2013-2014թթ. ժամանակահատվածների համար: Դրանց արդյունքների վերաբերյալ կանոնավոր կերպով հաշվետվություն-տեղեկանքներ են հրապարակվում ԿԳՆ կայքում: Այս առումով, ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման ընթացքը շատ ավելի թափանցիկ է, քան մինչ այս պահը Կառավարության հաստատած հակակոռուպցիոն ռազմավարությունների ու միջոցառումների ծրագրերի իրագործումը: Փաստացի, բացակայում է այդ ընդհանրական, «խոշոր» ծրագրերի արդյունքներին ծանոթանալու մեխանիզմը:

Վերջին տարիներին տարածված պրակտիկա է դարձել նաև ներքուհական հակակոռուպցիոն ծրագրերի ընդունումը և իրագործումը: Ուսումնասիրություններից մեկում նշված է այն մասին, որ թեև բոլոր պետական բուհերը, գոնե ձևականորեն, մշակել և ընդունել են հակակոռուպցիոն ռազմավարություններ, նրանցից ոմանք մյուսներից առավել ջանքեր են գործադրում կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Հարցված 10 պետական բուհերից կեսը ստանդարտացված պատժամիջոցներ են կիրառում քննությունների կեղծման համար և յոթը՝ դասախոսների անբարո վարքագծի համար (քննությունների վաճառք, ընտանեկարություն) և ընդունելության չափանիշների անհամապատասխանության համար: Օրինակ, Ֆրանսիական համալսարանից հեռացվել է դասախոսների մեծ խումբ՝ անբարո վարքագծի և ընդունելության քննությունների անցկացման պահանջներին չհետևելու համար¹⁸:

¹⁸ Կառավարման խնդիրների լուծումը՝ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների կենտրոնում / Համաշխարհային բանկի կրթական թիմ, 2013, <http://goo.gl/47OQwL>, էջեր 53-54:

Այնուամենայնիվ, այս հետազոտության մասնակիցների համար տեսանելի չեն կրթական համակարգում հակակոռուպցիոն պայքարի հիմնական մեխանիզմներն ու ձեռքբերումները: Առանձին, աղմկահարույց դեպքերը հիմնականում կաշառակերության բացահայտման հետ են կապված: Սակայն դրանք այդպես էլ չեն ներգծվում հակակոռուպցիոն պայքարի ամբողջական պատկերի մեջ. «Մի հոգու բռնելով կոռուպցիայի դեմ չես պայքարի: Դա շոու է: Բռնողը ինքն էլ հակված է կոռուպցիոն վարքի: Կաշառք է վերցնում, որ խիստ չղատի»:

Պարզ չէ, թե առանձին դասախոսների պատիժն ինչ փոփոխություններ է խթանում ինստիտուցիոնալ մակարդակում: Արդյո՞ք նույն վարքի, կոռուպցիոն նույն գործողության կանխարգելման մեխանիզմներ են մշակվում թե՞ ակնկալվում է միայն վախի գործոնի ազդեցությունը. «մեկին պատժենք, մյուսները կվախենան»:

Այն մասին, որ կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազումը մշակույթի փոփոխության հետևանք է, կասկած են հայտնում նաև ոլորտի պատասխանատուները: ԿԳ նախարարն այս կապակցությամբ նշել է. «... ես վստահ չեմ, որ եթե մենք դադարեցնենք մեր վարչական ճնշումները, կոռուպցիոն ռիսկերը նորից գլուխ չեն բարձրացնի ... արդյոք կոռուպցիայի նվազումը հետևանք է ռեպրեսիվ ճնշողական քաղաքականության, թե՞ մշակույթի մի մաս է: Ես կասկածում եմ, որ մենք կարողացել ենք կոռուպցիոն ռիսկերի նվազմանը հասնել բացարձակապես մշակույթ փոխելով: ... նախ և առաջ, վախի հետևանք է, ոչ թե մտածելակերպի փոփոխության: Ցավոք, մենք դեռ չենք հասել մտածելակերպի կայուն փոփոխությունների»¹⁹:

Բուհերը ներկայացնող հարցման մասնակիցները նշել են այն մասին, որ «... բուհի ղեկավարության մտածողությունն է կոռուպցիոն: Կարող են խոսել կոռուպցիայի դեմ պայքարի մասին, բայց հաջորդ պահին միջնորդել ինչ-որ մեկի համար»:

Ակնհայտ է, որ կոռուպցիայի դեմ հաջող պայքարը ենթադրում է բարձր օղակի պաշտոնատար անձանց վարքային մոդելների փոփոխություն: Տարատեսակ ծրագրերից ու միջոցառումներից թերևս ավելի ազդեցիկ է վարչական լծակներ ունեցողների անձնական օրինակը: Ցավոք, այս անձանց մեծամասնությունը, ըստ հարցվածների, շարունակում է գործել կոռուպցիոն մշակույթի նորմերին համապատասխան:

Դպրոցների մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչները ևս հստակ պատկերացում չունեն կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերի ու մեխանիզմների մասին: Կրթության այս օղակում նույնպես հակակոռուպցիոն պայքարը նույնականացվում է իր ռեպրեսիվ դրսևորումներով: Դրանք են՝ կրթության պետական տեսչության ստուգումները, ինչպես նաև՝ նախարարի հանձնարարականները, որոնք հիմնականում վերաբերում են դպրոցներում իրականացվող դրամահավաքին:

Հետազոտության մասնակիցների մեծ մասն ընդհանրապես տեղյակ չէր թե՛ ԿԳՆ, թե՛ առանձին բուհերի հակակոռուպցիոն ծրագրերի գոյության մասին:

Հակակոռուպցիոն պայքարի առնչությամբ հատկանշական է հետևյալ կարծիքը, որը բավական տարածում ունի. «Հակակոռուպցիոն ծրագրերից ոչ մեկը սրա դեմը չի կարող առնել, որովհետև ինստիտուցիոնալ բնույթ ունի: Հակակոռուպցիոն ծրագրերը միայն այսբերգի վերին մասի դեմ են պայքարում: Մինչդեռ էությունը մնում է թաքնված: Հակակոռուպցիան մի հեքիաթ է, որի համար փող են տալիս: Դա պետք է՝ միջազգային տարբեր կառույցների ցույց տալու համար, որ մենք ունենք իրենց ակնկալված մարմիններն ու ծրագրերը»:

¹⁹ Ինչպե՞ս հասնել կոռուպցիայի կայուն նվազման. մեկնաբանում է Արմեն Աշոտյանը / Միրանուշ Հայրապետյան, Առավոտ, <http://goo.gl/7RTSdL>

2009-2012թթ. հակակոռուպցիոն ռազմավարությանն ու դրա իրագործմանը բնորոշ հիմնախնդիրները

Նախքան նոր 2015-2018թթ. հակակոռուպցիոն ծրագրի նախագծին անդրադառնալը, ցանկալի է հետադարձ հայացքով գնահատել նախորդ հակակոռուպցիոն ծրագրի որակն ու դրա իրականացմանը բնորոշ խնդիրները:

1. 2009-2012թթ. հակակոռուպցիոն ծրագրի մի շարք միջոցառումներով կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար նախատեսված են եղել հիմնականում օրենսդրական փոփոխություններ և/կամ վերապատրաստումներ ենթադրող միջոցառումներ: Սակայն ակնհայտ է, որ նմանատիպ միջոցառումները բավարար չեն կոռուպցիայի մակարդակի վրա էական ազդեցություն ունենալու համար:
2. Միջոցառումների ոչ լիարժեք պլանավորման հիմնական պատճառներից էր կոռուպցիոն հիմնախնդիրների պատճառների թերի բացահայտումը: Գրեթե բոլոր ոլորտներում կոռուպցիայի դրսևորումների և պատճառների վերաբերյալ վերլուծությունը խիստ մակերեսային էր և համառոտ: Կոռուպցիայի բազմաթիվ պատճառներ ի հայտ են եկել ծրագրի իրականացման ընթացքում և նույնիսկ միջոցառումների իրականացումից հետո, ուստի դրանց նկատմամբ նախապես պլանավորված արձագանք չի եղել:
3. 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում տեղ են գտել գործողություններ, որոնք ի սկզբանե հակասում էին իրավական դաշտի պահանջներին՝ տարբեր օրենքների, կանոնակարգերի և այլ իրավական փաստաթղթերի:
4. Միայն են նշված եղել տարբեր արդյունքների կատարման պատասխանատուները: Օրինակ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը պատասխանատու է համարվել այնպիսի արդյունքների իրականացման համար, որի համար անհրաժեշտ լիազորություններ չունի:
5. Միջոցառումների ծրագրով սահմանված արդյունքների կատարումը կախման մեջ էր դրված տարաբնույթ օրենսդրական փոփոխություններից և այլ ծրագրերի իրագործման ընթացքից: Օրինակ, ՀՀ ԿԳՆ պատասխանատվության ներքո գտնվող մի շարք արդյունքներ հնարավոր չի եղել ապահովել օրենսդրական դաշտի անկատարության պատճառով, քանի որ դրա համար անհրաժեշտ էր ՀՀ առնվազն 3 օրենքներում համապատասխան փոփոխությունների իրականացում: Մեկ այլ օրինակում՝ ՀՀ ԿԳՆ կողմից իրականացման ենթակա գործողությունը մասնակի է կատարվել, քանի որ կախված է եղել կրթության կառավարման ամբողջական տեղեկատվական համակարգի ձևավորումից:
6. Միջոցառումների ծրագրի տարբեր արդյունքների ապահովման համար բացակայում էին անհրաժեշտ ֆինանսական միջոցները: ՀՀ ԿԳՆ չի ապահովել մի քանի պլանավորված արդյունքներ՝ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով: Արդյունքի հետագա իրականացման համար նախարարությունն անհրաժեշտ է համարել դոնոր կազմակերպությունների ներգրավումը: Պետք է նշել, որ ֆինանսական և այլ միջոցների բացակայության պարագայում չափազանց հավակնոտ խնդիրներ են ներառված եղել:
7. Կայացած չէր (և ներկայումս էլ դեռ կայացած չէ) հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի համակարգը: Բացի նախապես սահմանված ակնկալվող արդյունքներից և ցուցիչներից, չկային մոնիթորինգի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդներ և սանդղակներ: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային հեղինակավոր ինդեքսները, թեև նկարագրված են, սակայն այդպես էլ կիրառություն չեն գտել արդյունքների գնահատման համար:
8. Բացի այդ, հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքները գնահատվել են հենց իրենց՝ միջոցառումների պատասխանատու մարմինների կողմից: Բնականաբար, առկա է շահերի բախման խնդիր. պատասխանատու մարմինը հակված է արդյունքների ուժեղացմանը, դրանց նշանակության գերագնահատմանը: Քիչ հավանական է, որ պատասխանատու մարմինը ձախողման պատճառների չեզոք և արժանահավատ գնահատում իրականացնի:

9. Որոշ արդյունքների կատարումը հետաձգվել կամ բովանդակային փոփոխություններ է կրել՝ պայմանավորված պետական այլ ռազմավարությունների/ծրագրերի մշակմամբ: Մշակված այլ՝ ոլորտային ծրագրերում կոռուպցիոն խնդիրների հաղթահարման առավել ամբողջական և արդյունավետ եղանակներ են առաջարկված եղել, ինչի պատճառով հակակոռուպցիոն միջոցառումների մի մասը դարձել է ոչ ակտուալ, չպահանջված:

Կրթական կոռուպցիայի համակարգային բնույթն ու գործառական նշանակությունը

Թեև կոռուպցիայի մասին ընդունված է խոսել բացասական բնորոշումներով, սակայն թե՛ տեսական աշխատությունները, թե՛ հարցման մասնակիցների կարծիքները թույլ են տալիս պնդել դրա գործառական նշանակության մասին. «Որտեղ համակարգը չի աշխատում կամ թերի է աշխատում, այդտեղ կոռուպցիան պահանջված է՝ որպես խնդիրների լուծման մոտեցում»:

Երբ պնդում ենք, որ կոռուպցիան Հայաստանում ընդհանրապես կամ որևէ առանձին ոլորտում ունի համակարգային բնույթ, նկատի ունենք նաև այս հատկությունը. կոռուպցիան այդ համակարգի գործառության տրամաբանությունն է, էությունը: Համակարգն աշխատում և իր խնդիրները լուծում է կոռուպցիայի միջոցով: Կոռուպցիոն վարքը հանդես է գալիս որպես խնդիրների լուծման առավել օպտիմալ, փորձված, արդյունավետ միջոց:

Հետազոտություններից մեկում բավական հետաքրքիր պատկեր է ուրվագծվում. հարցվածների 61.3%-ը գտնում է, որ կոռուպցիոն գործողության դիմելու հիմնական պատճառն այն է, որ խնդիրը լուծելու այլ տարբերակ չկա, 46.5 %-ի կարծիքով այն նպաստում է գործերն արագացնելուն, 20.1%-ն էլ այն համարում է պատժից և տուգանքներից խուսափելու միջոց, իսկ 19.3 %-ի կարծիքով էլ կոռուպցիայի դիմելու միջոցով կարելի է խուսափել ավելի բարձր պաշտոնական վճարումներից: Ուշագրավ պատասխաններից են նաև պատշաճ ծառայություն ստանալու (13.8%) և արտոնյալ վերաբերմունքի արժանանալու (13.5 %) մասին պատասխանները: Հարցվածների շուրջ 51%-ը հակված է այս կամ այն ձևով կոռուպցիոն վարքագիծ ցուցաբերելու²⁰:

Ցավոք, թե՛ Հայեցակարգի, թե՛ Ռազմավարության մեջ ամրագրված չէ այն հիմնախնդիրը, որ կոռուպցիան ՀՀ կրթության ոլորտում համակարգային բնույթ է կրում: Մա նշանակում է, որ.

- Կոռուպցիան կրթության համակարգի նկատմամբ ոչ թե դիպվածային կամ իրավիճակային, այլ՝ համակարգի թերի գործառությամբ (կամ՝ դիսֆունկցիաներով) և ինստիտուցիոնալ կոռուպցիոն մշակույթով պայմանավորված բնույթ ունի,
- Կոռուպցիոն դրսևորումները՝ փոխկապակցված և մեկը մյուսին պայմանավորող, առկա են կրթական համակարգի բոլոր օղակներում,
- Կոռուպցիան կրթության համակարգում պայմանավորված է հասարակական այլ համակարգերում (քաղաքական, տնտեսական, այլ) առկա կոռուպցիոն երևույթներով:

Կրթական կոռուպցիայի համակարգային բնույթի մասին է խոսվում այլ հետազոտություններում ևս. «կոռուպցիան համատարած և բազմաթիվ դրսևորումներ ունեցող երևույթ է՝ զգալիորեն տարածված և մեծապես ընդունելի բարձրագույն կրթության ոլորտում աշխատանքի բոլոր ասպարեզներում»²¹, «Կոռուպցիան բարձրագույն կրթության համակարգում ունի համակարգային և տոտալ բնույթ: Դեկանները տեղյակ են, սակայն ոչինչ անել չեն կարող, քանի որ կմնան առանց դասախոսների: Երևույթի՝ համակարգային լինելու մասին են վկայում ոչ միայն ինստիտուտի ներսում գործող ուղղահայաց ու հորիզոնական կապերը՝ դասախոս-դասախոս, դեկան-դասախոս, դասախոս-լաբորանտ և այլն, այլև՝ այլ կրթական ինստիտուտների հետ ունեցած կապերը՝ կրկնուսույց-բուհ, դպրոց-բուհ: Որքան համակարգային է կոռուպցիան, այնքան այն կայուն է, կենսունակ և հակված է տարածման: Եվ հակառակը, երևույթի

²⁰ Կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա / Թադևոսյան Ա., Երևան, 2009, <http://goo.gl/h4iP1B>, էջեր 13-16:

²¹ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջ 29:

տարածվածությունը՝ ձևավորելով որոշակի ճգնաժամային զանգված՝ համակարգաստեղծ գործոն է հանդիսանում: Բուհում կոռուպցիայի համակարգայնության հատկանիշներն են՝ ուղղահայաց և հորիզոնական կապերը, կանոնավորությունը, ազենտների ու կլիենտների փոխկախվածությունը, ինստիտուցիոնալ մշակույթի առկայությունը»²²:

Մակայն պատճառը միայն ինստիտուցիոնալ բնույթ ստացած կոռուպցիոն մշակույթը չէ կամ կոռուպցիոն վարքաձևերի իներցիան: Կոռուպցիոն վարքը հաճախ հարմար է և շահավետ՝ համեմատած խնդիրների լուծման օրինական եղանակների: Ընդ որում, կոռուպցիան ռացիոնալ է ոչ միայն առանձին անհատների, այլ՝ երբեմն նաև համակարգի շահերի տեսանկյունից: Ոչ միայն անհատն է կոռուպցիոն եղանակով ռացիոնալ լուծում տալիս իր խնդիրներին, այլև՝ համակարգը:

Հետևաբար, կոռուպցիայի դեմ պայքարը, որքան էլ տարօրինակ հնչի, կարող է նպաստել կոռուպցիոն վարքի տարածմանն ու կոռուպցիոն վարքի նոր մոդելների ձևավորմանը: Հակակոռուպցիոն պայքարը դիսֆունկցիոնալ է այն առումով, որ համակարգին գրկում է հարցերը լուծելու փորձված եղանակից՝ փոխարենը ոչինչ չտալով: Բնականաբար, առաջացած բացը կարող է լրացվել ոչ օրինական վարքաձևերի ավելի ստվերային, ավելի վտանգավոր տեսակներով:

Հարցման մասնակիցները նման մի շարք օրինակներ են նշել. «Կոռուպցիոն հարաբերություններում ուսանողը գոնե սովորում է, քանի որ չսովորելու դեպքում ֆինանսական կորուստ է կրելու՝ պետք է կաշառք տա: Կամ՝ պետք է ջանք գործադրի, ծանոթ գտնի, որ միջնորդեն: Իսկ վերջին տարիներին, քանի որ կարող է հեշտությամբ սովորել ու ավարտել, արդեն այդ գույքն մեխանիզմն էլ չի գործում: Կաշառքը գնալով նվազել է, գրեթե չկա: Ուսանողը գիտի, որ առանց կաշառք տալու էլ կավարտի: Հետևաբար, չի սովորում: Այդ պատճառով, հիմա ցածր կրթական մակարդակ ունեցող շրջանավարտների թիվը նախորդ տարիների համեմատ աճել է»:

Մեկ այլ օրինակ վերաբերում է կադրային քաղաքականության կոռուպցիոն ռիսկերին. «Պայքարելով դրա դեմ՝ ավելի վտանգավոր ու թաքնված ես դարձնում: Օրինակ՝ դպրոցի տնօրենի ընտրությունը: Նախկինում կաշառք էր տալիս մարզպետին կամ նախարարին, որ նշանակվի տնօրեն: Հիմա՝ դպրոցի խորհուրդն է ընտրում: Բայց միայն ձևականորեն: Որովհետև էլի նույն կաշառքը տալիս է մարզպետին, նա էլ զանգում ու խորհրդին ստիպում է, որ ընտրեն հենց այդ մարդուն: Ֆորմալ առումով՝ մարզպետը կապ չունի, ասում է՝ խորհուրդն է ընտրել: Այսինքն, իր վրայից գցում է պատասխանատվությունը: Բայց ստվերային խնդիրը մնում ու ավելի է արմատավորվում, քանի որ բացահայտելն է դժվարանում: Նախկինում կարող էինք նշանակողից բան պահանջել, քննադատել: Իսկ հիմա՝ այդ պատասխանատվությունը տարրալուծվում է:

Նույնը՝ ուսուցիչների ընտրության դեպքում: Հիմա արդեն բաց մրցույթ է հայտարարվում, բայց միևնույն է, ստվերային պայմանավորվածության մեխանիզմը գործում է: Էլի՝ տնօրենին կաշառք են տալիս կամ միջնորդում են: Բայց արտաքուստ՝ ամեն ինչ օրինական է:

Կոռուպցիայի դեմ պայքարելով՝ երևույթը թաքցրեցինք, դարձրեցինք դժվար բացահայտելի»:

Հարցազրույցներից արված մեջբերումները հուշում են այնպիսի հետաքրքիր ֆենոմենի մասին, ինչպիսին կոռուպցիայի ճկունությունն է: Հենց կոռուպցիայի դեմ պայքարը կարող է նպաստել այդ ճկունության ավելացմանը: Հակակոռուպցիոն պայքարը կարող է հանգեցնել կոռուպցիայի նոր, առավել ստվերային, կատարելագործված ձևերի առաջացմանը. «Խստացնելու դեպքում կոռուպցիան կարող է ավելի աճել: Օրինակ՝ հիմա խստացրել են թեկնածու դառնալու հնարավորությունը: Բայց դա ավելի կխթանի կոռուպցիան: Եթե նախկինում դեկավարը փող էր վերցնում, որ 3 հոդված գրի, հիմա 6 հոդված գրելու համար ավելի շատ փող կվերցնի»:

Ուստի հակակոռուպցիոն ծրագրերը պետք է ռիսկերի առաջանցիկ վերլուծություններ կայացնեն: Ոչ միայն առկա, այլև՝ այդ պայքարի արդյունքում ձևավորվելիք նոր իրավիճակի վերաբերյալ: Դպրոցի տնօրենի ընտրության՝ վերը բերված օրինակում, կարծում ենք, դժվար չէր կանխատեսել, որ դեռևս չկայացած խորհուրդների պայմաններում մեծ է լինելու դրանց վրա ոչ

²² Социологический анализ проявлений коррупции в современном армянском обществе. Диссертация / Арутюнян Б., Ереван, 2007, էջեր 129-132:

Ֆորմալ ազդեցության հավանականությունը: Հաշվի առնելով խորհուրդների ձևավորման պրակտիկան և դրանց անկախության ցածր մակարդակը՝ կարելի էր կանխատեսել նոր կոռուպցիոն ռիսկերը:

Կոռուպցիայի գործառական նշանակության մասին հետաքրքիր վերլուծություն է իրականացված Բ. Հարությունյանի՝ կրթության համակարգում կոռուպցիայի սոցիոլոգիական ուսումնասիրության մեջ: Հեղինակը նշում է, որ եթե կոռուպցիոն վարքը դիտարկենք ոչ թե վերևից ներքև՝ դիտված մակրոմակարդակից, այլ՝ ներքևից, ապա կտեսնենք, որ այն (ինչպես և շեղվող վարքի այլ տեսակները) սոցիալական իրականությանը անհատի ադապտացիայի միջոցներից մեկն է: Խնդիրների լուծման կոռուպցիոն ռազմավարությունը ընտրած անհատի տեսանկյունից այն ավելի ընդունելի է, քան հասարակության կողմից նույն խնդրի լուծման համար առաջարկվող այլ օրինական միջոցները: Կոռուպցիան ադապտացիայի և՛ միջոց է, և՛ ձև: Դրան նպաստում է անուրիան՝ նպատակներին հասնելու օրինական միջոցների բացակայությունը/սակավությունը²³:

Հեղինակի գլխավոր եզրահանգումն այն է, որ կոռուպցիոն վարքի կենսունակությունը պայմանավորված է կոռուպցիոն ռազմավարությունների արդյունավետությամբ: Կոռուպցիոն ռազմավարությունները գործառական են (ֆունկցիոնալ են), ինչի շնորհիվ կոռուպցիոն հարաբերությունները տարածվում և ամրապնդվում են: Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար հնարավոր է միայն այն դեպքում, եթե հնարավոր լինի հասնել կոռուպցիոն ռազմավարությունների դիսֆունկցիոնալությանը: Այսինքն, կոռուպցիան կարող է հաղթահարվել ոչ թե արտաքին ազդեցությամբ և պատիժների միջոցով, այլ՝ այնպիսի պայմաններ ստեղծելով, երբ կոռուպցիան կսպառի իրեն՝ որպես նպատակներին հասնելու ոչ արդյունավետ եղանակ: Անձնական նպատակներին հասնելու լեգիտիմ միջոցների հասանելիությունը/մատչելիությունը, անհատի և հասարակության շահերի համադրումը՝ նվազեցնում է կոռուպցիոն ռազմավարությունների արդյունավետությունը: Կոռուպցիոն ռազմավարությունները պարզապես պահանջված չեն լինի՝ լեգիտիմ միջոցների առկայության և հնարավոր օգուտների հետ համեմատած՝ մեծ ծախսերի պատճառով²⁴:

Կոռուպցիոն մշակույթը ՀՀ կրթական համակարգում

Ինչպես այլ հետազոտությունները, այնպես էլ այս ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ կրթական համակարգում կոռուպցիային ինստիտուցիոնալ մշակույթի հատկանիշներ են բնորոշ:

Առկա է կոռուպցիայի ինստիտուցիոնալ կայացած մշակույթ՝ իր լեզվով, ծեսերով (կաշառք տալն ու վերցնելը նման է ծեսի՝ իր կանոնակարգով, վարքի ձևերով): Լեզուն՝ իր կողերով, օրինակ, կոռուպցիոն գործարքի մասնակիցների անվտանգությունն է ապահովում. կողքից լսողները հեշտությամբ չեն հասկանա, թե որն է գործարքի էությունը: Մշակույթի առկայությունը նպաստում է երևույթի տարածմանն ու ամրապնդմանը: Կոռուպցիոն մշակույթն անգամ իր սահմանափակումներն ու էթիկական կողեքսն ունի՝ ինչ կարելի է անել և ինչ չի կարելի անել: Օրինակ, անընդունելի է համարվում կաշառք պահանջելը՝ գնահատականի չարդարացված, անհիմն ցածրացման միջոցով: Էթիկական կողեքսն ասում է, որ չի կարելի միջամտել կոռուպցիոն գործարքներին, եթե դա քեզ չի վերաբերում. «Մի խառնվիր, եթե դա քեզ չի վերաբերում»: Կայացած մշակույթը տարածում ու գիտակցության մեջ ամրապնդում է կոռուպցիոն վարքի առավել արդյունավետ, փորձարկված ձևերը: Առաջ է գալիս կոռուպցիայի տարածման նոր մեխանիզմ՝ կոռուպցիոն գիտակցությունը դառնում է բոլորի սեփականությունը²⁵:

²³ Социологический анализ проявлений коррупции в современном армянском обществе. Диссертация / Арутюнян Б., Ереван, 2007, էջեր 25 և 44:

²⁴ Նույն տեղում, էջեր 159-162:

²⁵ Նույն տեղում, էջեր 133-136:

Մա նշանակում է, որ կարիք չկա որոնելու խնդիրների լուծման բարդ ուղիներ: Ինստիտուցիոնալ մշակույթն առաջարկում է վարքի պատրաստի մոդելներ, նորմեր, ավանդույթներ: Այդ մշակույթը նաև բարոյական արդարացում է ապահովում կոռուպցիոն գործարքի մեջ ներգրավված անձանց համար և հասարակության մեջ կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք է ձևավորում:

Օրինակ, դասախոսների կոռուպցիոն վարքը միշտ չէ դատապարտվում: Վատ սոցիալական պայմանները, աղքատությունը՝ դիտվում են որպես կոռուպցիայի ալիքի: Կոռուպցիան դիտարկվում է որպես սոցիալական արդարության վերականգնման միջոց, յուրահատուկ փոխհատուցման մեխանիզմ: Այն նաև բարոյական փոխհատուցման մեխանիզմ է՝ դասախոսի ցածր սոցիալական կարգավիճակն ու խաթարված հեղինակությունը հավասարակշռող: Որոշ դասախոսներ կոռուպցիան համարել են պատժի ձև՝ իր տեղը ցույց տալու լկտի, չսովորող, անկիրթ ուսանողին: Ուսանողին պատճառվող նյութական վնասը (կաշառքը) համարվում է պատիժ, վրեժխնդրության հնարավորություն²⁶:

Հետաքրքիր է, որ կոռուպցիոն մշակույթը խրախուսում է կոռուպցիոն վարքն անգամ այնպիսի իրավիճակներում, որտեղ այն դժվար է ռացիոնալ համարել: Այս առումով հատկանշական է հետազոտության մասնակիցներից մեկի պատմած դեպքը. «Մի մեծահարուստ ծանոթ ունեմ, ով ուզում էր իր երեխային կաշառքով բուհի անվճար համակարգ ընդունել: Այդ երեխան իր խելքով կարող էր հանգիստ ընդունվել՝ բավական բարձր միավորներով: Բայց նա պատրաստ էր ուսման տարիների վարձավճարից ավելի շատ գումար տալ միայն նրա համար, որ իր երեխան անվճար սովորի: Պարզվեց, որ դա անում է պրեստիժի համար: Երեխայի անվճար չսովորելը իր միջավայրում կարող էր ընկալվել որպես անձարակություն: Ամոթ է, որ իր պես հարուստ ու կարող անձի երեխան անվճար չսովորի: Դրա համար պատրաստ էր ավելի մեծ գումար ծախսել, քան ամբողջ 4 տարվա ուսման վարձը»:

Նմանատիպ օրինակներ ենք տեսնում այլ հետազոտություններում նույնպես. «Կաշառք տալը նաև ցուցադրական վարք է՝ ընդգծելու իր համարձակությունը, կարողությունը, ճարպկությունը: Հաճախ ուսանողները, որոնք կաշառք չեն տվել, բայց միջնորդ են հանդիսացել, պարծենում են դրանով: Միջնորդ լինելը բարձրացնում է նրանց սոցիալական կարգավիճակը դասընկերների աչքերում», «Կոռուպցիայի պատճառների շարքում շատ է նշվել ուսանողների ծուլության և չսովորելու՝ որպես նորմի տարածվածության մասին: Ուսանողները մրցում են, թե ով, չսովորելով, ավելի բարձր գնահատական կստանա: Ով է ավելի ծուլ, և այլն: Դա ազդում է նաև սովորող ուսանողների վրա»²⁷:

Այսպիսով, կոռուպցիոն մշակույթը խրախուսում ու ֆետիշացնում է «հարց լուծող» մարդու կերպարը: Նույնիսկ այն դեպքում, երբ հնարավոր է հարցը կարգավորել օրինական եղանակով, երբեմն նախապատվություն է տրվում կոռուպցիոն գործողությանը, քանի որ դա ճարպկության, ուժի, հեղինակության հավաստի վկայություն է: Կաշառք չվերցնող մարդը կոռուպցիոն միջավայրում կարող է համարվել հիմար և անկարող: Կոռուպցիոն մշակույթը լեգիտիմացնում է անօրինական պրակտիկաները և բարեխիղճ վարքն է, դրա համեմատ, դիտվում որպես շեղվող:

Ընդ որում, ամոթի գործոնը հայ հասարակության մեջ ընդհանրապես և կրթական համակարգում, մասնավորապես, աշխատում է «հակառակ» ուղղությամբ. «Առկա է ամոթի գործոնը: Բայց եթե այլ երկրներում դա կոռուպցիոն գործունեության մեջ ակամա ներքաշված լինելու վախն է, ամոթը, հեղինակության կորստի մտավախությունը, ապա մեզ մոտ – բռնվելու ամոթն է: Այսինքն՝ անձարակ լինելու ամոթը: Ամոթ է ոչ թե կոռուպցիոններ լինելը, այլ այն հանգամանքը, որ չես կարողացել խուսափել բռնվելուց: Բավարար ճարպիկ չես եղել, որ քեզ չբռնեն»:

²⁶ Социологический анализ проявлений коррупции в современном армянском обществе. Диссертация / Арутюнян Б., Ереван, 2007, էջեր 109-110:

²⁷ Նույն տեղում, էջեր 111 և 116:

Կոռուպցիոն հիմնախնդիրների այլընտրանքային վերլուծություն

Նոր հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի մեջ կրթության ոլորտին առնչվող կոռուպցիոն հիմնախնդիրների ցանկը խիստ սահմանափակ է, ոչ լիարժեք: Փաստաթղթերի (հետազոտություններ, մամուլի հրապարակումներ) վերլուծությունն ու կրթության ոլորտում ներգրավված անձանց հետ հարցազրույցները թույլ են տալիս վերհանել կոռուպցիոն երևույթների առավել լայն շրջանակ: Իհարկե, այս ցանկը ևս չի հավակնում լիարժեքության, սակայն կարող է լրացնել Ռազմավարության մեջ մատնանշված խնդիրները:

Ընդ որում, եթե նույնիսկ այս պահին իրատեսական չէ ներկայացված հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ համալիր միջոցառումների մշակումը, կարևոր է դրանց ներառումը Ռազմավարության մեջ՝ որպես հետագա գործունեության ուղենիշերի:

Հանրակրթության համակարգ

Դպրոցի կառավարման խորհրդի գործունեությունը: «Բարև» ՀԿ կողմից անցկացված հետազոտության մեջ ցույց է տրված, որ դպրոցների կառավարման խորհուրդները լիարժեք չեն կատարում ոչ միայն տնօրենի ընտրության գործառույթը, այլև ակտիվորեն ներգրավված չեն դպրոցի կառավարման գործընթացում²⁸: Մեկ այլ հետազոտություն՝ իրականացված «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից, նույնպես հաստատում ու լրացնում է այս պնդումը: Դպրոցի կառավարման մարմինները, համարյա առանց բացառության, հարցին մոտենում են միայն ֆորմալ տեսանկյունից և առանձնապես չեն խորանում դպրոցի խորհրդի և խորհրդակցական մարմինների գործունեության բովանդակային մասի մեջ: Դպրոցի խորհրդակցական մարմինների (բացառությամբ թերևս մանկավարժական խորհրդի և առարկայական մեթոդական միավորումների) գոյությունը և գործունեությունը հիմնականում ձևական բնույթ է կրում, որոշ բացառություններով²⁹:

Ըստ այս հետազոտության մասնակից փորձագետների, դպրոցի կառավարման խորհրդի ոչ լիարժեք գործառույթունը պայմանավորված է նախևառաջ դրա ձևավորման ընթացքում առկա կոռուպցիոն ռիսկերով: Խորհուրդները հաճախ ձևավորվում են անդամների՝ դպրոցի տնօրենին լոյալության հիմքի վրա: Դպրոցի ծնողական և մանկավարժական խորհուրդները խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրելիս մեծապես առաջնորդվում են դպրոցի տնօրենի կարծիքով կամ ուղղակի թելադրանքով: Քանի որ ցածր է հավանականությունը, որ խորհրդի անդամ հանդիսացող դպրոցի մանկավարժներն ու ծնողները հանդես կգան որպես տնօրենի ընդդիմախոսներ, կառավարման այս մարմինը ձևական նշանակություն է ստանում:

Այս խնդիրն արտացոլված է նաև մամուլի հրապարակումներում. «... կառավարման խորհուրդներում ավանդույթ է դարձել խորհրդի անդամների՝ մասնավորապես մանկավարժների և ծնողների լուռ վիճակը, մրցույթի ընթացքում թեկնածուին ոչ մի հարց չուղղելը», «Ծնողական խորհրդի կազմում ևս խորը նստվածք տված «ավանդույթներ» կան դպրոցներում. երբ այդ նույն դպրոցի մանկավարժը կարող է և ծնողական խորհրդի նախագահ լինել, մի քանի դասաժամ դպրոցի տնօրենը լավության կարգով կարող է տալ նրան», «Ստացվում է մի օղակ, որտեղ բոլոր գլխավորներն իրար բարեկամներ են, ծանոթներ, իսկ գլխավորի խոսքը, ինչպես և մյուս ոլորտներում, պիտի լինի ազդեցիկ, ու այստեղ երբեմն կարելու էլ չէ, թե մյուս ծնողներն ու աշակերտները որքանով են տիրապետում իրենց պարտականություններին կամ իրավունքներին. շահերի բախումն անխուսափելի է, դպրոցների կուսակցական տնօրեններն էլ այս պայմաններում

²⁸ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում կրթության բարեփոխումների համատեքստում / Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Բարև ՀԿ, 2013, <http://goo.gl/yCD4Eq>, էջ 9:

²⁹ Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում / Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, Երևան, Վան Արյան, 2014, <http://goo.gl/uZaDvI>, էջ 128:

սահմաններ են գծում ծնողի, աշակերտի ինքնուրույն արտահայտման, խոսքը առաջ տանելու համար»³⁰:

Բացի այդ, դպրոցների խորհուրդների նախագահները մեծամասամբ հանդիսանում են դրանց մանկավարժ անդամները, ինչը խորհրդին որոշակի կախման մեջ է դնում դպրոցի տնօրինությունից: Հաճախ դպրոցի խորհրդի անդամներ են առաջադրվում և հաստատվում կրթության բնագավառում ոչ մասնագետներ, մասնավորապես՝ ծնողներից, Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներից, որոնք խորությամբ չեն պատկերացնում դպրոցի կառավարման հարցերը, խորհրդի դերն ու նշանակությունը: Որպես հետևանք՝ դպրոցի տնօրենը հիմնականում կարողանում է անցկացնել խորհրդի այն որոշումները, որոնք իրեն են ցանկալի կամ ձեռնտու³¹:

Այսպիսով, գործում է կոռուպցիոն փակ շղթա. դպրոցի խորհրդի ձևավորումը կոռուպցիոն խնդիրներով է ուղեկցվում, իսկ նման եղանակով ձևավորած խորհուրդն էլ չի կարողանում պատշաճ հսկողություն իրականացնել տնօրենի գործունեության նկատմամբ:

Կադրային քաղաքականությունը դպրոցներում: Վերը նշված հետազոտությունը վկայում է նաև ուսուցիչների ընտրության գործընթացում կոռուպցիոն ռիսկերի առկայությունը:

Թեև ներկայումս ուսուցչի թափուր տեղի առկայության պարագայում մամուլում հայտարարություն է հրապարակվում (ինչը դրական տեղաշարժ է թափանցիկության առումով), սակայն ոչ միշտ են արժանավոր թեկնածուներն ընտրվում և նշանակվում ուսուցիչ: Թեև ուսուցիչների ընտրության իրավունքն ամբողջությամբ դպրոցի լիազորությունն է, այդուհանդերձ, մտահոգություններ են հայտնվել մարզային իշխանությունների կողմից այդ գործընթացին միջամտելու կամ տնօրենին կաշառք առաջարկելու առումներով³²:

Մեկ այլ հետազոտության շրջանակներում խոսվում է այն մասին, որ կոռուպցիոն ռիսկերին նպաստում է նաև ուսուցիչների աշխատանքի ընդունման թեստային համակարգը: Թեստերով աշխատանքի ընդունելու դեպքում ավելի հեշտ է քողարկել թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը, քան, օրինակ, կենդանի դաս վարելու հիման վրա: Ուսուցչի ընդունման ներկա համակարգը ստուգում է միայն թեկնածուի տեսական գիտելիքները և որևէ կերպ չի անդրադարձնում երեխաների հետ հարաբերություններ կառուցելու կարողությանը³³:

Ըստ հետազոտության մասնակիցների, դպրոցներում կադրային քաղաքականությանը բնորոշ են կլանայնության հատկանիշներ. «Դպրոցի տնօրենները, թոշակի անցնելիս, երբեմն պաշտոնը փոխանցում են իրենց երեխաներին: Կլանայնության հատկանիշներ կան այդ երևույթի մեջ: Կամ իրենց երեխաներին են որպես ուսուցիչ ընդունում աշխատանքի»:

Ուսուցիչների վերապատրաստման գործընթացը: Կոռուպցիոն ռիսկեր է պարունակում մի շարք կազմակերպությունների միջոցով ուսուցիչների համար վերապատրաստումներ անցկացնելը: Եթե նախկինում պետության նախաձեռնությամբ իրականացվող բոլոր վերապատրաստումներն անցկացվում էին Կրթության ազգային ինստիտուտի կողմից, ապա 2012թ.-ից գործընթացն ազատականացվեց. ոլորտում փորձ ունեցող կազմակերպությունները հնարավորություն ունեցան անցկացնելու վերապատրաստումներ: Ազատականացման դրական միտումը, սակայն, նոր կոռուպցիոն ռիսկեր առաջացրեց: Այն կազմակերպությունները, որոնք դպրոցների վրա ունեն ազդեցության լծակներ, կարողանում են ավելի շատ թվով ուսուցիչների

³⁰ Դպրոցների խորհուրդներում ամեն ինչ որոշված է / Անի Մկրտչյան, Սապարեզ, <http://goo.gl/PC7pLZ>

³¹ Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում / Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, Երևան, Վան Արյան, 2014, <http://goo.gl/uZaDvI>, էջ 133:

³² Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում կրթության բարեփոխումների համատեքստում / Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Բարև ՀԿ, 2013, <http://goo.gl/yCD4Eq>, էջ 22:

³³ Նույն տեղում, էջեր 22-23:

ընդգրկել իրենց վերապատրաստման ծրագրում և ավելի շատ ֆինանսավորում ստանալ: Դպրոցները ոչ միշտ են ազատ՝ վերապատրաստող կազմակերպություն ընտրելու հարցում³⁴:

Ուսուցիչներին տարակարգերի շնորհումն ու խրախուսումը: Կոռուպցիոն ռիսկեր են առկա ուսուցիչներին տարակարգերի շնորհման գործընթացում: Տարակարգերի դիմելու համար ուսուցիչը պետք է որոշակի պահանջներ բավարարի: Դրանց շարքում է, օրինակ, բարձր վարպետությունը, ինչը սահմանվում է տվյալ դպրոցի տնօրենի կողմից: Տնօրենի կողմից ուսուցչի վարպետությունը գնահատելը կախվածություն է առաջացնում տնօրենի բարեհաճությունից, ինչը կոռուպցիոն ռիսկ է³⁵:

Համանման խնդրի առկայության մասին է վկայում նաև «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ իրականացրած հետազոտությունը. «Որոշ խնդիրներ են նկատվել՝ կապված դպրոցների աշխատողների խրախուսման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության հետ: Խրախուսման ներկայացվող աշխատողների ցուցակի որոշումը հիմնականում կախված է դպրոցի տնօրենի սուբյեկտիվ կարծիքից և անձնական վերաբերմունքից այս կամ այն աշխատողի նկատմամբ: Այս հարցի քննարկումը դպրոցի խորհրդի կողմից շատ դեպքերում ֆորմալ բնույթ է կրում, քանի որ խորհրդի անդամները մոտիկից չեն ճանաչում դպրոցի բոլոր աշխատողներին և պատկերացում չունեն նրանց մասնագիտական կարողությունների և բարեխիղճ աշխատանքի մասին»³⁶:

Առարկաների դասակարգումը՝ կարևորի և երկրորդականի: Դպրոցներում ձևավորվել է առաջնային և երկրորդական առարկաների բաժանման մոտեցում: Բոլոր առարկաները, որոնցից նախատեսվում են քննություններ, առավել մեծ ուշադրության են արժանանում, քան մյուսները: Որպես հետևանք՝ երբեմն ոչ քննական առարկաների ժամերին ուսուցիչը դասավանդում է քննական առարկա: Դա հատկապես վերաբերում է այն առարկաներին, որոնք դասավանդում է նույն ուսուցիչը և կարողանում է հեշտությամբ մեկի փոխարեն մյուսը պարապել³⁷:

Թեև արտաքուստ այս մոտեցումը բխում է աշակերտների շահերից, սակայն ուսուցչի պարտականությունների կատարման լուրջ թերացում է: Փաստացի, ուսուցիչը չի կատարում այն աշխատանքը/պարտականությունը, որի համար վճարվում է: Այն հանգամանքը, որ խնայված ժամանակն օգտագործվում է այլ՝ «ավելի կարևոր» առարկաներ դասավանդելու համար, չի կարող պատշաճ հիմնավորում դիտվել:

Վճարովի պարապմունքները՝ դպրոցում: «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից իրականացված հետազոտության մեջ նկարագրվում է մի իրավիճակ, երբ երևանյան դպրոցներից մեկի խորհուրդը, հաշվի առնելով դպրոցի սովորողների ծնողների դիմումները, որոշել է թույլատրել դպրոցում շախմատի վճարովի պարապմունքների կազմակերպումը: Ընդ որում, վճարովի պարապմունքները պետք է անցկացվեն շախմատ առարկան դասավանդող ուսուցչի կողմից³⁸:

³⁴ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում կրթության բարեփոխումների համատեքստում / Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերգյան Գ., Բարև ՀԿ, 2013, <http://goo.gl/yCD4Eq>, էջեր 25-26:

³⁵ Նույն տեղում, էջ 29:

³⁶ Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում / Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, Երևան, Վան Արյան, 2014, <http://goo.gl/uZaDvI>, էջ 131:

³⁷ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում կրթության բարեփոխումների համատեքստում / Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերգյան Գ., Բարև ՀԿ, 2013, <http://goo.gl/yCD4Eq>, էջ 35:

³⁸ Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում / Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, Երևան, Վան Արյան, 2014, <http://goo.gl/uZaDvI>, էջ 122:

Արտաքուստ դրական և աշակերտների շահերից բխող այս նախաձեռնությունը էական կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: Սա շահերի բախման ակնառու օրինակ է. անձը միևնույն ծառայությունն է մատուցում միևնույն անձանց (աշակերտներին) և՛ անվճար, և՛ վճարովի հիմունքներով: Ակնհայտ է, որ անվճար ծառայության ցածր որակն ու ցածր կրթական արդյունքները խթանում են միևնույն, սակայն վճարովի ծառայության կարիքն ունեցողների թվի աճը: Եթե նույնիսկ մերժենք ուսուցչի կողմից չարամտորեն իր պարտականությունների թերի կատարման վարկածը (աշակերտներին վճարովի խմբակ ներգրավելու նպատակով), միևնույն է, այս երկակի դերը ազդեցություն է ունենալու ուսուցչի մոտիվացիայի և դիրքորոշման վրա: Հնարավոր չէ բացառել առնվազն ենթագիտակցական մակարդակում այնպիսի դիրքորոշման ձևավորումը, երբ ուսուցիչը աշակերտների ցածր առաջադիմությունը կրնկալի որպես լրացուցիչ եկամտի հնարավորություն: Իսկ այս պարագայում հավանական է թե՛ անհիմն ցածր գնահատականների նշանակումը, թե՛ աշակերտներին ներկայացվող պահանջների անհիմն բարձրացումը, թե՛ այլ չարաշահումները:

Մյուս կողմից, այս երևույթն անհարկի լարվածություն կարող է առաջացնել այլ ուսուցիչների մոտ: Վճարովի խմբակ չունենալը կարող է ընկալվել որպես զրկանք (մյուսների համեմատ ինչ-որ բանից զրկված լինել), իսկ միայն աշխատավարձով բավարարվելը՝ անարդարության և սեփական անկարողության (ճարպիկ չլինելու) նշան:

Դպրոցների ձեռնարկատիրական գործունեության ձևերից մեկն է, օրինակ, օտար լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպումը: Բնականաբար, պետական միջոցներից բացի, արտաբյուջետային միջոցներ ձևավորելու և դպրոցի համար լրացուցիչ եկամուտներ ապահովելու՝ օրենսդրությամբ տրված հնարավորությունից օգտվելը, դրական երևույթ է: Սակայն, ինչպես շախմատի լրացուցիչ պարապմունքների դեպքում, այստեղ ևս հարկավոր է հետազոտություն՝ պարզելու համար մատուցվող ծառայությունների պայմանները: Նույնիսկ եթե օտար լեզուների ուսուցումը կազմակերպվում է ոչ դպրոցի ուսուցիչների կողմից, միևնույն է, որոշ մտահոգություններ են առկա: Դպրոցի սահմաններում կրթական այնպիսի ծառայության առկայությունը, որը մատուցվում է նաև դպրոցի կողմից, բազմաթիվ անառողջ երևույթների կարող է հանգեցնել: Միևնույն ծառայության վճարովի տարբերակը ծնողների և աշակերտների կողմից կարող է ընկալվել որպես ավելի որակյալ ու նախընտրելի: Վճարովի խմբակներն ու լրացուցիչ դասերը աստիճանաբար կարող են ընկալվել որպես հանրակրթության բնականոն այլընտրանք:

Գլխավոր վտանգն այն է, որ կրթական ծառայության համար լրացուցիչ վճարը կարող է դառնալ նորմա: Հայտնի է, որ անգամ սոցիալապես կայուն երկրներում անվճար բժշկական ծառայություն մատուցող հաստատությունները երբեմն պիտակավորվում են որպես «հիվանդանոցներ աղքատների համար»: Նույնատիպ ընկալում է հնարավոր Հայաստանի հանրակրթական համակարգում: Պետության կողմից երաշխավորված անվճար կրթությունը կարող է ընկալվել (և արդեն իսկ ընկալվում է) որպես ոչ որակյալ, թերի: Սա այն իրավիճակն է, երբ թվացյալ մրցակցությունը միայն կվնասի կրթության որակին: Կնվազեն ծնողների ու աշակերտների կողմից ուսուցիչներին ներկայացվող պահանջները, իսկ մանկավարժական անձնակազմը կդիտարկի տարբեր խմբակները՝ որպես հանրակրթության բացերը լրացնելու օժանդակ միջոց: Կնվազի դպրոցի սոցիալական ու մասնագիտական պատասխանատվության մակարդակը:

Այս առնչությամբ հետաքրքիր է հարցման մասնակիցներից մեկի հետևյալ դիտարկումը. «Կոռուպցիայի վրա բիզնես են ստեղծում՝ կրկնուսույցներ, խմբակներ և այլն: Գոյություն ունեցող ճգնաժամի վրա կառուցվում է բիզնես ինդուստրիա: Օրինակ՝ հիմա կան դասապատրաստողներ, որոնց ծառայություններից օգտվում են հիմնականում հարուստ ընտանիքները: Նրանք օգնում են երեխաներին դասերը պատրաստելու հարցում, տնայիններն են անում նրանց փոխարեն: Եվ նույնիսկ այս լրացուցիչ ծառայությամբ երեխաները չեն սովորում, որովհետև իրենց փոխարեն անում են: Մյուս կողմից՝ դպրոցի վարկն է ընկնում, դպրոցը չի ընկալվում որպես կրթության հիմնական և հուսալի ազենտ»:

Կոռուպցիոն ռիսկերը՝ ավարտական քննություններում: Վերջին տարիներին Կրթության պետական տեսչության և Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից անցկացված ուսումնասիրությունների և արտաքին ընթացիկ գնահատումների միջոցով աշակերտների առաջադիմության բավական մտահոգիչ արդյունքներ են ստացվել: Գրանցվել է տարբեր առարկաներից անբավարար ստացած աշակերտների թվի զգալի աճ, կրճատվել է գերազանց ստացածների թիվը: Դպրոցների զգալի մասում աշակերտների մեծ մասը ստացել են անբավարար գնահատականներ: Առանձին դպրոցներում դասարանի բոլոր աշակերտները ստացել են անբավարար: Մինչդեռ, ավարտական քննությունների ժամանակ արձանագրվում է բավական դրական պատկեր: Օրինակ, 2012թ.-ին ավարտական քննություն հանձնած 35.336 աշակերտներից 35.279-ը ստացել են դրական գնահատական: Դպրոցական ավարտական քննությունների ժամանակ արձանագրված բարձր արդյունքների ընդգծված անհամապատասխանությունը ընթացիկ արտաքին գնահատումների արդյունքների հետ՝ կասկածի տակ է դնում դպրոցական քննությունների արդյունքների հավաստիությունը: Այս փաստը կոռուպցիոն ռիսկերի բարձր հավանականության մասին է վկայում³⁹:

Ըստ փորձագետների, ընթացիկ և ավարտական կրթական ցուցանիշների շեշտակի հակադրությունը միայն հնարավոր կաշառակերության կամ հովանավորչության **առանձին դեպքերի** վկայությունը չէ: Ավարտական քննությունների ժամանակ աշակերտների հովանավորչությունը (ուսուցիչների թաքնված աջակցություն, անհիմն բարձր գնահատականների նշանակում) համակարգային բնույթ ունի և իրականացվում է դպրոցի ղեկավարության ու մանկավարժների կողմից ոչ այնքան նյութական շահի, որքան՝ «դպրոցի դեմքը փրկելու նպատակով»: Անաչառ, անկողմնակալ գնահատման պարագայում ակնկալվում է, որ աշակերտների զգալի մասը պարզապես ավարտական վկայական չի ստանա: Կրթական արդյունքների նման ցածր մակարդակը կրթության ցածր որակի և կրթական գործընթացի անարդյունավետության հիմնական նշանն է: Այն արտացոլում է հանրակրթության համակարգի՝ իր առջև դրված խնդիրները լուծելու անկարողությունը:

Այսպիսով, ավարտական քննությունները կոռումպացված են առաջին հերթին այն իմաստով, որ կոչված են թաքցնելու հանրակրթության բացերը: Մանկավարժական անձնակազմի և աշակերտների ու նրանց ծնողների միջև անգամ միտումնավոր կոռուպցիոն համաձայնության անհրաժեշտություն չի զգացվում: Մի կողմը շահագրգիռ է ավարտական վկայական ստանալու, մյուս կողմը՝ համակարգի էական բացթողումները քողարկելու հարցում: Գործում է «լուռ համաձայնության» ֆենոմենը, որը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, հատուկ է նաև բարձրագույն կրթության համակարգին և կոռուպցիայի առավել վտանգավոր, արմատացած դրսևորում է:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն և հաշվետվողականություն: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունների քննարկման թափանցիկությունը և հրապարակայնությունը բարձր մակարդակի վրա չէ: Դպրոցի խորհրդի անդամներից ոչ բոլորն են մասնագիտորեն պատրաստված և քաջատեղյակ բյուջետավարման, ֆինանսական պլանավորման և ֆինանսական հաշվետվողականության գործընթացների նրբություններին, գործիքներին: Խորհրդի անդամները շատ դեպքերում չեն կարողանում, երբեմն էլ՝ պարզապես չեն ցանկանում, խորանալ ֆինանսական հարցերի մեջ: Որպես հետևանք, խորհրդի որոշումներն

³⁹ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում կրթության բարեփոխումների համատեքստում / Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Բարև ՀԿ, 2013, <http://goo.gl/yCD4Eq>, էջեր 17-18:

ընդունվում են դպրոցի տնօրենի ցանկությամբ, երբեմն էլ՝ թելադրանքով⁴⁰: Այս պարագայում, փաստորեն, կոռուպցիոն ռիսկերի նախադրյալ է դառնում խորհրդի անդամների իրազեկվածության ու կարողությունների ցածր մակարդակը:

Երևանի քաղաքապետարանի թույլտվությամբ, դպրոցների շենքերը տրամադրվում են վարձակալության տարբեր կազմակերպություններին, որի շնորհիվ դպրոցները ձևավորում են արտաբյուջետային եկամուտներ: Մակայն, կան դեպքեր, երբ դպրոցի շենքի տարածքն ապօրինաբար զբաղեցնում են կազմակերպություններ (առավելապես՝ կրթության ոլորտի կամ Երևանի քաղաքապետարանի ենթակայության)՝ առանց համապատասխան պայմանագրի և վարձակալական վճարների վճարման⁴¹: Այս դեպքում կոռուպցիոն ռիսկերն առկա են միաժամանակ երկու մակարդակներում. դպրոցի նկատմամբ կառավարման իրավասություն ունեցող մարմինների կողմից իրենց լիազորությունների և դիրքի չարաշահում, իսկ դպրոցի տնօրենի կողմից՝ այդ չարաշահումների նկատմամբ լոյալ դիրքորոշման որդեգրում, փաստացի անգործություն:

Դպրոցներում ցածր մակարդակի վրա է գտնվում ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվողականությունը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Մովորաբար արտաքին աուդիտորական կազմակերպությունների կողմից ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ (վերստուգում) չի իրականացվում: Նմանատիպ վերստուգումներ են իրականացվում Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից, որը բավարար չէ՝ դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության լիարժեք գնահատման և ֆինանսական հաշվետվողականության մակարդակի բարձրացման համար: Բացի այդ, դպրոցները հիմնականում չեն հրապարակում ոչ եկամուտների ու ծախսերի ամենամյա նախահաշիվը և ոչ էլ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության եռամսյակային և/կամ տարեկան հաշվետվությունները⁴²:

«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից իրականացված հետազոտության մեջ նշվում է այն մասին, որ դպրոցներից մեկում սեփական և բարեգործական միջոցներով կատարված աշխատանքներն իրականացվել են բավականին պատշաճ որակով, մինչդեռ պետական միջոցների հաշվին կատարված շինարարական աշխատանքների որակից դպրոցում դժգոհ են⁴³: Հարկավոր են լրացուցիչ հետազոտություններ՝ պարզելու համար նկարագրված դեպքի տարածվածությունը և պատճառները, սակայն առաջին հայացքից առկա է կոռուպցիոն ռիսկի հավանականություն: Հնարավոր պատճառներն են՝ պետական միջոցների հաշվին կատարված շինարարական աշխատանքների թերի վերահսկողություն և/կամ միջոցների յուրացում:

Բարձրագույն կրթության համակարգ

Բուհերի ինքնավարության խնդիրը: Թեև Ռազմավարության մեջ խիստ հակիրճ նշվում է բուհերի ինքնավարության սահմանափակումների մասին («Անկատար և իրարամերժ օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս գործադիրի միջամտություն ԲՈՒՀ-երի կառավարմանը, ինչը հանգեցնում է ԲՈՒՀ-երի ինքնակառավարման բացակայությանը»⁴⁴), սակայն հստակեցված չէ այս խնդրի կապը կոռուպցիոն երևույթների հետ:

⁴⁰ Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում / Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, Երևան, Վան Արյան, 2014, <http://goo.gl/uZaDvI>, էջեր 117-118:

⁴¹ Նույն տեղում, էջ 119:

⁴² Նույն տեղում, էջեր 119 և 131:

⁴³ Նույն տեղում, էջ 74:

⁴⁴ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ, <http://goo.gl/qCYgC2>, էջ 34:

Բուհերի ինքնավարության խնդիրն արծարծվում է այլ հետազոտություններում նույնպես. «Պետությունը չափից ավելի շատ է միջամտում ու բոլոր մակարդակներով վերահսկում բարձրագույն կրթության համակարգը», «... դժվար կլինի արդյունավետորեն իրականացնել բոլոնյան ռեֆորմները այս պայմաններում, երբ առկա է լիազորությունների չհավասարակշռված կառուցվածք և քաղաքական ռեժիմի նման միջամտություն բարձրագույն կրթության համակարգի գործերին»⁴⁵:

Հետազոտության ընթացքում քննարկվել է այս հիմնախնդրի կապը կոռուպցիայի հետ: Հարցվածների զգալի մասի կարծիքով, իշխանության տարբեր ճյուղերի միջամտությունը կրթական համակարգում՝ ինքնին կոռուպցիայի ամենավառ դրսևորումն է: Սակայն սա կրթական համակարգից «դուրս գործող» կոռուպցիայի ներթափանցումն է կրթության ոլորտ: Այստեղ գործ ունենք քաղաքական իշխանության չարաշահման հետ, որի նպատակն է բուհերը վերահսկողության ներքո պահելը: Վերահսկողության խնդիրները, թվում է, պարզ են՝ բուհերում իշխանության նկատմամբ լոյալ վարքագծի խրախուսումը, տվյալ բուհում իշխանական կուսակցության դիրքերի ամրապնդումն ու «ուժի ցուցադրումը», և այլն:

Սակայն այս ներթափանցում-միջամտությունն ավելի խորքային խնդիրներ է առաջ բերում: Եթե մինչ այս պահը մենք նկարագրում էինք «արտաքին կոռուպցիայի» ազդեցությունը, ապա այն նախադրյալներ է ստեղծում «ներքին կոռուպցիայի» համար: Փոխվում է բուհի locus of control-ը. բուհի ղեկավար կազմն արտաքին գործոնների ազդեցությամբ է ձևավորվում, ուստի առավել հաշվետու է այդ արտաքին ուժերին, քան՝ ներբուհական հանրությանը: Գործում է համընդհանուր, պարզ կանոնը. իշխանությունը պատասխանատու և հաշվետու է իր իշխանության աղբյուրին: Իշխանության աղբյուրն այլևս բուհի ներսում չէ: Դրա թվացյալ ներկայությունը պահպանված է միայն ձևական առումով:

Այսպիսով, ինքնավարության զգալի մասի կորուստը անհնար է դարձնում բուհի ղեկավարության լիարժեք հաշվետվողականությունը ներբուհական հանրության առջև: Սա էլ, իր հերթին, կոռումպացվածության և հակաօրինական գործողությունների հիմնական նախադրյալներից է:

Բուհերի սահմանափակ ինքնավարության նման իրավիճակը, որը կոռուպցիոն ռիսկերի հիմք է, պայմանավորված է իրավական դաշտի անորոշությամբ: Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորվում է իրար հակասող ակտերով: Իրավիճակը հակասական է այն առումով նաև, որ, ելնելով ֆինանսավորման աղբյուրներից, Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը աշխարհում ամենից մասնավորեցվածն է, այն դեպքում, երբ դրա կառավարումը շարունակում է մնալ պետական: Հայկական բուհերը «պետական» են միայն կառավարման, այլ ոչ թե ֆինանսավորման մասով⁴⁶:

Բուհերի կանոնադրությունները հաստատվում են ՀՀ Կառավարության կողմից: Իսկ պետական լիազոր մարմինը՝ ՀՀ ԿԳՆ-ը մշակում է այդ կանոնադրությունների օրինակելի ձևեր: ԿԳՆ-ը նաև հաստատում է բուհերի ուսանողական միությունների կանոնադրությունները: Այսպիսով, ՀՀ պետական մարմինները հնարավորություն ունեն մշակելու և հաստատելու այնպիսի կանոնադրություններ, որոնք կապահովեն բուհերի ենթակայությունը: Սա վերաբերում է ոչ միայն բուհի ղեկավար մարմիններին, այլ նաև՝ ուսանողական միություններին: Բուհի՝ կառավարման խորհրդի վերջնական կազմը հաստատում է ՀՀ Կառավարությունը, հետևաբար՝ հնարավորություն ունի անցանկալի մարդկանց ընդգրկված լինելու պարագայում չհաստատել այդ կազմը, և պահանջել նոր Խորհրդի ձևավորում: Բուհի ընթացիկ գործունեությունն իրականացնում է ռեկտորը, որն ընտրվում է Խորհրդում, սակայն ընտրության արդյունքները հաստատում և նրան այդ պաշտոնում նշանակում է բուհի հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը:

⁴⁵ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջ 17:

⁴⁶ Նույն տեղում, էջ 19:

Կառավարությունը կարող է նաև չհաստատել ռեկտորի ընտրությունը և նշանակել նոր ընտրություններ. սա հավելյալ ճնշման և վերահսկողության միջոց է⁴⁷:

Պետական մարմինները, ի դեմս ՀՀ Կառավարության և ԿԳՆ-ի, 50 տոկոսով ներկայացված են բուհերի կառավարման խորհուրդների կազմում: Սա հնարավորություն է տալիս պետական մարմիններին բուհին վերաբերող ցանկացած որոշման ընդունման ժամանակ ունենալ առավելություն, իսկ ուսանողական ու պրոֆեսորադասախոսական մարմինների ներկայությունը ձևական բնույթ է ստանում: Պետական մարմինները լիարժեք հնարավորություն ունեն որոշելու, թե ով պետք է լինի բուհի գործադիր մարմնի ղեկավարը⁴⁸:

Այս նորմատիվ կարգավորումներից զատ, հիմնադրի կողմից նշանակված անդամները ոչ ֆորմալ ազդեցություն են ունենում բուհի վրա՝ գործադրելով անձնական կապերի և հեղինակության լծակները: ՀՀ վարչապետի կողմից ներկայացված անդամները զբաղեցնում են պետական ազդեցիկ և բարձր պաշտոններ. դրանով իսկ հնարավորություն ունեն ազդելու Խորհրդի ու ռեկտորի աշխատանքների վրա: Սա նաև յուրահատուկ փոխօգնության ու փոխադարձ պարտավորությունների ցանց է ստեղծում բուհի ղեկավարության ու պետական պաշտոնյաների միջև, ինչը կոռուպցիայի պարարտ հող է հանդիսանում. առաջացող խնդիրները հնարավորություն ունեն լուծվելու նեղ ու փակ շրջանակում⁴⁹:

Գործադիր իշխանության ներկայացուցիչների ներգրավվածությունը կրթության կառավարման մարմիններում շահերի բախման իրավիճակներ է ստեղծում: Օրինակ, չնայած այն բանին, որ Որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) ստեղծվել է «Որակի ապահովման եվրոպական ստանդարտների և ուղեցույցների» հիման վրա (որոնցով պահանջվում է, որ Կենտրոնն անկախ լինի կառավարությունից) ՀՀ վարչապետը ՈԱԱԿ կառավարման խորհրդի նախագահին է: Այս կարգավիճակում նա ուղղակիորեն մասնակցում է ՈԱԱԿ-ի կառավարման ու պլանավորման գործընթացին՝ երբեմն մերժելով կարևոր փոփոխություններ և ծրագրեր: Առկա է շահերի թաքնված բախում, քանի որ ՈԱԱԿ-ը պետք է հավատարմագրման գործընթաց անցկացնի՝ Պետական մանկավարժական համալսարանում, որի խորհրդի նախագահը նույնպես ինքը՝ Վարչապետն է⁵⁰:

Համաշխարհային բանկի կողմից անցկացված հետազոտության մասնակիցները կոռուպցիոն ռիսկեր են մատնանշել ՈԱԱԿ գործունեության մեջ: Մասնավորապես, կասկած է հայտնվել այս մարմնի իրական անկախության վերաբերյալ: Նշվել է, որ որակի ապահովման բարեփոխումները կառավարության և իշխող կուսակցության լիակատար հսկողության ներքո են գտնվում՝ առանց շահագրգիռ կողմերի հետ երկխոսության կամ խորհրդակցության: Այդ պատճառով, բարեփոխումները հանդիպում են անվստահության և բաց հակազդեցության, իրագործվում են ցածր որակով: Բացի այդ, ՈԱԱԿ-ի գործունեությունը թույլ է տալիս լեգիտիմացնել առկա կոռուպցիոն համակարգը: Մասնավորապես, ՈԱԱԿ-ի մշակած բուհերի հավատարմագրման համակարգը խթանում ու լեգիտիմացնում է բուհերում առկա կոռուպցիոն պրակտիկաները⁵¹:

Կոռուպցիոն հիմնախնդիրները ուսանողական խորհուրդներում: Ըստ ՄԻԺԻ-ի իրականացրած հետազոտության արդյունքների, ուսանողական լայն խմբերի մոտ ուսանողական խորհուրդները (ՈւԽ) չեն ընկալվում որպես ինքնավար, ուսանողամետ մարմիններ: Վստահությունը դրանց նկատմամբ չափազանց նվազ է: ՈւԽ-ը գործում է քաղաքական մոտիվացմամբ և գերակշիռ

⁴⁷ ԲՈԻՀ-երի ինքնավարության զարգացումը. առկա խնդիրների վերաբերյալ հետազոտություն / ՄԻԺԻ, Երևան, հունվար, 2014, <http://goo.gl/Cl06UH>, էջեր 8-9:

⁴⁸ Նույն տեղում, էջ 14:

⁴⁹ Նույն տեղում, էջ 12:

⁵⁰ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/0Kkka6>, էջ 18:

⁵¹ Armenia - Second Education Quality and Relevance Project, Education Improvement Project / World Bank, Armenia, 2014, <http://goo.gl/MxKD78>, էջեր 5-6 և 15:

առումով սպասարկում է բուհի ադմինիստրատիվ շահերը: Ուսանողական խորհուրդները հաճախ կազմված են քաղաքական իշխող կուսակցությունների անդամներից և կուսակցական քարոզ են իրականացնում⁵²:

Կենտրոնական եվրոպական համալսարանի հետազոտական խմբի ուսումնասիրությունը ևս անդրադարձել է ՈւԻՄ կուսակցականացման խնդրին. ուսանողական նախաձեռնություններից շատերը վերահսկվում են քաղաքական կառույցների կողմից՝ երբեմն զուգակցված ուղղակի քաղաքական միջամտություններով: Ուսանողական ներկայիս նախաձեռնություններից շատերը թերևս ուղղված են իրենց առաջնորդների համար քաղաքական կարիերա ապահովելուն, քան ակտիվ ներգրավվածություն ունեցող առաջնորդներին բարձրագույն ուսումնական հաստատություններ բերելուն⁵³:

Նման իրավիճակը ՈւԻՄ կոռումպացվածության դրսևորում է: Ուսանողների շահերը պաշտպանելու փոխարեն այս կառույցների մի մասը այլ ուղղվածության գործունեություն է իրականացնում. ժամանցային միջոցառումների կազմակերպում, ուսանողության մոբիլիզացում՝ բուհական տարբեր միջոցառումներին մասնակցելու համար, և այլն: Դրանցում առավել ակտիվություն են ցուցաբերում կուսակցական երիտասարդները: Շատ ուսանողների մոտ ՈւԻՄ-ն ընկալվում է որպես աշխատանքային և կուսակցական կարիերայի առաջին քայլերի լավ հնարավորություն: Որոշ ուսանողներ իրենց ակտիվությունը ՈւԻՄ-ում օգտագործում են որպես պատճառաբանություն՝ դասերը բաց թողնելու համար:

Ուսանողների մի մասի համար էլ ակտիվությունը ՈւԻՄ-ում ընկալվում է որպես ֆակուլտետի կամ բուհի ղեկավարության մոտ իր անձի վերաբերյալ դրական տպավորություն ձևավորելու նախադրյալ: Օրինակ, ուսման վարձի գեղչման ընթացակարգը նախատեսում է, ի թիվս ուսանողի առաջադիմության և այլ գործոնների, նաև՝ հասարակական ակտիվության գնահատում: Այլ, հավասար պայմանների դեպքում նախապատվություն է տրվում հասարակական ակտիվ գործունեությամբ աչքի ընկած ուսանողներին: Սովորաբար, դրանք ՈւԻՄ-ում ներգրավված ուսանողներն են (անկախ վերջիններիս իրական մոտիվացիայից): Հասարակական ակտիվությունը միակողմանիորեն հանգեցվում է ՈւԻՄ-ում ցուցաբերած ակտիվությանը:

Ուսանողների մի մասն էլ օգտագործում է ՈւԻՄ-ում ունեցած իր դիրքը մագիստրոսական կամ ասպիրանտական տեղերի համար պայքարում:

Այսպիսով, կոռումպացվածությունն այստեղ արտահայտվում է ՈւԻՄ դերի նենգափոխմամբ. անդամությունը ՈւԻՄ-ին կամ մասնակցությունը դրա գործունեությանը կարևորվում է անձնական օգուտի տեսանկյունից: ՈւԻՄ-ն, չնայած կոչված է պայքարելու նաև կոռուպցիոն երևույթների դեմ, ինքն է նպաստում կոռուպցիոն վարքի տարածմանը:

Խնդրի պատճառներից մեկն էլ ՈւԻՄ իրական առաքելության և խնդիրների մասին ուսանողների իրազեկվածության պակասն է: Բուհերի ղեկավարությունը կարծես շահագրգռված չէ տեղեկատվության պակասի լրացման և այս կառույցների ինքնավարության ապահովման հարցում: ՈւԻՄ-ի պասիվ, լոյալ դիրքորոշումը ձեռնտու է բուհի ղեկավարությանը և հնարավոր հակադրության կանխման երաշխիք է հանդիսանում:

Բուհերի կողմից ուսանողների ակտիվությանը խոչընդոտելը և ուսանողների մասնակցությունը հակակոռուպցիոն պայքարին: Արտաբուհական հանրային ակտիվությունը, մասնավորապես՝ մասնակցությունը քաղաքացիական-սոցիալական ակցիաներին, սովորաբար չի խրախուսվում բուհերի վարչակազմի կողմից: Ուսանողներն իրենց իրավունքների

⁵² ԲՈՒՀ-երի ինքնավարության զարգացումը. առկա խնդիրների վերաբերյալ հետազոտություն / ՄԻԺԻ, Երևան, հունվար, 2014, <http://goo.gl/Cl06UH>, էջեր 27 և 31:

⁵³ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջեր 43-44:

ուտնահարում են համարում այն հանրային-քաղաքացիական ակցիաներին անուղղակի խոչընդոտելը, որոնք արտոնված կամ խրախուսված չեն պետական մարմինների կողմից⁵⁴:

Հայաստանում ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը հիմնականում սահմանափակվում է միայն բուհի խորհրդում, գիտական խորհրդում և ֆակուլտետների խորհուրդներում պասիվ մասնակցությամբ: Համաշխարհային բանկի կրթական թիմի հետազոտության արդյունքներով, ուսանողների ձայնը լսելի չէ, քանի որ նրանցից շատերը չգիտեն, թե ինչպես արդյունավետորեն մասնակցել՝ առանց այնպիսի ակտիվ ուսանողական մարմնի, որին նրանք կարող էին վստահել: Ուսանողները կարող են նպաստել ավելի դրական արդյունքների ձեռքբերմանը, եթե ավելի լավ տեղեկացված լինեն կառավարման և որակի ապահովման իրենց պոտենցիալ դերերի մասին և պատրաստված լինեն դրանում⁵⁵:

Վերոնշյալ պնդումները հաստատվում են այլ հետազոտությունների արդյունքներով նույնպես. «... ուսանողների մեծ մասը ցանկանում է ակտիվ դեր խաղալ իրենց ապագան կառուցելու գործում, բայց չգիտի, թե ինչպես դա անել, և եթե լինի ինչ-որ խթանիչ ուժ, նրանք կարող են արդյունավետ կերպով պաշտպանել իրենց շահերը: ... ուսանողները բավական լավատեղյակ են իրենց իրավունքներից, սակայն չկա ներկայացուցչական մարմին, որը նախ ցույց կտա մի շարք դրական արդյունքներ ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանության ոլորտում և այնուհետև տեսանելի կդարձնի, թեկուզև միայն բուհական հանրությանը, այդ դրական լուծումները, որոնք կհանդիսանան ուսանողների կողմից այդքան սպասված դրական նախադեպեր: ... նկատի ունենք ոչ թե եզակի դեպքեր (որոնք, վստահ ենք, պատահում են ցանկացած բուհում), այլ խնդրի համակարգված լուծում, ուսանողների իրավունքների աննախադեպ պաշտպանություն»⁵⁶:

«Բազմաթիվ ուսանողներ բարձրացրել են անկախ և անկողմնակալ կենտրոն ստեղծելու հարցը, որը ոչ միայն ուսանողներին կզինի տեղեկատվությամբ, որը նրանց անհրաժեշտ է կոռուպցիայի դեմ պայքարելու համար, այլ նաև խորհրդատվական ծառայություններ կմատուցի, ինչպես, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը»⁵⁷:

Բուհերի կադրային քաղաքականությունը: Ինչպես հանրակրթական դպրոցի պարագայում, բարձրագույն կրթության համակարգում նույնպես կոռուպցիոն ռիսկեր է պարունակում դասախոսների ընտրության և առաջխաղացման գործընթացը: Վարչական գծով ղեկավարները մտահոգությունն առաջացնող աստիճանի վերահսկողական լիազորություններ ունեն այն հարցերում, թե ով և ինչպես պետք է աշխատանքի ընդունվի: Պրոֆեսորադասախոսական կազմի անդամների մոտ մշտապես առկա է անպաշտպան լինելու զգացումը՝ կապված աշխատանքի ընդունման կարճաժամկետ պայմանագրերի հետ, որոնք թարմացվում են ղեկավարության հայեցողությամբ⁵⁸:

Բուհերում աշխատանքային թափուր տեղերը փաստացի մրցութային կարգով չեն լրացվում, փոխարենը աշխատանքի են վերցնում այնպիսի անձանց, ովքեր ենթադրաբար կգործեն պատերճալիստական հարաբերությունների համաձայն: Աշխատողը կամա թե ակամա պարտավորված է զգում իրեն գործել ըստ հովանավորողի ազդեցության, այսինքն՝ զրոյական անձնական ինքնավարությամբ: Այդպիսի դասախոսները նույնիսկ իրենց անձնական գիտական հետաքրքրությունները ձևավորում են ըստ աղմուկիստրատիվ կապիտալ ունեցողի ընտրության

⁵⁴ ԲՈՒՀ-երի ինքնավարության զարգացումը. առկա խնդիրների վերաբերյալ հետազոտություն / ՄԻԺԲ, Երևան, հունվար, 2014, <http://goo.gl/CIo6UH>, էջեր 27-28:

⁵⁵ Կառավարման խնդիրների լուծումը՝ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների կենտրոնում / Համաշխարհային բանկի կրթական թիմ, 2013, <http://goo.gl/47OQwL>, էջեր 55-56:

⁵⁶ Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին / Սալանյան Լ., Գյումրիի Գ., Գրիգորյան Ա., Խաչատրյան Ս., Հասսայան Ա., Երևան, 2010, <http://goo.gl/ZRQszs>, էջ 25:

⁵⁷ Նույն տեղում, էջ 28:

⁵⁸ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջեր 41-42:

կամ, լավագույն դեպքում, խորհրդով, ինչի արդյունքում գիտական ճանաչողությունը չի ընդլայնվում, վերարտադրվում է նույն թեմաների ու հիմնախնդիրների ուսումնասիրությունը⁵⁹:

Կադրային քաղաքականության՝ վերոնշյալ խնդիրների շարքին կարելի է դասել նաև բուհերի ղեկավարության կողմից պաշտոնական դիրքի չարաշահումը՝ բուհական և միջբուհական տարբեր ծրագրերում իրենց ցանկալի անձանց ներգրավվածությունն ապահովելու համար: Դրանք են, օրինակ, արտասահմանյան բուհերի հետ դասախոսների և ուսանողների փոխանակության ու վերապատրաստման ծրագրերը, գիտական և կրթական դրամաշնորհները, հետազոտությունները: Բուհերի ղեկավարությունն այս ծրագրերի համակարգումն իրականացնող պաշտոնյաների վրա երբեմն վարչական ազդեցություն է գործադրում՝ տարբեր անձանց մասնակցությունն ապահովելու նպատակով: Հարցվածները նշել են դեպքեր, երբ բուհական հետազոտական ծրագրերում ներգրավվել են բուհի ղեկավարության հետ փոխկապակցված անձինք, որոնք ոչ մի գործուն մասնակցություն չեն ցուցաբերել ծրագրի իրագործմանը, սակայն վարձատրվել են չկատարած աշխատանքի դիմաց:

Հատկանշական են հետազոտության ընթացքում հայտնված հետևյալ կարծիքները.

- «Իրենց մարդկանց են մտցնում ծրագրերի մեջ: Նույն մարդիկ «պտտվում են» տարբեր ծրագրերում: Փակ ակումբի, համայնքի պես բան է ստացվում: Օտար մարդը չի կարող դրանց մեջ մտնել: Եթե այլ մարդիկ էլ հնարավորություն ունենան մտնելու՝ դասախոսների մոտ մոտիվացիա կառաջանա, խթանիչ նշանակություն կունենա»:
- «Հիմա կաշառքը փողով չէ, իրար լավություն անելով է. ծրագրերում ընդգրկելը, աշխատանք տալը: Փոխադարձ լավություն են անում»:
- «Արտասահմանյան ծրագրերի (օրինակ՝ Tempus-ի) հարցում բուհի ղեկավարությանը շահագրգռելու համար ղեկավարությունից կամ նրանց հարազատներից մարդ են ներգրավում»:

Արտասահմանյան ուղևորությունների և գիտաժողովներին մասնակցության հարցում նույնպես տարբերակված մոտեցում է կիրառվում: Եվրոպական առավել «գրավիչ» երկրներում տեղի ունեցող հեղինակավոր գիտաժողովներին և այլ միջոցառումներին նկատվում է բուհական ղեկավարության կամ դրա հետ փոխկապակցված անձանց առավել ակտիվ մասնակցություն: Ընդ որում, այս անձինք նախընտրում են մասնակցի վրա հնարավորինս քիչ պարտավորություններ դնող, այսպես կոչված, «թեթև» ծրագրերը, որոնք նաև ժամանցի ու մշակութային հանգստի լավ հնարավորություններ են ընձեռում: Հարցվածները կասկած են հայտնել նմանատիպ ծրագրերի օգտակարության վերաբերյալ: Ըստ նրանց, բուհի կողմից կատարվող ծախսերի համեմատ ակնկալվող օգուտը բավական անորոշ է:

Այսպիսով, կոռուպցիոն ռիսկեր են առկա ինչպես տարբեր ծրագրերի անձնակազմի ձևավորման, այնպես էլ՝ անձնական նպատակներով բուհի ֆինանսական միջոցներն օգտագործելու հարցում:

Բարեփոխումների արգելակումը բուհերի բարձր և միջին կառավարման օղակների կողմից:

Կոռուպցիոն քիչ ուսումնասիրված երևույթների թվում է բարեփոխումների խոչընդոտումը: Այս երևույթը կարծես այդքան հաճախ չի հիշատակվում կոռուպցիոն խնդիրների շարքում, սակայն այն կոռուպցիոն վարք է ենթադրում: Կրթության կառավարման բարձր կամ միջին օղակների պատասխանատուները արգելակում են բարեփոխումների ընթացքը՝ օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը (խոչընդոտելով կամ պակասակամությամբ՝ անգործություն դրսևորելով) և նպատակ ունենալով խուսափել բարեփոխումների՝ իրենց համար անցանկալի հետևանքներից: Սաբոտաժի դրսևորումները, որոնց հիմքը ոչ թե գաղափարական հակադրությունն է կամ բարեփոխումների վերաբերյալ այլընտրանքային պատկերացումը, այլ՝ սեփական դիրքի

⁵⁹ ԲՈՒՀ-երի ինքնավարության զարգացումը. առկա խնդիրների վերաբերյալ հետազոտություն / ՄԻԺԻ, Երևան, հունվար, 2014, <http://goo.gl/Cl06UH>, էջեր 29-30:

պահպանումն ու դրանից բխող շահի սպասարկումը, լիովին համապատասխանում են կոռուպցիոն վարքի բովանդակությանը:

Հետազոտություններից մեկում այս երևույթի մասնակի բացատրությունն է տրվում՝ կապված տարիքային գործոնի հետ. «... բարձրագույն ուսումնական հաստատություններում ավելի շատ իշխանություն ունեն առավել տարիքով «հին սերնդի» պրոֆեսորները: Նրանք այդքան էլ շահագրգռված չեն փոփոխությունների հարցում, քանի որ իրենց շատ հարմարավետ են զգում ներկա պաշտոններում և գոհ են իրենց ունեցած դերից ու նշանակությունից, չնայած որ այս կատեգորիայի անձանց շրջանում նույնպես կան որոշ բացառություններ»⁶⁰:

Դասախոսների ցածր վարձատրության խնդիրը: Պակաս կարևոր չէ դասախոսների ցածր վարձատրության խնդիրը՝ որպես կոռուպցիոն վարքը խթանող գործոն: Հայաստանի դասախոսներն աշխարհի մասշտաբով ամենացածր աշխատավարձերից են ստանում, իսկ երկրի տարբեր մարզերում աշխատավարձերի չափերի միջև զգալի անհամապատասխանություններ կան: Ցածր աշխատավարձը ստիպում է դասախոսներին աշխատանքի անցնել մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, որպեսզի լրացնեն այն բացը, որն առաջանում է միայն մեկ տեղում աշխատելու և միայն այնտեղից աշխատավարձ ստանալու արդյունքում: Այս իրավիճակը բացասաբար է անդրադառնում դասավանդման կատարողականի, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու պատրաստակամության կամ հանրային ծառայության վրա ընդհանրապես: Որոշ դասախոսներ ուսանողներից կաշառք են վերցնում քննություններն ընդունելու, նրանց լավ գնահատականներ նշանակելու համար, կամ «վճարներ» են վերցնում ուսանողների փոխարեն նրանց աշխատանքները գրելու համար⁶¹:

Այս առնչությամբ հետաքրքիր են հարցման մասնակիցների հետևյալ տեսակետները, որոնք վերաբերելի են նաև հանրակրթական դպրոցի ուսուցիչներին.

- «Համակարգը չի կարողանում ֆինանսապես ապահովել այդ մարդկանց: Նրանք էլ տարբեր գործեր են կատարում՝ կրկնուսույց են դառնում կամ կաշառք են վերցնում, որ լրացնեն այդ բացը: Ինչ-որ մեկի համար դիսերտացիա ու հոդված են գրում, և այլն: Հայաստանում կենսաձև է դարձել: Եթե խիստ արգելես՝ կաշառք մի՛ վերցրու, կրկնուսույց մի՛ դարձիր, ահավոր բան կլինի: Կոռուպցիան նշանակում է, որ ինչ-որ բան պակաս է և համակարգը այդ բացը սկսում է ինքնուրույն լրացնել: Կոռուպցիայի վերացման գլխավոր հիմքը՝ բարեկեցությունն է: Երբ անձը պետության հետ է իր կապը պահպանում, նրա հետ է պայմանագրի մեջ, ոչ թե այլ անձանց հետ՝ կլանային կապերի մեջ: Եվ բավականաչափ բարեկեցիկ է, որպեսզի չգնա կոռուպցիոն գործարքի»:
- «Ամերիկյան և Ֆրանսիական համալսարաններում ոչ թե գրավոր քննությունն է կանխարգելում կոռուպցիան, այլ՝ բարձր աշխատավարձը: Դասախոսները ռիսկի չեն դիմում, քանի որ կորցնելու մեծ բան ունեն: Բացի այդ, իրենց աշխատանքը գնահատված են զգում, որը նաև բարոյական նշանակություն ունի: Միջավայրը նույնպես կարևոր է՝ քանի որ մեծ մասը կոռումպացված չէ, դա նաև առանձին անհատի վրա է ազդում: Այնպիսի միջավայր է, որ կոռուպցիան խորթ է, չի խրախուսվում: Այլապես՝ սպիտակ ագռավ կդիտվես»:

«Լուռ գործարք»: Հանրակրթության հատվածում մենք անդրադարձել էինք, այսպես կոչված, «լուռ համաձայնության» ֆենոմենին, որը բնորոշել էինք որպես կոռուպցիայի առավել վտանգավոր, արդի դրսևորում: Նշվել էր այն մասին, որ մանկավարժական անձնակազմի և աշակերտների ու նրանց ծնողների միջև անգամ միտումնավոր կոռուպցիոն համաձայնության

⁶⁰ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Գենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջ 40:

⁶¹ Նույն տեղում, էջ 41:

անհրաժեշտություն չի զգացվում: Մի կողմը շահագրգիռ է ավարտական վկայական ստանալու, մյուս կողմը՝ համակարգի էական բացթողումները քողարկելու հարցում:

Այս երևույթն առկա է նաև բարձրագույն կրթության համակարգում: Բուհերում նույնպես գործում է փոխշահավետ համաձայնության մեխանիզմը: Բուհն «աչք է փակում» ուսանողների ցածր կրթական արդյունքների և իրական մոտիվացիայի վրա, քանի որ շահագրգռված է մեծ թվով ուսանողների (հետևաբար՝ ֆինանսական ռեսուրսների) ներգրավման հարցում: Ուսանողների զգալի մասի համար իրավիճակը ձեռնառու է, քանի որ թույլ է տալիս ցածր կրթական մակարդակ ունենալով, միանգամայն օրինական ուսման վճարի շնորհիվ ստանալ բարձրագույն կրթության վկայական:

Կոռուպցիոն գործարքի առկայության մասին է վկայում նաև ԿԳ նախարարը. «Քանի դեռ կա քննությունը կամ ստուգարքն այլ ճանապարհով ստանալու մեջ շահագրգիռ ուսանող, կոռուպցիայի դեմ պայքարը չի կարող արդյունավետ ու արագ արդյունքների բերել: Ինչո՞ւ: Որովհետև մեզ ահազանգողը չկա. պետք է ահազանգեն այն մարդիկ, որոնց իրավունքները խախտվում են: Բայց եթե երկկողմանի հանցավոր համաձայնություն է, ապա գործարքը տեղի է ունենում, և ոչ ոք չի ահազանգում. բոլորը գոհ են՝ բացի ձեզնից և ինձնից»⁶²: Թեև նախարարի խոսքը վերաբերում է սովետային, ոչ օրինական գործարքին, սակայն պակաս կարևոր չէ այս գործարքի «օրինականացված» տարբերակը:

Երևույթի վտանգավորությունը դրա՝ արտաքուստ օրինական բնույթի մեջ է: Բուհն ավարտելու համար նախկին տասնամյակներում տարածում ունեցող կաշառքի կամ հովանավորչության կարիքն այլևս չի զգացվում: Կաշառքի «դերակատարումը» ստանձնել է ուսման վարձավճարը, իսկ հովանավորչություն իրականացնողը ոչ թե առանձին դասախոսն է՝ իր անձնական շահերով, այլ բուհը՝ որպես համակարգ: Հովանավորչությունն այս իրավիճակում արտահայտվում է ուսանողների գիտելիքներին և հմտություններին ներկայացվող պահանջների շարունակական նվազեցմամբ, չափից ավելի մեղմ և ներողամիտ դիրքորոշմամբ:

Նախկինում առանձին անհատների միջև ձևավորվող սովետային համաձայնությունները փոխակերպվել են՝ վերածվելով ուսանողի և համակարգի (բուհ, ֆակուլտետ) միջև լուռ համաձայնության: Եթե նախկինում շահողն առանձին անհատն էր (դասախոսը և ուսանողը), ապա այժմ համակարգն է հայտնվել շահագրգիռ կողմի կարգավիճակում: Ինչն էլ գրեթե անհնար է դարձնում կոռուպցիայի այս նորահայտ երևույթի դեմ պայքարը:

Ընդ որում, հիմնախնդիրն առավել սուր է արտահայտված հեռակա ուսուցման համակարգում: Հեռակա ուսուցման տևողությունը 5 տարի է, ի տարբերություն առկա ուսուցման 4 տարվա: Դրա փոխարեն, հեռակա համակարգում յուրաքանչյուր կիսամյակ դասերը տևում են ընդամենը մեկ ամիս: Հավանաբար ենթադրվում է, որ մեկ տարի ավել սովորելու շնորհիվ պետք է լրացվի ավելի քիչ դասի հաճախելու հետևանքով առաջացող բացը: Սակայն նման մեխանիզմական փոխլրացումը (միայն ուսման տևողության հաշվին) անհնար է: Օրինակ, միևնույն դասախոսի կողմից միևնույն անվանումով դասընթացի վարման համար հեռակա ուսուցման համակարգում ավելի քիչ (կրկնակի և եռակի անգամ) ժամեր են նախատեսված, քան առկա ուսուցման համակարգում: Հետևաբար, կարիք է առաջանում «սեղմելու» դասընթացի բովանդակությունը, այն ադապտացնելու մեկամսյա ժամկետին: Քանի որ դասընթացները մշակվում են առկա ուսուցման համակարգի համար՝ դրանց հետագա ձևափոխումն ազդեցություն է ունենում դասավանդման որակի վրա: Դասընթացի ադապտացման ինչպիսի լավ մեխանիզմ էլ կիրառվի՝ դասախոսի կողմից, միևնույն է, անհնար է բացառել կորուստները՝ թե՛ ծավալի, թե՛ դասավանդման մեթոդների առումով:

Ստացվում է հակասական իրավիճակ. այն, ինչ նախատեսված էր դասավանդել 4 ամիսների ընթացքում՝ ուսանողների հետ տևական, շարունակական շփման միջոցով, այժմ հարկավոր է

⁶² Ինչպե՞ս հասնել կոռուպցիայի կայուն նվազման. մեկնաբանում է Արմեն Աշոտյանը / Միբանուշ Հայրապետյան, Առավոտ, <http://goo.gl/7RTSdL>

տեղավորել մեկ ամսվա շրջանակում: Եթե նման փոխակերպումն ու սեղմումը հնարավոր է, ապա հարց է առաջանում, թե առկա ուսուցման համակարգում դասընթացն ինչո՞ւ է անհարկի ձգձգված: Կամ՝ հակառակը՝ եթե դասընթացի բնականոն վիճակը ենթադրում է տևական գործընթաց, արդյո՞ք տեղին է այն դասավանդել ընդամենը մեկ ամսում:

Բնականաբար, խնդիրը խորն է և վերաբերում է ոչ միայն դասավանդվող նյութի ծավալին, այլև դասախոս-ուսանող հարաբերությունների բնույթին, կիրառվող մեթոդների բազմազանությանը, նյութի կրկնությանն ու ամրապնդմանը, և այլն: Օրինակ, եթե առկա ուսուցման համակարգում հնարավոր է կիրառել խմբային կամ ինքնուրույն հետազոտությունների՝ տևական ժամանակ պահանջող մեթոդներ, ապա հեռակա համակարգում նման հնարավորությունները սահմանափակ են: Ի վերջո, նյութի ընկալման և պրակտիկ հմտությունների զարգացման համար կարևոր է ոչ միայն զուտ ժամաքանակը, այլև՝ դրա ճիշտ բաշխվածությունը:

Հեռակա համակարգում կրթության որակի վրա ազդում են նաև ուսանողների ավելի ցածր կրթական մոտիվացիան (առկա համակարգի ուսանողների համեմատ), դասախոսների և ֆակուլտետի ղեկավարության՝ հեռակա ուսուցման նկատմամբ ոչ բավարար ուշադրությունը:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ վերը նկարագրված «լուռ համաձայնության կամ գործարքի» ֆենոմենը հեռակա ուսուցման համակարգում ավելի ցայտուն է դրսևորվում:

Հիմնախնդրի ակնառու հետևանքներից մեկը մեծ թվով ուսանողների առկայությունն է բուհերում: Եթե կրթական պահանջներին չհամապատասխանող ուսանողների՝ կրթական գործընթացից դուրս մղման մեխանիզմներն արդյունավետ աշխատեին, հնարավոր կլիներ անտեսել այս խնդիրը: Մակայն հայաստանյան բուհերում դրանք փաստացի չեն գործում: Պատճառներից մեկը՝ բուհի նվազ շահագրգռվածությունն այդ հարցում, վերը արդեն ներկայացվեց: Այլ գործոններ նույնպես կան: Դեր է խաղում բարձրագույն կրթության և հատկապես այն հավաստող վկայականի գերաթեվորումը ուսանողների և նրանց ընտանիքների կողմից: Մեկ անգամ այդ համակարգում հայտնված ուսանողը գործի է դնում ոչ ֆորմալ համաձայնությունների ու միջնորդությունների ամբողջ զինանոցը՝ դրանից այլևս դուրս չմնալու նպատակով: Ուսանողական միջավայրի գոման և բարելավման ֆիլտրերը հայաստանյան պայմաններում խիստ թերի են գործում:

Լսարանում մեծ թվով չմոտիվացված և ցածր կրթական մակարդակ ունեցող ուսանողների առկայությունը էական խնդիրներ է առաջ բերում: Ուսանողների միջև առողջ մրցակցությունն անկում է ապրում, քանի որ չսովորող ուսանողների որոշակի ձգնաժամային զանգվածը բացասական ազդեցություն է ունենում մյուսների վրա: Նման պայմաններում հնարավոր չէ ակնկալել արդյունավետ խմբային աշխատանք, քանի որ ուսանողների կարողությունների միջև հսկայական տարբերություն կա: Տուժում է ուսանողների՝ մեկը մյուսից սովորելու, փոխադարձաբար գիտելիք փոխանցելու հնարավորությունը: Բացի այդ, յուրաքանչյուր կուրսում ուսանողների փոքր թիվը գնահատման թափանցիկության և փոխադարձ վերահսկողության ավելի լավ հնարավորություններ է ընձեռում:

Շրջանավարտների անհիմն մեծ թվաքանակը այլ համակարգերում կոռուպցիայի վերարտադրության նախադրյալ է ստեղծում: Դիպլոմավորված, սակայն մասնագիտությանը չտիրապետող անձանց մեծ թիվը խթանում է կաշառքի և ազդեցիկ կապերի միջոցով աշխատանքի տեղավորման պրակտիկան:

Նենգափոխվում են դասախոսի և ուսանողի դերերը: Դասախոսը դպրոցական մանկավարժի գործառույթներ է ստանձնում՝ փորձելով լսարանի մոտ սովորելու ցանկություն առաջացնել, համոզել ու բացատրել դրա նշանակությունը: Ուսանողների մոտ էլ ձևավորվում է դրան համապատասխան դերային բեռը՝ ինֆանտիլ ու պասիվ դիրքորոշումը. «Ես այստեղ եմ, որպեսզի ինձ համոզեն և հետաքրքրեն սովորելու հարցում»: Դասախոսների բարոյալքում է տեղի ունենում, քանի որ դասավանդումն ընկալվում է որպես անիմաստ մի գործընթաց՝ «սովորեցնել նրանց, ում մեծամասնությունը սովորելու ցանկություն և կարողություն չունի»:

Նկարագրված խնդրին անդրադարձ է կատարվել այլ հետազոտություններում ևս: Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոնի ուսումնասիրության մեջ նշվում է այն մասին, որ «... բարձրագույն կրթության դիպլոմ կարելի է ստանալ նույնիսկ առանց մեծ ջանքերի. երբեմն ոչ թե կաշառք, այլ պարզապես սովորական ուսման վարձ վճարելը լրիվ բավական է, հաշվի առնելով այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները գոյատևում են այս վարձերից գոյացած միջոցներով, ուստի՝ որպես կանոն, կրթական համակարգից դուրս չեն թողնում ուսանողներին: Ճիշտ է, լավ սովորող և ջանասեր ուսանողներին չեն ստիպում կաշառք տալ իրենց գնահատականների կամ դիպլոմների համար, սակայն նրանք կարող են տուժել կաշառք տվողների հետ անարդար մրցակցության պայմաններում»⁶³:

Մեկ այլ հետազոտության մեջ էլ ուսանողների մոտիվացիայի թուլացումը դիտարկվում է ոչ միայն ընդունելության ցածր շեմի, այլև՝ քննության վերահանձնումների ժամանակ ցածր շեմի փաստի ներքո: Բուհի կողմից վերահանձնումների ժամանակ անցողիկ շեմի նվազեցումը հանգեցնում է ուսանողների կողմից դրսևորվող անտարբերության, հաճախակի բացակայությունների, քննությունների գործընթացին անլուրջ մոտեցման և դրանց համարժեք խարդախությունների ու անազնիվ վարքագծերի դրսևորման: Անտարբեր վարքագծի տարածվածությունն ազդում է կրթական համակարգի արդյունավետության վրա՝ նվազեցնելով նաև դասախոսների, մյուս ուսանողների մոտիվացիաները⁶⁴:

Այսպիսով, կարող ենք խոսել բուհերում համակարգային կոռուպցիայի առկայության մասին: Կոռուպցիան այստեղ դրսևորվում է որպես համակարգի փչացածություն, արատավորություն: Համակարգը չի կատարում այն հիմնական գործառնությունները, որոնց համար կոչված է: Իրական կրթության փոխարեն հաճախ առկա է կրթական գործընթացի իմիտացիա: Այս խաղի մեջ ներգրավված բոլոր կողմերը՝ բուհը (որպես համակարգ և դասախոսական հանրույթ), առանձին դասախոսներն ու ուսանողները կարճաժամկետ հատվածում բավարարում են իրենց շահերը, սակայն տանուլ են տալիս երկարաժամկետ հեռանկարում:

Բարձրագույն կրթության համակարգը ֆինանսական օգուտի դիմաց հավաստում է շրջանավարտների մասնագիտական կարողությունները, որոնց իրական մակարդակն ու որակը խիստ վիճահարույց են: Տեղի է ունենում ոչ համարժեք փոխանակություն. ֆինանսական ռեսուրսի ներգրավման դիմաց՝ կրթական մակարդակի անհիմն երաշխավորություն: Երևույթը կոռուպցիոն է, քանի որ փոխանակվում և փոշիացվում է պետական և հանրային բարիքը (կրթությունը՝ որպես արժեք):

Կոռուպցիոն այլ հիմնախնդիրներ

• Դեռևս ակտուալ են կոռուպցիայի այնպիսի ավանդական ձևեր, ինչպիսիք են՝ սովորողների հովանավորչությունը դասավանդողների և ուսումնական հաստատության ղեկավարության կողմից (հատկապես՝ հարազատական կապի դեպքում), նվիրատվության «ավանդույթի» շարունակականությունը՝ հատկապես դպրոցներում, դասախոսների կողմից ուսանողների աշխատանքը շահագործելը (օրինակ՝ տեքստերի թարգմանություն կամ սրբագրում իրականացնել, աջակցել դասախոսին իր հետազոտական աշխատանքներում, և այլն), դասախոսի կողմից իր հեղինակած գրքերի վաճառքը ուսանողներին:

• Դպրոցներում մատուցվող կրթական նյութը և ավարտական քննությունների ժամանակ ստուգվող գիտելիքները չեն համապատասխանում միմյանց, ինչի արդյունքում զարգանում է կրկնուսույցների ինստիտուտը: Շտեմարանները չեն համապատասխանում դպրոցում ուսուցանվող կրթական նյութին, ինչի արդյունքում ավարտական քննությունները դառնում են

⁶³ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջ 28:

⁶⁴ Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում / Անտոնյան Ք., 2013, <http://goo.gl/7ZCh0d>, էջ 41:

կոռուպցիայի աղբյուր: Առավել պահանջված կրկնուսույցները շտեմարանների հեղինակներն են, որոնց մոտ պարապելը երաշխավորում է շտեմարաններում առկա նյութի լիարժեք տիրապետումը: Ավագ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները հանդուրժում են աշակերտների՝ դասերից բացակայությունը կամ դասաժամի ընթացքում տվյալ առարկայի դասով զբաղվելու փոխարեն կրկնուսույցի առաջադրանքները կատարելը՝ իրենց մոտ հավելյալ վճարով կրկնակի պարապելու կամ համապատասխան «վերաբերմունք ցույց տալու» դիմաց:

- Հատկանշական է, որ մասնավոր պարապմունքների պրակտիկան տարածված է նաև բուհերում: Սակայն եթե աշակերտներն ու նրանց ծնողները հետամուտ են լրացուցիչ վճարի դիմաց հավելյալ գիտելիք ձեռք բերելու հարցում, ապա բուհերում լրացուցիչ պարապմունքների վճարը հաճախ օրինականացված կաշառքի է վերածվում: Ուսանողը միննույն առարկան է պարապում այն դասավանդող դասախոսի մոտ՝ տվյալ առարկայից քննությունը կամ ստուգաբար դյուրին ստանալու մտադրությամբ: Այստեղ նույնպես գործում է «լուռ համաձայնության» մեխանիզմը: Երկուստեք կարևորվում է ոչ թե գիտելիքի ստացումը, այլ՝ վճարի փաստը: Այդ լրացուցիչ պարապմունքներում ուսանողն այդպես էլ կարող է չյուրացնել նյութը, սակայն վստահ լինել, որ դասախոսը քննության ժամանակ բավական մեղմ դիրքորոշում կորդեգրի:

- Մտահոգիչ է դպրոցների կուսակցականացման միտումը՝ հատկապես տնօրենների մակարդակում: Տնօրենների կողմից իշխող քաղաքական ուժին անդամագրության պրակտիկա է ձևավորվել: Եթե նույնիսկ ընդունենք արտաքին ճնշումների բացակայության կանխավարկածը, միննույն է, այս միտումը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում՝ տնօրենի պաշտոնը (թեկուզ ինքնակամ) կուսակցության խնդիրներին ծառայեցնելու առումով: Մամուլում բազմաթիվ հրապարակումներ են եղել այն մասին, որ դպրոցների տնօրեններն ակտիվ մասնակցություն ունեն նախընտրական գործընթացներում. մանկավարժական անձնակազմի և աշակերտների ծնողների շրջանում քարոզչություն են իրականացնում իշխող քաղաքական ուժի օգտին:

- Բուհերում կաշառակերությանն են նպաստում այնպիսի անհեթեթ ավանդույթներ, ինչպիսիք են, օրինակ, որոշ ֆակուլտետներում գերազանց գնահատականների թվաքանակի ոչ ֆորմալ սահմանափակումը: Դասախոսներն իրենց նախաձեռնությամբ, կամ հետևելով չգրված կանոններին, սահմանում են գերազանց գնահատականների քանակի բարձր շեմ: Եվ երբեմն լավ սովորող ուսանողներն էլ ստիպված են լինում վճարել՝ գերազանցիկների այդ սահմանափակ ցանկում հայտնվելու համար: Մեկ այլ ավանդույթ է մասնագիտության համար կարևորություն չներկայացնող, պարզապես տարիներ ի վեր իներցիոն եղանակով դասավանդվող առարկաների առկայությունը: Նման առարկաներից բավարար գնահատական ստանալու համար ուսանողներն առավել հակված են կաշառատվության, քանի որ մոտիվացված չեն այդ «երկրորդական» կամ «անհասկանալի» առարկաները սովորելու հարցում:

- Հարցման մասնակիցները կոռուպցիայի ընդհանուր պատճառների շարքում նշում են ուսանողների սովորելու ցանկության բացակայությունն ու ցածր մոտիվացիան: Այս խնդրի տարածվածությունը վկայում է, որ այն ոչ թե անհատական, այլև՝ սոցիալական երևույթ է: Կրթության արժեզրկվածությունն ու մարդկային կապիտալի ցածր արժեքը (համեմատած սոցիալական կապիտալի հետ) նպաստում է կոռուպցիոն վարքի տարածմանը:

- Բուհերում կոռուպցիայի համեմատաբար նորահայտ ձևերից է հանրային ճանաչում կամ բարձր պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց դասախոսական դիրքի օգտագործումը՝ որպես ինտելեկտուալ կերպարի բաղադրիչ: Նման անձինք դասախոսական աշխատանքի նկատմամբ հաճախ դրսևորում են բացառիկ անպատասխանատու վարքագիծ, բաց են թողնում դասաժամերի մեծ մասը (գործուղումների և հասարակական-քաղաքական ծանրաբեռնվածության պատճառաբանությամբ), անփույթ են վերաբերում դասավանդման գործընթացին: Դասախոսի պաշտոնն օգտագործվում է միայն նեղ անձնական շահադրդմամբ՝ որպես ինտելեկտուալ-մտավոր գործունեության կենսագրական տվյալ: Հաճախ այս դասախոսների փոխարեն ամբողջ դասընթացը նրանց փոխարինողներն են վարում:

Հակակոռուպցիոն ռազմավարությանը հատուկ խնդիրները

Որո՞նք են նախորդ ռազմավարության արդյունքները

Ռազմավարության՝ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2009-2012 թթ. ծրագրի արդյունքները» հատվածում կարևորվել է նախորդ ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումը: Նշված է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք է սահմանել **կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը**, իսկ ակնկալվող հիմնական արդյունքներն են՝ կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի տարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, քաղաքական համակարգի կայունության ամրապնդումը, երկրի տնտեսական մրցակցության բարձրացումը:

Այնուամենայնիվ, նախորդ ռազմավարության իրականացման արդյունքների նկարագրության մեջ բացակայում է հստակ անդրադարձը ակնկալվող արդյունքների որակին կամ դրանց իրագործման մակարդակին: Մասնավորապես, 12-րդ կետում նշվում է այն մասին, որ «... ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում նախանշված նպատակներն ամբողջությամբ չեն իրագործվել, և Հայաստանի Հանրապետությունը շարունակում է դասվել կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին»:

Թեև 15-րդ կետում համառոտ անդրադարձ է կատարվում արդյունքների՝ լրիվ կամ մասնակի չկատարման պատճառներին (օրինակ՝ միջոցառումների թերի պլանավորում, կոռուպցիոն հիմնախնդիրների, պատճառների ու դրսևորման ձևերի թերի բացահայտում, և այլն), սակայն կրկին բացակայում է արդյունքների հստակ գնահատականը: Ի վերջո, պարզ չէ, թե կոռուպցիայի ընդհանուր մակարդակը որքանով է կրճատվել, արդյոք վերացել է կոռուպցիայի համակարգային բնույթը, արդյոք սոցիալական արդարության ընկալումը բարելավվել է, և այլն:

Յուրաքանչյուր արդյունքի գնահատում պահանջում է նախապես սահմանված ցուցանիշներ և գնահատման մեթոդաբանություն: Արդյունքի (օրինակ՝ հանրային ծառայությունների որակի բարելավում) գնահատումը պահանջում է համալիր ուսումնասիրություն՝ ներառյալ հասարակական կարծիքի հետազոտությունը: Ընդ որում, առաջընթացը գնահատելու համար հարկավոր է ապահովել այդ ուսումնասիրությունների շարունակականությունը. իրավիճակի գնահատում՝ «մինչ և հետո» մոտեցմամբ:

Թեև համապարփակ տվյալների բացակայությունը թույլ չի տալիս միանշանակ և քանակական ցուցանիշներով հիմնավորված գնահատական տալ, սակայն ակնհայտ է, որ հանրային ընկալման մեջ վերը բերված արդյունքների առնչությամբ էական առաջընթաց չկա:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կոռուպցիայի ընկալման համաթվի 2014 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանը չի բարելավել իր դիրքը 175 երկրների շարքում: Հայաստանում կոռուպցիայի ընկալման համաթիվը 2012 թվականի 34-ից 2013թ.-ին դարձել է 36, իսկ 2014թ.-ին՝ 37: 2012-2014թթ. ընթացքում համաթվի նման աննշան աճը առաջընթացի վկայություն համարվել չի կարող⁶⁵:

Առանձին բնագավառներում կատարված բարեփոխումներն ու ձեռքբերումներն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման են՝ ակնկալելու արդյունքների ապահովումը: Անգամ միջոցառումների զգալի մասի հաջող իրականացումը բավարար երաշխիք չէ դրա համար: Ուստի կարևոր է հայտնաբերել այն թույլ օղակները, որոնց բացակայության կամ խափանման

⁶⁵ Կոռուպցիայի ընկալման համաթիվ. ԹԻ-ի 2014-ի տվյալներով՝ Հայաստանի գնահատականն ավելի բարձր է հարևանների համեմատությամբ / Մառա Խոջոյան, ԱրմենիաՆաու, <http://goo.gl/4qhCnb>

պատճառով նույնիսկ հաջող իրականացված միջոցառումները չեն հանգեցրել ցանկալի վերջնարդյունքներին: Ցավոք, նոր ռազմավարության մեջ այդ վերլուծությունը բացակայում է:

Նույն խնդիրն է բնորոշ մեր հետաքրքրության կենտրոնում գտնվող կրթության բնագավառին: Ռազմավարության 10-րդ կետի ներքո մեկ պարբերությամբ անդրադարձ կա 2012-2014թթ. կրթության բնագավառում իրականացված միջոցառումներին: Սակայն, նույնիսկ եթե էլենք այն կանխավարկածից, որ բոլոր միջոցառումներն էլ իրականացվել են բարձր որակով, մինևույն է բաց է մնում դրանց վերջնական արդյունքի հասանելիության հարցը: Պարզ չէ՝ կրթության բնագավառի հետ առնչվող անձինք ինչպես և ինչ որակի փոփոխություններ են արձանագրել իրենց կյանքում, արդյոք կոռուպցիայի մակարդակը կամ տարածվածությունը կրճատվել է: Ներկայացված չէ կոռուպցիայի դեմ պայքարի և մարդկային զարգացման կամ կյանքի որակի միջև առկա կապը:

Նախորդ ռազմավարության արդյունքների հստակ և հիմնավորված գնահատականն կարևոր է՝ նոր ռազմավարության հաջողությունն ապահովելու համար: Վերը նշված «թույլ օղակների» մասին տեղեկատվության բացակայությունը հարցականի տակ է դնում նոր միջոցառումների հասցեականությունը (որքան էլ լավ դրանք ձևակերպված լինեն):

Հակակոռուպցիոն նոր ռազմավարությունն, այս առումով, կրկնում է նախորդի սխալը: Նոր ռազմավարության գլխավոր նպատակ է սահմանված Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելը, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդումն ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանումը: Նշված է նաև, որ Ռազմավարությունն օգնելու է պետական կառավարման կառույցներին փոխելու իրենց ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մշակույթը: Բացի այդ՝ Ռազմավարությունն ուղղված է կոռուպցիայի մակարդակի և տարածվածության նվազեցմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման ընթացքում հանրության աջակցության ընդլայնմանը, կոռուպցիայի կանխարգելման առավել արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը: Թեև դրված խնդիրները դրական են, սակայն պարզ չէ, թե ինչպես է չափվելու դրանց կատարումը, որոնք են լինելու առաջընթացի գնահատման չափանիշները, ազգային կամ միջազգային ինչպիսի ցուցանիշներ են կիրառվելու, և այլն:

Որո՞նք են կոռուպցիոն ռիսկերը

Ռազմավարության 17-րդ կետում ընդգծված է ռիսկերի գնահատման կարևորությունը. «Հակակոռուպցիոն ռազմավարություն մշակելիս հիմնախնդիր է կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերումն ու դրանց հաղթահարման ուղիների փնտրտուքը, ***մինչդեռ ռիսկերը պետք է գնահատված լինեին նախքան միջոցառումների ծրագրի մշակումը***, ինչը որ չէր արվել հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը մշակելիս: Ծրագրի կենսագործման ընթացքում չի ապահովվել նոր կոռուպցիոն ռիսկերի և պատճառների ուսումնասիրության հիման վրա ծրագրում նախանշված միջոցառումների փոփոխումը կամ համալրումը»:

Նախորդ ռազմավարության վերաբերյալ այս դիտարկումը տեղին է, սակայն, որքան էլ տարօրինակ թվա, ***նույնքան վերաբերելի է հակակոռուպցիոն նոր ռազմավարությանը***: Նոր ռազմավարության շրջանակներում կատարված է կոռուպցիոն հիմնախնդիրների՝ բավական ընդհանրական և հաճախ մակերեսային նկարագրություն:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը խիստ թերի է, քանի որ բացակայում է դրանց առաջնահերթության, տարածվածության, հաճախականության, ազդեցության և այլ բնութագրիչների պատկերը:

Նոր ռազմավարության մեջ ընդամենը 4 ոլորտների ներառումը, թվում է, հետազոտական ռեսուրսների արդյունավետ օգտագործման լավ հնարավորություն է ընձեռում: Թիրախային

բնագավառների նման նեղացումը ռիսկերի բացահայտման լավ նախադրյալ է ստեղծում. ռեսուրսների կենտրոնացմամբ հնարավոր է իրականացնել առավել ֆոկուսացված և խորը ուսումնասիրություններ:

Ցավոք, նոր ռազմավարության մեջ ռիսկերի խորքային ուսումնասիրության այդ հնարավորությունը չի իրագործվել: Նախորդ ռազմավարության այս բացը չի շտկվել և շարունակություն է գտել նոր ծրագրում:

Հիմնախնդիրներ թե՛ նպատակներ

Ռազմավարության «Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները» հատվածի 62-րդ կետում նշված է՝ «... կրթության ոլորտում կոռուպցիայի բացահայտման, կանխարգելման ու հաղթահարման տեսանկյունից առկա հիմնախնդիրները հետևյալն են՝ ...»: Մինչդեռ հետագա շարադրանքի մեջ հիմնականում ոչ թե հիմնախնդիրներ, այլ՝ նպատակներ են նկարագրված: Օրինակ՝

- Կրթության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման անհրաժեշտություն,
- Հանրակրթության ոլորտի կադրային քաղաքականության վերանայման անհրաժեշտություն,
- Հանրակրթության ոլորտում դասագրքերի մշակման և գնումների իրականացման գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի վերհանման անհրաժեշտություն,
- Ավարտական քննությունների հետ կապված գործընթացների կանոնակարգման անհրաժեշտություն, կոռուպցիոն ռիսկերի վերհանում և բացառում,
- Դպրոցների վարկանիշավորման համակարգի ներդրման անհրաժեշտություն,
- Ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրման, կոռուպցիոն վարքագծի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորման և իրազեկվածության բարձրացման անհրաժեշտություն,
- Ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման անհրաժեշտություն,
- Կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգի իրականացման անհրաժեշտություն,
- ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն կարողությունների զարգացման անհրաժեշտություն:

Ձևակերպումների մեծ մասում արդեն իսկ նպատակադրում է առկա: Օրինակ՝ «Հանրակրթության ոլորտի կադրային քաղաքականության վերանայման անհրաժեշտություն» ձևակերպումը պատկերացում չի տալիս առկա հիմնախնդիրների մասին: Միանգամից, առանց հիմնախնդիրների նկարագրության, անցում է կատարվել նպատակին: Ճիշտ է, այդ նախադասությանը, մինևույն պարբերության մեջ, հետևում է հիմնախնդիրների համառոտ նկարագրությունը: Մակայն տրամաբանական կլինեք հակառակ հերթականությունը. սկզբում փաստերի շարադրանք, հետո՝ դրանց ամփոփում հանդիսացող հիմնախնդրի նկարագրությունը և միայն վերջում՝ որոշակի նպատակադրում:

Ակնհայտ է, որ սա պարզ տեխնիկական խնդիր չէ: Նման մոտեցումը խախտում է պլանավորման ամբողջ տրամաբանությունը: Երբ նպատակների ձևակերպման հարցում ցուցաբերվում է շտապողականություն, երբ դրանք «առաջ են ընկնում» հիմնախնդիրների շարադրանքից, տուժում է ծրագրի հիմնավորվածությունը: Երբ նպատակների վերաբերյալ պատկերացումները նախապես արտացոլվում են, առկա է վտանգ, որ հիմնախնդիրների հետագա շարադրանքը կհարմարեցվի դրանց: Ոչ թե նպատակը կբխի հիմնախնդիրներից, այլ՝ հակառակը՝ ընտրողական մոտեցմամբ կարտացոլվեն տվյալ նպատակի կարևորությունը հաստատող հիմնախնդիրները:

Ընդ որում, խնդիրների զգալի մասում պահպանված չէ շարադրանքի միասնական մոտեցումը: Որոշ նպատակներ հիմնավորվում են փաստերի/հիմնախնդիրների հետագա նկարագրությամբ, որոշները՝ ոչ: Օրինակ՝ «Դպրոցների վարկանիշավորման համակարգի ներդրման անհրաժեշտություն» կամ «Կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգի իրականացման անհրաժեշտություն» ձևակերպումներից հնարավոր չէ պատկերացում կազմել առկա կոռուպցիոն հիմնախնդիրների վերաբերյալ: Պարզ չէ, թե «դպրոցների վարկանիշավորման անհրաժեշտությունը» ինչ հիմնախնդիր է կամ ինչ թաքնված հիմնախնդիրներ է արտացոլում:

Հիմնախնդրի նկարագրությունը ենթադրում է որևէ հակասության կամ մտահոգության արտացոլում: Հակասություն կարող է լինել մարդկանց պահանջմունքների և դրանց բավարարման համար անհրաժեշտ պայմանների բացակայության/անբավարարության միջև, կամ՝ օրենքի պահանջների և դրանց կատարման համար անհրաժեշտ պայմանների բացակայության/անբավարարության միջև, և այլն:

Այսպիսով, բերված ձևակերպումներում չենք տեսնում անհանգստություն առաջացնող որևէ իրավիճակ: Եթե նույնիսկ սրանք համարենք ոչ թե հիմնախնդիրներ, այլ նպատակներ (չնայած Ռազմավարության այդ հատվածում պահանջվում է հենց հիմնախնդիրների նկարագրություն), միննույն է՝ դրանք ամրապնդված չեն փաստերի շարադրանքով, որևէ կերպ հիմնավորված չեն:

Կրթական այլ մակարդակների «անտեսումը»

Ռազմավարության «Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները» հատվածում ոչ բավարար և մակերեսային անդրադարձ է կատարված բարձրագույն կրթության համակարգին: Մատնանշված են միայն երկու խնդիր՝ 1. գործադիրի միջամտությունը բուհերի կառավարմանը, ինչը հանգեցնում է բուհերի ինքնակառավարման բացակայությանը և 2. բուհերում մասնագիտական կրթության որակի ապահովման մեխանիզմների ոչ մասնակցային և ոչ թափանցիկ կիրառումը: Ընդ որում, ինչպես վերը նշել ենք, բացահայտված չէ այս խնդիրների կոռուպցիոն բնույթը կամ ենթատեքստը:

Նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև՝ հետբուհական կրթության կոռուպցիոն խնդիրներն արտացոլված չեն Ռազմավարության մեջ:

Կրթության կառավարման և վերահսկողական լիազորություններ ունեցող մարմիններում՝ ԿԳՆ-ում, Կրթության պետական տեսչությունում, ՈԱԱԿ-ում, Լիցենզավորման գործակալությունում և այլ կառույցներում առկա կոռուպցիոն խնդիրները Ռազմավարության մեջ քննարկված չեն: Մինչդեռ ակնհայտ է, որ կառավարման գործառույթներ իրականացնող, հսկողության և վերահսկողության լիազորություններ ունեցող, տարատեսակ «պատիժների» կիրառման իրավասություն ունեցող ցանկացած կառույցում նման ռիսկեր կան:

Տեսչական լիազորություններ ունեցող ցանկացած կառույցում (անկախ բնագավառից) կոռուպցիոն ռիսկերը բազմաթիվ են: Ընդ որում, եթե, օրինակ, հարկային տեսչության մարմիններում կոռուպցիոն խնդիրները գտնվում են հանրության և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում (հետևաբար՝ դրանց վերաբերյալ որոշակի տեղեկատվություն է առկա), ապա Կրթության պետական տեսչության գործունեությունը պակաս հանրային ուշադրության է արժանանում: Այս մարմնում կոռուպցիոն երևույթները, ի տարբերություն, օրինակ, հարկային մարմինների, ավելի լատենտ (թաքնված) բնույթ են կրում: Իսկ ստվերայնությունը բերում է ռիսկերի ավելացման:

Ի վերջո, հարկավոր է հստակեցնել՝ Ռազմավարության մեջ կիրառվող «կրթության ոլորտ» հասկացությունը վերաբերելի է ամբողջ ոլորտին թե՛ միայն կրթական հաստատություններին: «Ոլորտ» հասկացությունը հուշում է, որ հարկավոր է համապարփակ մոտեցում կիրառել և ներառել ոլորտային բոլոր ենթահամակարգերը: Անհնար է արդյունավետ հակազդել կոռուպցիային՝ միայն կրթության **կազմակերպման** ենթահամակարգում (դպրոցներում, բուհերում և այլն), առանց կառավարման բարձր օղակներին անդրադառնալու:

Մինչդեռ Ռազմավարության նշված հատվածը գրեթե ամբողջությամբ նվիրված է հանրակրթության բնագավառին, որը բավական ընդգրկուն «կրթության ոլորտի» ենթահամակարգն է միայն:

Հիմնախնդիրների և միջոցառումների միջև կապի բացակայությունը

Ռազմավարության «Կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները» հատվածում նկարագրված միջոցառումները, թեև ընդհանուր առմամբ պահանջված են, սակայն հստակ չէ դրանց կապը նախորդ հատվածում («Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները») նկարագրված հիմնախնդիրների հետ: Հիմնախնդրի և միջոցառման միջև կապն ակնհայտ չէ, պարզ չէ, թե յուրաքանչյուր միջոցառում ինչ հիմնախնդիր է թիրախավորել:

Օրինակ, Ռազմավարության միջոցառումների շարքում նախատեսված է կրթական հաստատությունների աշխատակիցների համար սահմանել էթիկայի սկզբունքներ ու վարքագծի միասնական կանոններ, ձևավորել էթիկայի հանձնաժողովներ կամ՝ էթիկայի հարցով պատասխանատուներ: Նմանատիպ միջոցառումներ են նախատեսված նաև Միջոցառումների ծրագրի՝ կրթության ոլորտին վերաբերող հատվածում: Միգուցե, մանկավարժների էթիկայի սկզբունքների մշակումը բարերար ազդեցություն ունենա բարեխիղճ վարքագծի խթանման համար:

Սակայն այս միջոցառման անհրաժեշտությունը հիմնավորված չէ Ռազմավարության համապատասխան հատվածներում: Պարզ չէ, թե նկարագրված կամ ենթադրյալ կոռուպցիոն ռիսկերից որոնց այն պետք է արձագանքի: Պարզ չէ, թե մինչ այս պահը մանկավարժների էթիկայի ամրագրված կանոնների բացակայությունը կոնկրետ ինչ կոռուպցիոն խնդիրների է հանգեցրել: Կամ՝ արդյոք որևէ X կոռուպցիոն հիմնախնդրի պատճառների շարքում էթիկայի կանոնների բացակայությունն այն առաջնահերթությունն ունի, որ դրան ուղղված հատուկ միջոցառում նախատեսվի: Լիարժեք վերլուծությունը միգուցե բացահայտեր այդ X խնդրի պատճառների միանգամայն այլ աստիճանակարգություն:

Դիտարկենք մեկ այլ օրինակ. միջոցառումներից մեկը նախատեսում է «կրթության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում»: Իհարկե, կառավարման արդյունավետ համակարգի ձգտելն ինքնին դրական նպատակ է: Սակայն պարզ չէ, թե այս նպատակի հիմքում ընկած ենթադրյալ հիմնախնդիրը՝ «համակարգի ոչ արդյունավետությունը» ինչ կապ ունի կոռուպցիայի հետ: Այս վերլուծության «Կոռուպցիա և ոչ կոռուպցիա» հատվածում մենք արդեն անդրադարձել ենք կոռուպցիայի և այլ խնդիրների տարանջատման հարցին: Նախքան նման նպատակադրումը, հարկավոր է ցույց տալ, թե կառավարման համակարգի ոչ արդյունավետությունը ինչպիսի կոռուպցիոն խնդիրների հետևանք է և իր հերթին՝ ինչպիսի կոռուպցիոն խնդիրներ է ծնում: Տեսականորեն բացառված չէ, որ համակարգի ոչ արդյունավետության հիմքում միանգամայն այլ հիմնախնդիրներ են ընկած՝ իրավական, գիտելիքի և կարողությունների, վստահության, և այլն:

Այսպիսով, առանձին միջոցառումների բովանդակությունը դժվար է դրական կամ բացասական գնահատականի արժանացնել, քանի որ հիմնավորված չէ դրանց կապը կոռուպցիոն խնդիրների հետ: Կոնկրետ միջոցառման կապը կոնկրետ հիմնախնդրի հետ թեական է, ենթադրելի, սակայն ոչ հստակ սահմանված: Միգուցե, որոշ միջոցառումների իրագործումը իսկապես դրական արդյունքների հանգեցնի: Սակայն կոռուպցիայի վրա դրանց ազդեցությունը առավելապես պատահական բնույթ կունենա, չի հանդիսանա նպատակադիր պլանավորման օրինաչափ արդյունք:

Որպես հետևանք՝ թե՛ հիմնախնդիրների նկարագրությունը, թե՛ Ռազմավարության այլ հատվածների բովանդակությունը դառնում է ինքնանպատակ. դրանք չեն շաղկապվում միմյանց հետ:

Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրին հատուկ խնդիրները

Ինչպես տեսանք, Ռազմավարության մեջ ներկայացված հիմնախնդիրների և դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումների միջև կապը հիմնականում բացակայում է:

Միջոցառումների ծրագրում ևս այս խնդիրն ակնառու է: Միջոցառումների զգալի մասը թիրախավորում է հիմնախնդիրներ, որոնք ընդհանրապես ներկայացված չեն Ռազմավարության մեջ:

Իսկ միջոցառումների մյուս մասի պարագայում պարզ չէ, թե.

- որն է թիրախավորված հիմնախնդիրը (հիմնախնդիրը ենթադրելի է, բայց հստակ ձևակերպված չէ),
- ինչ կապ ունի ենթադրյալ հիմնախնդիրը՝ կոռուպցիայի հետ (պարզ ասած, արդյո՞ք այն հենց կոռուպցիոն հիմնախնդիր է):

Օրինակ, Միջոցառումների ծրագրի 37-րդ միջոցառման ձևակերպումը (Եվրախորհրդի աջակցությամբ բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում) ընթերցողի մոտ հստակ պատկերացում չի ձևավորում, նախ՝ ընտրված հիմնախնդրի, այնուհետև՝ դրա կոռուպցիոն բնույթի վերաբերյալ:

Ենթադրյալ հիմնախնդիրը, կարծես թե, ՀՀ բուհերի ներկայումս գործող ֆինանսավորման ոչ արդյունավետ համակարգն է: Սակայն պարզ չէ, թե այդ համակարգի ոչ արդյունավետությունն ինչ կապի մեջ է գտնվում կոռուպցիոն խնդիրների հետ: Օրինակ՝ ոչ արդյունավետությունը հետևանք է ֆինանսական միջոցների ոչ ճիշտ տեղաբաշխման կամ թերի պլանավորման, թե՛ առավելապես կոռուպցիոն չարաշահումների արդյունք է: Կամ՝ ո՞րն է այս միջոցառման ակնկալվող ազդեցությունը. պարզապես ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը թե՛ արդյունավետ ֆինանսավորման համակարգի գործառության շնորհիվ՝ կոռուպցիոն ինչ-ինչ երևույթների չեզոքացումը (չարաշահումներ, միջոցների վատնում կամ յուրացում, այլ):

Նույն խնդիրն է առկա նաև 39-րդ միջոցառման («ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016-2020թթ. հաղորդակցության ռազմավարության» մշակում) պարագայում: Կրկին՝ պարզ չէ այս միջոցառման համար հիմք հանդիսացող հիմնախնդիրը և, առավել ևս, դրա առնչությունը կոռուպցիայի հետ: Եթե ենթադրյալ հիմնախնդիրը կրթության ոլորտում ոչ արդյունավետ հաղորդակցությունն է, ապա պարզ չէ, թե.

- Կոռուպցիոն որ դրսևորումներն են ոչ արդյունավետ հաղորդակցության պատճառ հանդիսանում (եթե այդպիսիք կան),
- Հաղորդակցության նոր ռազմավարության կիրարկման դեպքում կոռուպցիոն ինչ խնդիրներ կարող են հաղթահարվել:

48-րդ միջոցառմամբ նախատեսվող ՀՀ ԿԳՆ պաշտոնական նոր կայքէջի շահագործումը թեև ինքնին դրական, սակայն կոռուպցիայի հետ ուղղակի կապ չունեցող խնդիր է: Ենթադրությունը, որ կայքի շահագործումը կնպաստի նախարարության գործունեության առավելագույն թափանցիկությանը, իսկ դա կոռուպցիայի դեմ պայքարի դրական նախադրյալ է, թողնված է ընթերցողի կռահմանը:

Վերը նկարագրված խնդիրները (հիմնախնդրի ոչ հստակ ձևակերպում կամ բացակայություն, կոռուպցիոն երևույթների հետ միջոցառումների առնչության բացակայություն) առկա են միջոցառումների մեծ մասում. 41-րդ, 42-րդ, 46-րդ, 49-րդ և այլ միջոցառումներում ևս:

Որոշ միջոցառումների ձևակերպումները բավական անորոշ են, հետևաբար՝ դժվար գնահատելի է դրանց կատարումը: Օրինակ՝ 46-րդ միջոցառումը ենթադրում է ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարում: Միջոցառման ձևակերպումը (առնվազն) պետք է մոտավոր պատկերացում ձևավորի հնարավոր կոռուպցիոն հիմնախնդրի մասին: Մինչդեռ նշված

միջոցառումը չի պարունակում փոփոխությունների նպատակը, ուղղությունը կամ բովանդակությունը:

Խորհրդի ընտրության կարգում ցանկացած փոփոխություն (անգամ՝ տեխնիկական բնույթի կամ կոռուպցիայի կանխարգելման հետ կապ չունեցող) կարող է այս միջոցառումնը համահունչ դիտարկվել:

Միջոցառումների ծրագրի՝ Կրթության ոլորտի հատվածում ցանկալի է իրականացնել միջոցառումների խմբավորում՝ ըստ բովանդակության: Օրինակ, 39-րդ և 42-րդ միջոցառումների բովանդակությունը բավական մոտ է: Ուստի դրանք ցանկալի է շարել հերթականությամբ՝ մեկը մյուսից հետո:

Բացի այդ՝ միջոցառումները կարելի է խմբավորել որոշակի վերնագրերի ներքո: Վերը նշված (39, 42) միջոցառումները կարելի է, օրինակ, «Հաղորդակցություն/հանրային կապեր» խմբին դասել:

Բովանդակությամբ բավական մոտ են նաև 37-րդ, 47-րդ և 50-րդ միջոցառումները, որոնք հնարավոր է խմբավորել «Ֆինանսավորում և վերահսկողություն» խմբում:

Ցանկալի է փոփոխել ևս մեկ միջոցառման տեղը: 53-րդ միջոցառումը (Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերը բացահայտելու նպատակով սոցիոլոգիական հարցումների/հետազոտությունների իրականացում և արդյունքների հրապարակում) նախավերջինն է կրթության ոլորտին առնչվող միջոցառումների շարքում: Մինչդեռ, ըստ բովանդակության, այն պետք է լիներ առաջիններից մեկը: Կարծում ենք, նպատակահարմար է սկզբում ներկայացնել այն միջոցառումները, որոնք ուղղված են խնդիրների բացահայտմանն ու վերլուծությանը, հետո՝ անցնել դրանց հաղթահարման գործողությունների թվարկմանը:

Հակակոռուպցիոն նախորդ ռազմավարություններում ևս նմանատիպ միջոցառումներ (կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ուղղված հետազոտություններ) նախատեսված են եղել: Սակայն այս ուղղությամբ առաջընթաց արձանագրված չէ, ենթադրյալ հետազոտությունների արդյունքները հանրային տարածում չեն գտել և ներկայացված չեն Ռազմավարության մեջ:

Որպեսզի այս միջոցառումը առաջիկա տարիներին էլ չմնա թղթի վրա, հարկավոր է համալիր գործողություններ ամրագրել. ո՞ր կառույցների կողմից և ի՞նչ պարբերականությամբ պետք է իրականացվեն այդ հետազոտությունները, ինչպե՞ս է ապահովվելու հետազոտությունների անկախությունն ու անկողմնակալությունը, ինչպե՞ս են օգտագործվելու հետազոտության արդյունքները հակակոռուպցիոն ծրագրերում:

Կարծում ենք՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը, որպես միջոցառում, կարիք չկա ընդգրկելու Միջոցառումների ծրագրի մեջ: Այն *նախապես իրագործված պետք է լինի*՝ նախքան միջոցառումների ծրագիր, և նույնիսկ՝ հակակոռուպցիոն հայեցակարգ և ռազմավարություն մշակելը:

Այլապես անհաղթահարելի հակասություն է առաջ գալիս. միջոցառումները մշակվում են առանց կոռուպցիոն ռիսկերի բացահայտման: Մտացվում է, որ առաջարկվող միջոցառումները ենթադրությունների, նախկին փորձի կամ պրակտիկայի վրա են հիմնվում, սակայն ոչ գիտականորեն հիմնավորված հետազոտությունների արդյունքների:

Սա առաջնահերթ լուծում պահանջող հայեցակարգային խնդիր է: Հետագա հակակոռուպցիոն հայեցակարգերում պետք է ամրագրել այն սկզբունքը, որ նախքան որևէ միջոցառման մշակումը՝ *պարտադիր է* ՀՀ-ում կոռուպցիայի թե՛ համալիր, թե՛ ոլորտային հետազոտությունների (քանակական ու որակական) անցկացումը: Նման հետազոտությունների բացակայությունը կասկածի տակ է դնում պետական հակակոռուպցիոն քաղաքականության և ծախսերի արդյունավետությունը:

Նույնքան, որքան մեկանգամյա հետազոտությունները, կարևոր է նաև մոնիթորինգի համակարգի գործարկումը: Ցանկացած հետազոտություն, որքան էլ ընդգրկուն ու որակյալ լինի,

պատկերացում է տալիս ժամանակի որոշակի պահին առկա խնդիրների վերաբերյալ: Անհրաժեշտ է մոնիթորինգի համակարգի գործարկում խնդիրների հաղթահարման գործընթացն անընդհատ դիտարկման ներքո պահելու համար:

Վերջապես, հակակոռուպցիոն ծրագրերը պետք է մասնակցային ձևաչափով մշակվեն: Մինչ այժմ իրականացված ծրագրերը մշակվել և իրականացվել են կառավարման մարմինների կողմից միակողմանի (վերևից՝ ներքև) վարչահրամայական եղանակով:

Այս խնդիրը բնորոշ է ոչ միայն հակակոռուպցիոն պայքարի ռազմավարությանը: Նույն հիմնախնդիրն է առկա նաև որակի ապահովման և կրթության այլ բարեփոխումների մշակման և իրականացման գործընթացում: Դրանք «... մշակվում և իրականացվում են բյուրոկրատաբար և վերևից-ներքև սկզբունքով, ինչի արդյունքում դրանք կասկածանքով, իսկ երբեմն նաև ակնհայտ թշնամությամբ են ընդունվում դասախոսների և ուսանողների կողմից: Ավելին, գործընթացի ուղղաձիգ և բյուրոկրատական բնույթը, ինչպես նաև բաց երկխոսության և խորհրդակցությունների բացակայությունը, շատ են դժվարեցնում այն մարդկանց գործը, ովքեր պետք է կյանքի կոչեն ռեֆորմները առանց հասկանալու դրանց էությունն ու նպատակը»⁶⁶:

Մինչդեռ դպրոցների մանկավարժական անձնակազմը, բուհերի դասախոսական կազմը և վարչական անձնակազմը ակտիվ մասնակցություն պետք է ունենան հակակոռուպցիոն միջոցառումների մշակման գործընթացում: Առաջին հայացքից այս մոտեցման մեջ առկա է շահերի բախում. հակակոռուպցիոն միջոցառումներ պետք է առաջարկեն այն անձինք, ովքեր ուղղակի կամ անուղղակի կարող են դրանց թիրախում հայտնվել:

Կոռուպցիոն վարքը, ինչպես վերը տեսանք, հաճախ վարքի այլ, օրինական ձևերի անհասանելիության հետևանք է, այլընտրանքների բացակայության արդյունք: Տարբեր հետազոտություններ վկայում են այն մասին, որ կոռուպցիոն գործարքում ներգրավված կողմերի գերակշիռ մեծամասնությունը գիտակցում է երևույթի բացասական, հակաօրինական ու հակաբարոյական բնույթը:

Ուստի հակակոռուպցիոն պայքարում անգամ կոռուպցիոն վարքագիծ դրսևորած անձանց ներգրավումը թույլ կտա ձեռք բերել դաշնակիցներ՝ երևույթը դիտարկելով որպես ընդհանուր խնդիր: Կոռուպցիոն վարքի կրողները որոշ դեպքերում դրա հաղթահարման առավել մեծ շահագրգռվածություն կարող են ունենալ (բնականաբար՝ այլընտրանքների ապահովման և նվազագույն կորուստների պարագայում): Բացի այդ, կոռուպցիոն վարքի պայմանների, դրդապատճառների ու օգուտների մասին առավել հավաստի տեղեկատվության կրողներ են հենց իրենք՝ այդ վարքի սուբյեկտները: Առաջնային մակարդակում հասկանալ կոռուպցիոն ռիսկերի պատճառները՝ նշանակում է գտնել հակազդեցության ավելի համապատասխան ուղիներ:

Հետազոտություններից մեկում նշված է նույնատիպ խնդրի մասին. «... բոլոնյան ռեֆորմները համակարգում շատերի կողմից ընկալվում են որպես բյուրոկրատական, վերևից-ներքև ընթացող գործընթաց, որը պարտադրում է կուրորեն ընդօրինակել ինչ-որ արտասահմանյան մեթոդներ: Արդյունքում, շատ քչերն են ընդունում բոլոնյան ռեֆորմները որպես իրենց շահերից բխող բարեփոխում: Այս հանգամանքն իր հերթին էապես փոքրացնում է ռեֆորմների բարենաջող ավարտի հավանականությունը: Բարձրագույն կրթության ոլորտի հիմնական դերակատարները, նույնիսկ բոլոնյան գաղափարների համակիրները, չեն ընկալում բոլոնյան գործընթացը որպես «իրենցը»»⁶⁷:

Մեր հետազոտության ընթացքում պարզվեց, որ վերոնշյալ խնդիրը նույնքան բնորոշ է նաև հակակոռուպցիոն միջոցառումների ընկալմանը: Նախ՝ հետազոտության մասնակիցների մեծ մասը պարզապես իրազեկված չէ կրթության ոլորտի ոչ նախկին, ոչ էլ նախատեսվող

⁶⁶ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Գենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջ 16:

⁶⁷ Նույն տեղում, էջ 17:

հակակոռուպցիոն միջոցառումների մասին: Հարցման մասնակից դասախոսների և անգամ վարչական աշխատողների զգալի մասը տեղյակ չէ անգամ իրենց բուհի կողմից ընդունված հակակոռուպցիոն ծրագրերի մասին:

Կցկտուր տեղեկությունների տիրապետելով անգամ՝ հետազոտության մասնակիցները չեն դիտարկում հակակոռուպցիոն միջոցառումները որպես իրենց անմիջական շահերից բխող գործողություններ: Հնարավոր շահի և հանրային օգուտի մասին պատկերացումը բավական անորոշ է, ոչ հստակ:

Որպես հետևանք, կրթության ոլորտի դերակատարները չեն կարողանում նույնականացնել իրենց դերն ու պատասխանատվությունը կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, ավելին օտարված են դրանից: Մասնակցության մոտիվացիան բավական ցածր մակարդակի է:

Հակակոռուպցիոն միջոցառումների՝ վերևից-ներքև սկզբունքով իրականացման պատճառներից մեկն էլ դրանց բաց քննարկման համար անհրաժեշտ հարթակների բացակայությունն է: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները՝ «Չկա մի որևէ ամբիոն կամ ֆորում, որտեղ ԲՈՒՀ-երի աշխատողները և շահագրգիռ այլ անձինք կարողանային միմյանց հետ կառուցողական մթնոլորտում բացեիբաց քննարկել բարձրագույն կրթության ոլորտում տիրող իրավիճակը և իրենց ամենօրյա մասնագիտական խնդիրները: Որպես կանոն, դասախոսները խուսափում են բաց և անկեղծ հայտարարություններ անելուց՝ վախենալով, որ իրենց նկատմամբ պատժամիջոցներ կկիրառվեն: Գրանցվել են դեպքեր, երբ դասախոսների աշխատանքային պայմանագրերը չեն երկարաձգվել, երբ նրանք բարձրաձայն իրենց մտահոգություններն են հայտնել կրթական համակարգում տիրող իրավիճակի վերաբերյալ: Ուսանողները նույնպես չունեն բանավեճի համապատասխան հարթակներ, ինչպես իրենց ԲՈՒՀ-երում, այնպես էլ՝ ազգային մակարդակով, իրենց կարծիքներն արտահայտելու և (կամ) իրենց հուզող հարցերը բարձրացնելու համար»⁶⁸:

Մա նշանակում է, որ Ռեզոլուցիայի կամ Միջոցառումների ծրագրով հարկավոր է նախատեսել նման կայուն հարթակի ձևավորման խնդիր: Ընդ որում, այս հարթակում իրականացվող քննարկումները տվյալների լավ աղբյուր կարող են հանդիսանալ մոնիթորինգի համար: Դրանց հետևելով՝ կարելի է հասկանալ, թե որքանով են միջոցառումները ծառայում վերջնական նպատակներին և արդյոք անմիջական շահառուներն իրենց կյանքում փոփոխություններ են արձանագրում:

Միջոցառումների ծրագրի 35-րդ միջոցառման վերաբերյալ հարցման մասնակից փորձագետները կարծիք են հայտնել, որ էթիկայի հանձնաժողովների ստեղծումը կարող է մանկավարժների նկատմամբ անհարկի ճնշման մեխանիզմ ընկալվել: Հատկապես այն պայմաններում, երբ ուսուցչի և դասախոսի հասարակական վարկը բավական ցածր է, այս մասնագիտությունների տեր անձինք առավել զգայուն են ցանկացած տիպի վերահսկողության նկատմամբ. «Դասախոսը, ուսուցիչը ցածր աշխատավարձով, սոցիալական ցածր դիրք ունեցող մարդիկ են: Էթիկայի կանոնները հերթական ձևական բանն է լինելու: Մտանց այդ էլ դասախոսի դիրքը խաթարված է: Պետք է իր դիրքը բարձրացնել, արժանապատվությունն ապահովել, ոչ թե սեղմել: Ինչքան սեղմենք՝ ինքը չարանալու է: Մարդ կրթողը ինչ-որ մեկի վերահսկողության տակ չպետք է լինի»:

Իսկ 36-րդ միջոցառման վերաբերյալ հնչել է տեսակետ, որ բուհերում առաջին հերթին էթիկայի կանոններ պետք է մշակվեն բուհերի ղեկավարության, վարչական գործառույթներ ունեցող աշխատակազմի համար: Դասավանդողների համար էթիկայի մշակումը՝ որպես առաջին քայլ

⁶⁸ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/OKhka6>, էջ 21:

կարող է անհարկի լարվածությունն առաջ բերել: Միայն ղեկավար կազմի համար մշակվելուց և ներդրվելուց հետո է ցանկալի մտածել դասավանդողների էթիկայի մշակման մասին:

Ընդ որում, էթիկայի կանոններն ու դրանց կատարումը վերահսկող մարմինների գործունեությունն իր հերթին կոռուպցիոն նոր ռիսկեր առաջացնող գործոն է, որին հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել: Այդ նորաստեղծ հանձնաժողովներն իրենք կարող են անցանկալի անձանց ճնշման ու կաշառակերության (այսինքն՝ կոռուպցիայի) գործիքներ դառնալ:

43-րդ միջոցառման ակնկալվող արդյունքը (Կրթության ոլորտում կոռուպցիոն իրավախախտումների բնույթը հստակեցվել է և դրանք բացառելու նպատակով օրենսդրության մեջ առկա բացերը շտկվել են) ավելի լայն է ու տարողունակ, քան բուն միջոցառումը (Կրթության ոլորտին առնչվող կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն): Ակնհայտ է, որ արդյունքի մեջ մատնանշված *օրենսդրական բացերի շտկումը* հիմնական ու կարևոր նպատակ է, ուստի այն հարկավոր է ներառել միջոցառման բովանդակության մեջ: Այլապես՝ միջոցառումը ներկա ձևակերպմամբ ունի միայն վերլուծության նպատակ:

44-րդ միջոցառմամբ նախատեսված է կրթության ոլորտում *գործող* իրավական ակտերի վերանայում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից: Ցանկալի է այս միջոցառման մեջ նախատեսել նաև կրթության ոլորտին առնչվող իրավական նախագծերի՝ կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից պարտադիր փորձաքննության կարգ: Ակնհայտ է, որ իրավական ակտի ընդունման փուլում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելումն ավելի արդյունավետ է, քան՝ հետագայում արդեն գործող ակտերի վերանայումը: Ընդ որում, այդ կարգը կարող է վերաբերել ոչ միայն օրենքների նախագծերին, այլև՝ ԿԳ նախարարի որոշումներին ու հրամաններին, ԿԳՆ համակարգում ընդունվող տարատեսակ իրավական ակտերին:

45-րդ միջոցառմամբ (Կրթության կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրում և կրթության ոլորտի տվյալների բազայի հասանելիության ապահովում) նախատեսված գործողությունների ու ակնկալվող արդյունքների զգալի մասն արդեն ապահովված է ԿԳՆ «Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագրի» 9-րդ միջոցառման իրականացման շնորհիվ: Ծրագրի միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ ԿԳՆ 2014թ. տեղեկանքից պարզ է դառնում, որ կառավարման տեղեկատվական համակարգը տեղադրված է և անգամ վերապատրաստումներ են տեղի ունեցել տարբեր օղակների ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար՝ ծրագիրն արդյունավետ օգտագործելու նպատակով:

Ուստի հարկավոր է վերանայել 45-րդ միջոցառման ձևակերպումը՝ շեշտադրելով ոչ թե համակարգի ներդրումը, այլ՝ դրա ծառայեցումը կոնկրետ կոռուպցիոն խնդիրների հաղթահարմանը:

Նույն խնդիրն է առկա 51-րդ միջոցառման պարագայում (Հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում): ՀՀ ԿԳՆ կայքի «Հակակոռուպցիոն ծրագրեր» հատվածում կանոնավոր կերպով հրապարակվում են հակակոռուպցիոն միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունները (ինչը նախատեսված է 51-րդ միջոցառման ակնկալվող արդյունքով):

Հետևաբար, հարկավոր է խմբագրել միջոցառումը՝ շեշտադրելով ոչ թե հաշվետվությունների հրապարակումը (ինչն իրականացվում է), այլ, օրինակ, դրանց առավել ակտիվ տարածումն ու քննարկումը: Կամ՝ հնարավոր է շեշտադրել հակակոռուպցիոն հաշվետվությունների ներկայացման առավել հանրամատչելի ու գրավիչ ձևերի կիրառումը (օրինակ՝ սոցիալական ցանցերի միջոցով, փոքր հոդվածների և ակնարկների ձևով, և այլն):

48-րդ և 49-րդ միջոցառումները (ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական նոր կայքէջի շահագործում և ՀՀ ԿԳՆ պաշտոնական նոր կայքէջում հանրությանը տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման նոր գործիքների ներդրում) առավելապես օժանդակ բնույթի միջոցներ են, քան ինքնուրույն միջոցառումներ: Ի տարբերություն այլ, առավել ընդգրկուն միջոցառումների, սրանք միայն տեխնիկական լուծումներ են պարունակում: Հետևաբար, դրանց բովանդակությունը համադրելի չէ այլ միջոցառումների բովանդակության հետ:

Սրանք երկրորդ մակարդակի լրացուցիչ գործողություններ են՝ նպաստող որևէ այլ միջոցառման կամ միջոցառումների խմբի արդյունավետ իրականացմանը: Օրինակ, վերոնշյալ միջոցառումները կարող են դիտարկվել որպես 39-րդ միջոցառման («ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016-2020թթ. հաղորդակցության ռազմավարության» մշակում) գործողություններ կամ խնդիրներ: Այսպիսի վերախմբավորման համար անհրաժեշտ է 39-րդ միջոցառման մասնակի խմբագրում, օրինակ՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016-2020թթ. հաղորդակցության ռազմավարության» մշակում **և կիրարկում:**

Առաջարկվող նոր խմբագրման պարագայում 39-րդ միջոցառման գործողություններ կարող են դառնալ նաև 51-րդ և 52-րդ միջոցառումները: Դրանցով նախատեսված է հաշվետվությունների հրապարակում, տեղեկատվական նյութերի և ուղեցույցերի հրատարակում, ինչը ևս կարող է դիտվել որպես հաղորդակցության ռազմավարության իրագործման մի ուղղություն:

Միջոցառումների ակնկալվող արդյունքների ձևակերպումն ավելի շատ նման է միջոցառման կատարումը գնահատող ցուցանիշների: Օրինակ՝ 34-րդ միջոցառման (Մանկավարժների էթիկայի կանոնների մշակում և հաստատում) ակնկալվող արդյունքներն են.

- 2015թ. համար՝ «Մանկավարժների էթիկայի կանոնները մշակված և հաստատված են»,
- 2016-2018թթ. համար՝ «Մանկավարժների էթիկայի կանոնները ներդրված են»:

Նմանատիպ ձևակերպումներ են առկա նաև հաջորդ՝ 35-րդ և 36-րդ միջոցառումների ակնկալվող դեպքում՝ «բուհերում էթիկայի կանոնների ներդրում», «էթիկայի հանձնաժողովների գործունեություն», և այլն:

Ակնկալվող արդյունքների նման ձևակերպումը թույլ կտա գնահատել միայն միջոցառման ***կատարման փաստը***, սակայն ոչ՝ մանկավարժների վարքի կամ կոռուպցիոն երևույթների վրա դրա ունեցած ***ազդեցությունը***: Սա միջոցառումների ամբողջ ծրագրին բնորոշ խնդիր է:

Ի տարբերություն շոշափելի կամ քանակապես արտահայտելի արդյունքների, ծրագրի ազդեցությունը մարդկանց վարքի և դիրքորոշումների վրա՝ տևական և խորքային գործընթաց է: Այնուամենայնիվ, ներդրված էթիկայի կանոնների գործողության 3 տարին բավարար ժամանակահատված է՝ դրանց ազդեցության գնահատման համար: 2017 կամ 2018 թվականների համար միանգամայն իրատեսական է ձևակերպել որոշակի ազդեցության ակնկալիքներ:

Օրինակ, քննարկվող միջոցառման համար ակնկալվող ազդեցության ձևակերպումը կարող էր հետևյալը լինել. «2018թ. ավարտին դասավանդողների գերակշիռ մասն իրազեկված է էթիկայի կանոնների վերաբերյալ և կիրառում է դրանք ամենօրյա գործունեության ընթացքում, էթիկայի կանոնների շնորհիվ լուծում են գտնում տարատեսակ խնդիրներ (ցանկալի է տալ խնդիրների մոտավոր նկարագրությունը), էթիկայի հանձնաժողովների գործունեության շնորհիվ վերականգնվում են աշակերտների/ուսանողների ոտնահարված իրավունքները, և այլն»:

Այսպիսով, Միջոցառումների ծրագրում ազդեցության գնահատման ցուցանիշների ներառումը պահանջված ու կարևոր է: Առանց այդ վերջնարդյունքների, միջոցառումների կատարումը ինքնանպատակ բնույթ է ստանում: Կարևորվում է գործողության կատարման փաստը, սակայն ոչ՝ դրա իրական ազդեցությունը մարդկանց կյանքի որակի, մարդկային զարգացման, իրավունքների ու շահերի պաշտպանության վրա:

ԿԳՆ և բուհական հակակոռուպցիոն ծրագրերը

Թեև ԿԳՆ և բուհական հակակոռուպցիոն ծրագրերի վերլուծությունն այս հետազոտության խնդիրը չէ, սակայն համառոտ անդրադառնանք նաև դրանց՝ պատկերն ամբողջացնելու համար:

Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի՝ վերը քննարկված խնդիրների մեծ մասը հատուկ է նաև ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերին: Այս ծրագրերում նույնպես կոռուպցիոն ռիսկերի ու հիմնախնդիրների նկարագրությունը բացակայում է, ազդեցության գնահատման որևէ ցուցիչ նախատեսված չէ: Սակայն ծրագրերի գլխավոր թերությունն այն է, որ ապահովված չէ հստակ կապը՝ առաջարկվող միջոցառման և կոռուպցիային հակազդեցության միջև:

Միջոցառումների զգալի մասը կրթության համակարգի ընդհանուր զարգացմանն է միտված: Եթե փաստաթղթի անվանման մեջ «կոռուպցիոն երևույթների դեմ պայքար» բառակապակցությունը փոխարինենք «զարգացում» բառով, այդ նոր վերնագիրը միզուցե ավելի համահունչ լինի բովանդակությունը: Միջոցառումների մի քանի օրինակ նշենք ԿԳՆ վերջին՝ 2013-2014թթ. հակակոռուպցիոն ծրագրից.

- «Երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցման համար օրենսդրական հիմքի ստեղծում»,
- «Բուհերում որակի ապահովման ներքին համակարգերի ներդրում»,
- «Գիտական կադրերի պատրաստման համակարգի կատարելագործում», և այլն:

Այս և նմանատիպ այլ միջոցառումներն ինքնին դրական են, քանի որ միտված են կրթության որակի բարելավմանը, կրթական համակարգի արդյունավետության բարձրացմանը: Սակայն դրանց ակնկալվող ազդեցությունը կոռուպցիոն ռիսկերի մակարդակի վրա խիստ անորոշ է:

Նույնը վերաբերում է նաև միջոցառումների ակնկալվող արդյունքներին, օրինակ՝

- «ավագ դպրոցներում փորձնական ներդրված է կրեդիտային համակարգ»,
- «ներդրված են հանրակրթությունից դուրս մնացող երեխաների կրթության մեջ ներգրավման նոր մեխանիզմներ»,
- «ներդրված է լավագույն ուսանողի անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը, ընտրված լավագույն ուսանողներին տրամադրվել են անվանական կրթաթոշակներ»,
- «մշակված են գյուղական թերհամալրված 370 հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմներ», և այլն:

Կրկին՝ կոռուպցիոն խնդիրների հետ նույնիսկ անուղղակի կապը բացահայտված չէ: Անգամ այն միջոցառումներում, որտեղ կիրառվում է «կոռուպցիոն» հասկացությունը (օրինակ՝ «Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում քոլեջից բուհ անցման գործընթացում»), պարզաբանված չէ դրա բովանդակությունը:

Համացանցում հասանելի ծրագրերից մի քանիսի՝ ԵՊՀ-ի, Պետական լեզվաբանական համալսարանի և Պետական մանկավարժական համալսարանի հակակոռուպցիոն ծրագրերի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ դրանց հատուկ են վերը նշված գրեթե բոլոր խնդիրները: Այս ծրագրերի գլխավոր թերությունը կոռուպցիայի վերաբերյալ ամբողջական, հայեցակարգային մոտեցման բացակայությունն է: «Կոռուպցիոն ռիսկեր», «կոռուպցիոն երևույթներ», «հակակոռուպցիոն միջոցառումներ» և կիրառված այլ հասկացությունները գուրկ են հստակ բովանդակությունից: Որպես հետևանք, ձևակերպումները բավական անորոշ են և վերացարկված՝ իրական խնդիրներից:

«Հակակոռուպցիոն պայքար»-ը դարձել է հաճախ կիրառվող և մոդայիկ, հիմնականում՝ արտաքին ազդեցությամբ (Կառավարություն, ԿԳՆ, միջազգային գործընկերներ) ներդրված մի հայեցակետ, որի անհրաժեշտության ընկալումն ու թիրախները դեռ բավական մշուշոտ են:

Ապահովված չէ թե՛ ԿԳՆ, թե՛ առանձին բուհերի հակակոռուպցիոն միջոցառումների կապը Կառավարության կողմից հաստատված հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների ծրագրի հետ: Այս օղակների հակակոռուպցիոն ծրագրերը պետք է մշակվեն որպես միասնական համակարգի փոխկապակցված և փոխհամաձայնեցված տարրեր:

Եզրահանգումներ

- Այս հետազոտության մեկնակետն այն համոզումն է, որ առանձին ոլորտում հակակոռուպցիոն պայքարի հաջողությունը պայմանավորված է տվյալ ոլորտի ինստիտուցիոնալ և մշակութային առանձնահատկությունների, կոռուպցիոն վարքի մոդելների և նորմերի իմացությամբ: Մինչ այժմ պետական հակակոռուպցիոն ծրագրերում անհրաժեշտ չափով չի պահպանվել մասնագիտացվածության պահանջը: Կոռուպցիոն հիմնախնդիրների նկարագրությունը դրանցում բավական լայն է և ոչ հստակ, իսկ առաջարկվող լուծումներում արտացոլված չեն եղել տվյալ բնագավառի առանձնահատկությունները:

- Կոռուպցիոն գործողությունը (իսկ էթե այն կայուն ու կրկնվող բնույթ ունի՝ կոռուպցիոն վարքը) նպատակադիր, հետևաբար՝ գիտակցված բնույթ ունի: Որևէ երևույթի «կոռուպցիոն» բնորոշումը տալուց առաջ հարկավոր է համոզվել դրանում ներգրավված անձանց նպատակադիր վարքի մեջ: Կոռուպցիոն գործողության սուբյեկտը գիտակցում է և միտված է դեպի ակնկալվող օգուտը: Հնարավոր չարաշահման վերաբերյալ նույնպես որոշակի պատկերացում պետք է լինի, որպեսզի գործողությունը համարենք կոռուպցիոն:

- Հանրային քննարկումներում և անգամ պետական հակակոռուպցիոն ծրագրերում հաճախ բացակայում է կոռուպցիոն վարքի հստակ տարանջատումը իրավախախտ կամ շեղվող վարքի այլ տեսակներից: Եթե հնարավոր չէ անձի վարքի մեջ բացահայտել նպատակադիր գործողության (չարաշահման) և/կամ ակնկալվող օգուտի գիտակցումը, միգուցե տեղին է այդ վարքը բնութագրել որպես անբարեխիղճ պահվածք կամ արհեստավարժության բացակայություն, սակայն ոչ կոռուպցիա: Գործողության կոռուպցիոն բնույթը բացահայտելու համար հարկավոր է հասկանալ այն կատարող անձի մոտիվացիան, նրա վարքին ներկայացվող մշակութային և ինստիտուցիոնալ պահանջները, մյուս ակտորների նպատակները, միջավայրային այլ առանձնահատկությունները:

- Թե՛ Հայեցակարգում, թե՛ Ռազմավարության մեջ բացակայում է կոռուպցիա երևույթի և Հայաստանում դրա մշակութային առանձնահատկությունների վերլուծությունը: Սահմանված չէ անգամ «կոռուպցիա» հասկացությունը: Բացակայում է կոռուպցիոն գործողության հստակ տարանջատումը գործողության այլ տեսակներից: Որպես հետևանք, թե՛ Միջոցառումների ծրագրում, թե՛ ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերում կոռուպցիոն հիմնախնդիրները հստակ տարանջատված չեն կրթական այլ հիմնախնդիրներից: Նկարագրված խնդիրների կոռուպցիոն բնույթը ոչ միշտ է համոզիչ կերպով պատկերված:

- Հայաստանի կրթության ոլորտը, տարբեր տարիների հետազոտություններում, պարբերաբար հայտնվում է առավել կոռումպացված ոլորտների շարքում: Կրթության և գիտության ոլորտում հակակոռուպցիոն պայքարի և դրա արդյունավետության վերաբերյալ հանրային վստահությունը բավական ցածր մակարդակի վրա է: Մեծ թվով մարդիկ համարում են, որ պետական մարմինները կոռուպցիայի դեմ կամ չեն պայքարում, կամ ընդամենը ձևացնում են, թե պայքարում են: Լուրջ կասկած կա բացահայտված դեպքերի առնչությամբ պատժի անխուսափելիության հարցում:

- Տարբեր հետազոտությունների մասնակիցներ կոռուպցիան առաջնահերթ խնդիր են համարում՝ կրթության այլ հիմնախնդիրների շարքում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ կոռուպցիայի մակարդակի ընկալման առումով էական դրական առաջընթաց չի նկատվում: Այս փաստը կասկածի տակ է դնում վերջին տարիներին կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետությունը: Թե՛ Հայեցակարգում, թե՛ Ռազմավարության մեջ բացակայում են կրթության ոլորտում կոռուպցիայի քանակական ցուցանիշները: Տրված չէ այս ոլորտում կոռուպցիոն հիմնախնդիրների ակտուալության ու տարածվածության պատկերը (առնվազն՝ ըստ հասարակական կարծիքի):

- Այս հետազոտության մասնակիցների համար տեսանելի չեն կրթական համակարգում հակակոռուպցիոն պայքարի հիմնական մեխանիզմներն ու ձեռքբերումները: Հետազոտության մասնակիցների մեծ մասը պարզապես տեղյակ չէ կրթության ոլորտի ոչ նախկին, ոչ էլ նախատեսվող հակակոռուպցիոն միջոցառումների մասին: Կցկտուր տեղեկությունների տիրապետելով անգամ՝ հետազոտության մասնակիցները չեն դիտարկում հակակոռուպցիոն միջոցառումները որպես իրենց անմիջական շահերից բխող գործողություններ: Որպես հետևանք, կրթության ոլորտի

դերակատարները չեն կարողանում նույնականացնել իրենց դերն ու պատասխանատվությունը կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, ավելին՝ օտարված են դրանից: Մասնակցության մոտիվացիան բավական ցածր մակարդակի է:

- Մինչ այժմ կոռուպցիայի առանձին դեպքերը հիմնականում կաշառակերության բացահայտման հետ են կապված: Սակայն դրանք այդպես էլ չեն ներգծվում հակակոռուպցիոն պայքարի ամբողջական պատկերի մեջ: Պարզ չէ, թե առանձին դասախոսների պատիժն ինչ փոփոխություններ է խթանում ինստիտուցիոնալ մակարդակում: Արդյո՞ք այդ կոռուպցիոն գործողության կանխարգելման մեխանիզմներ են մշակվում թե՛ ակնկալվում է միայն վախի գործոնի ազդեցությունը. «մեկին պատժենք, մյուսները կվախենան»: Այն մասին, որ կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազումը մշակույթի փոփոխության հետևանք է, կասկած են հայտնում նաև ոլորտի պատասխանատուները՝ ընդունելով ճնշողական քաղաքականության և վախի գործոնի գերակա ազդեցությունը:

- Դպրոցների մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչները ևս հստակ պատկերացում չունեն կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերի ու մեխանիզմների մասին: Կրթության այս օղակում նույնպես հակակոռուպցիոն պայքարը նույնականացվում է իր ռեպրեսիվ դրսևորումներով: Դրանք են՝ կրթության պետական տեսչության ստուգումները, ինչպես նաև նախարարի հանձնարարականները, որոնք հիմնականում վերաբերում են դպրոցներում իրականացվող դրամահավաքին:

- Կոռուպցիայի դեմ հաջող պայքարը ենթադրում է բարձր օղակի պաշտոնատար անձանց վարքային մոդելների փոփոխություն: Տարատեսակ ծրագրերից ու միջոցառումներից թերևս ավելի ազդեցիկ է վարչական լծակներ ունեցողների անձնական օրինակը: Ցավոք, այս անձանց մեծամասնությունը, ըստ հարցվածների, շարունակում է գործել կոռուպցիոն մշակույթի նորմերին համապատասխան:

- Թեև կոռուպցիայի մասին ընդունված է խոսել բացասական բնորոշումներով, սակայն ակնհայտ է դրա գործառական նշանակությունը: Համակարգն աշխատում և իր խնդիրները լուծում է կոռուպցիայի միջոցով: Կոռուպցիոն վարքը հանդես է գալիս որպես խնդիրների լուծման առավել օպտիմալ, փորձված, արդյունավետ միջոց: Վտանգն այն է, որ կոռուպցիան ռացիոնալ է ոչ միայն առանձին անհատների, այլ՝ երբեմն նաև համակարգի շահերի տեսանկյունից: Ոչ միայն անհատն է կոռուպցիոն եղանակով ռացիոնալ լուծում տալիս իր խնդիրներին, այլև՝ համակարգը:

- Թե՛ Հայեցակարգի, թե՛ Ռազմավարության մեջ ամրագրված չէ այն հիմնախնդիրը, որ կոռուպցիան ՀՀ կրթության ոլորտում համակարգային բնույթ է կրում: Սա նշանակում է, որ կոռուպցիան կրթության համակարգի նկատմամբ ոչ թե դիպվածային կամ իրավիճակային, այլ՝ համակարգի թերի գործառությամբ (կամ՝ դիսֆունկցիաներով) և ինստիտուցիոնալ կոռուպցիոն մշակույթով պայմանավորված բնույթ ունի, կոռուպցիոն դրսևորումները՝ փոխկապակցված և մեկը մյուսին պայմանավորող, առկա են կրթական համակարգի բոլոր օղակներում, կոռուպցիան կրթության համակարգում պայմանավորված է հասարակական այլ համակարգերում (քաղաքական, տնտեսական, այլ) առկա կոռուպցիոն երևույթներով:

- Կոռուպցիայի դեմ պայքարը կարող է նպաստել կոռուպցիոն վարքի տարածմանն ու կոռուպցիոն վարքի նոր մոդելների ձևավորմանը: Հակակոռուպցիոն պայքարը դիսֆունկցիոնալ է այն առումով, որ համակարգին գրկում է հարցերը լուծելու փորձված եղանակից՝ փոխարենը ոչինչ չտալով: Բնականաբար, առաջացած բացը կարող է լրացվել ոչ օրինական վարքաձևերի ավելի ստվերային, կատարելագործված ու վտանգավոր տեսակներով:

- Կրթական համակարգում կոռուպցիային ինստիտուցիոնալ մշակույթի հատկանիշներ են բնորոշ, այն ունի իր յուրահատուկ լեզուն և ծեսերը, նորմերն ու վարքաձևերը: Կարիք չկա որոնելու խնդիրների լուծման բարդ ուղիներ, քանի որ ինստիտուցիոնալ մշակույթն առաջարկում է վարքի պատրաստի մոդելներ, նորմեր, ավանդույթներ: Այդ մշակույթը նաև բարոյական արդարացում է ապահովում կոռուպցիոն գործարքի մեջ ներգրավված անձանց համար և հասարակության մեջ կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք է ձևավորում: Կոռուպցիան դիտարկվում է որպես սոցիալական արդարության վերականգնման միջոց, յուրահատուկ փոխհատուցման մեխանիզմ: Այն նաև բարոյական փոխհատուցման մեխանիզմ է՝ դասախոսի/ուսուցչի ցածր սոցիալական կարգավիճակն ու խաթարված հեղինակությունը հավասարակշռող:

- Կոռուպցիոն մշակույթը խրախուսում ու ֆետիշացնում է «հարց լուծող» մարդու կերպարը: Նույնիսկ այն դեպքում, երբ հնարավոր է հարցը կարգավորել օրինական եղանակով, երբեմն նախապատվություն է տրվում կոռուպցիոն գործողությանը, քանի որ դա ճարպկության, ուժի, հեղինակության հավաստի վկայություն է: Կաշառք չվերցնող մարդը կոռուպցիոն միջավայրում կարող է համարվել հիմար և անկարող: Կոռուպցիոն մշակույթը լեգիտիմացնում է անօրինական պրակտիկաները և բարեխիղճ վարքն է, դրա համեմատ, դիտվում որպես շեղվող:

- Ռազմավարության նախագծի մեջ կրթության ոլորտին առնչվող կոռուպցիոն հիմնախնդիրների ցանկը խիստ սահմանափակ է, ոչ լիարժեք: Պարզ չէ, թե Ռազմավարության մեջ նկարագրված հիմնախնդիրներն ինչ հետազոտությամբ և ինչպես են վերհանվել: Փաստաթղթերի վերլուծությունն ու կրթության ոլորտում ներգրավված անձանց հետ հարցազրույցները թույլ են տալիս վերհանել կոռուպցիոն երևույթների առավել լայն շրջանակ: Եթե նույնիսկ այս պահին իրատեսական չէ ներկայացված հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ համալիր միջոցառումների մշակումը, կարևոր է դրանց ներառումը Ռազմավարության մեջ՝ որպես հետագա գործունեության ուղենիշերի:

- Թեև Ռազմավարության խնդիրները դրական են, սակայն պարզ չէ, թե ինչպես է չափվելու դրանց կատարումը, որոնք են լինելու առաջընթացի գնահատման չափանիշները, ազգային կամ միջազգային ինչպիսի ցուցանիշներ են կիրառվելու:

- Նույնիսկ եթե ելնենք այն կանխավարկածից, որ հակակոռուպցիոն նախկին միջոցառումներն իրականացվել են բարձր որակով, միննույն է՝ բաց է մնում դրանց վերջնական արդյունքի հասանելիության հարցը: Պարզ չէ՝ կրթության բնագավառի հետ առնչվող անձինք ինչպես և ինչ որակի փոփոխություններ են արձանագրել իրենց կյանքում, արդյոք կոռուպցիայի մակարդակը կամ տարածվածությունը կրճատվել է:

- Նոր ռազմավարության շրջանակներում կատարված է կոռուպցիոն հիմնախնդիրների՝ բավական ընդհանրական և հաճախ մակերեսային նկարագրություն: Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը խիստ թերի է, քանի որ բացակայում է դրանց առաջնահերթության, տարածվածության, հաճախականության, ազդեցության և այլ բնութագրիչների պատկերը: Նոր ռազմավարության մեջ ընդամենը 4 ոլորտների ներառումը, թվում է, հետազոտական ռեսուրսների արդյունավետ օգտագործման լավ հնարավորություն է ընձեռում: Թիրախային բնագավառների նման նեղացումը ռիսկերի բացահայտման լավ նախադրյալ է ստեղծում. ռեսուրսների կենտրոնացմամբ հնարավոր է իրականացնել առավել ֆոկուսացված և խորը ուսումնասիրություններ: Ցավոք, նոր ռազմավարության մեջ ռիսկերի խորքային ուսումնասիրության այդ հնարավորությունը չի իրագործվել: Նախորդ ռազմավարության այս բացը չի շտկվել և շարունակություն է գտել նոր ծրագրում:

- Ռազմավարության «Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները» հատվածում ոչ բավարար և մակերեսային անդրադարձ է կատարված բարձրագույն կրթության համակարգին: Մատնանշված են միայն երկու խնդիր: Ընդ որում, բացահայտված չէ այդ խնդիրների կոռուպցիոն բնույթը կամ ենթատեքստը:

- Նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև՝ հետբուհական կրթության կոռուպցիոն խնդիրներն արտացոլված չեն Ռազմավարության մեջ: Կրթության կառավարման և վերահսկողական լիազորություններ ունեցող մարմիններում՝ ԿԳՆ-ում, Կրթության պետական տեսչությունում, ՈԱԱԿ-ում, Լիցենզավորման գործակալությունում և այլ կառույցներում առկա կոռուպցիոն խնդիրները Ռազմավարության մեջ քննարկված չեն: Մինչդեռ ակնհայտ է, որ կառավարման գործառույթներ իրականացնող, հսկողության և վերահսկողության լիազորություններ ունեցող, տարատեսակ «պատիժների» կիրառման իրավասություն ունեցող ցանկացած կառույցում նման ռիսկեր կան:

- Հարկավոր է հստակեցնել՝ Ռազմավարության մեջ կիրառվող «կրթության ոլորտ» հասկացությունը վերաբերելի է ամբողջ ոլորտին թե՛ միայն կրթական հաստատություններին: «Ոլորտ» հասկացությունը հուշում է, որ հարկավոր է համապարփակ մոտեցում կիրառել և ներառել ոլորտային բոլոր ենթահամակարգերը: Անհնար է արդյունավետ հակազդել կոռուպցիային՝ միայն կրթության կազմակերպման ենթահամակարգում (դպրոցներում, բուհերում և այլն), առանց կառավարման բարձր օղակներին անդրադառնալու: Մինչդեռ Ռազմավարության նշված հատվածը գրեթե ամբողջությամբ նվիրված է հանրակրթության բնագավառին, որը բավական ընդգրկուն «կրթության ոլորտի» ենթահամակարգն է միայն:

- Ռազմավարության «Կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոցները և դրանց կենսագործմանն ուղղված միջոցառումները» հաստատում նկարագրված միջոցառումները, թեև ընդհանուր առմամբ պահանջված են, սակայն հստակ չէ դրանց կապը նախորդ հաստատում («Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները») նկարագրված հիմնախնդիրների հետ: Հիմնախնդրի և միջոցառման միջև կապն ակնհայտ չէ, պարզ չէ, թե յուրաքանչյուր միջոցառում ինչ հիմնախնդիր է թիրախավորել: Կոնկրետ միջոցառման կապը կոնկրետ հիմնախնդրի հետ ենթադրելի է, սակայն ոչ հստակ սահմանված: Որպես հետևանք՝ թե՛ հիմնախնդիրների նկարագրությունը, թե՛ Ռազմավարության այլ հատվածների բովանդակությունը դառնում է ինքնանպատակ. դրանք չեն շաղկապվում միմյանց հետ:

- Միջոցառումների ծրագրում ևս այս խնդիրն ակնառու է: Միջոցառումների զգալի մասը թիրախավորում է հիմնախնդիրներ, որոնք ընդհանրապես ներկայացված չեն Ռազմավարության մեջ: Իսկ միջոցառումների մյուս մասի պարագայում պարզ չէ, թե որն է թիրախավորված հիմնախնդիրը (հիմնախնդիրը ենթադրելի է, բայց հստակ ձևակերպված չէ) և ինչ կապ ունի ենթադրյալ հիմնախնդիրը կոռուպցիայի հետ (պարզ ասած, արդյո՞ք այն հենց կոռուպցիոն հիմնախնդիր է):

- Որոշ միջոցառումների ձևակերպումները բավական անորոշ են, հետևաբար դժվար գնահատելի է դրանց հաջող կատարումը: Որոշ միջոցառումներով նախատեսված գործողությունների ու ակնկալվող արդյունքների զգալի մասն արդեն ապահովված է ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրի իրականացման միջոցով:

- Միջոցառումների ակնկալվող արդյունքների ձևակերպումն ավելի շատ նման է միջոցառման կատարումը գնահատող ցուցանիշների: Ակնկալվող արդյունքների նման ձևակերպումը թույլ կտա գնահատել միայն միջոցառման **կատարման փաստը**, սակայն ոչ՝ մանկավարժների վարքի կամ կոռուպցիոն երևույթների վրա դրա ունեցած **ազդեցությունը**: Սա միջոցառումների ամբողջ ծրագրին բնորոշ խնդիր է:

- Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի՝ վերը քննարկված խնդիրների մեծ մասը հատուկ է նաև ԿԳՆ և բուհական հակակոռուպցիոն ծրագրերին: Այս ծրագրերում նույնպես կոռուպցիոն ռիսկերի ու հիմնախնդիրների նկարագրությունը բացակայում է, ազդեցության գնահատման որևէ ցուցիչ նախատեսված չէ: Մակայն ծրագրերի գլխավոր թերությունն այն է, որ ապահովված չէ հստակ կապը՝ առաջարկվող միջոցառման և կոռուպցիայի հակազդեցության միջև:

- Միջոցառումների զգալի մասը կրթության համակարգի ընդհանուր զարգացմանն է միտված: Եթե փաստաթղթերի անվանման մեջ «կոռուպցիոն երևույթների դեմ պայքար» բառակապակցությունը փոխարինենք «զարգացում» բառով, այդ նոր վերնագիրը միգուցե ավելի համահունչ լինի բովանդակությունը: Պլանավորված միջոցառումներն ինքնին դրական են, քանի որ միտված են կրթության որակի բարելավմանը, կրթական համակարգի արդյունավետության բարձրացմանը: Սակայն դրանց ակնկալվող ազդեցությունը կոռուպցիոն ռիսկերի մակարդակի վրա խիստ անորոշ է:

- Այս ծրագրերի գլխավոր թերությունը կոռուպցիայի վերաբերյալ ամբողջական, հայեցակարգային մոտեցման բացակայությունն է: «Կոռուպցիոն ռիսկեր», «կոռուպցիոն երևույթներ», «հակակոռուպցիոն միջոցառումներ» և կիրառված այլ հասկացությունները գուրկ են հստակ բովանդակությունից: Որպես հետևանք, ձևակերպումները բավական անորոշ են և վերացարկված իրական խնդիրներից:

- «Հակակոռուպցիոն պայքար»-ը դարձել է հաճախ կիրառվող և մոդայիկ, հիմնականում՝ արտաքին ազդեցությամբ (Կառավարություն, միջազգային գործընկերներ) ներդրված մի հայեցակետ, որի անհրաժեշտության ընկալումն ու թիրախները դեռ բավական մշուշոտ են: Կոռուպցիան բավական լայն մեկնաբանության է արժանանում: Այս հասկացության մեջ չհիմնավորված կերպով ներառվում են բազմաթիվ անցանկալի երևույթներ ու հիմնախնդիրներ:

- Ապահովված չէ թե՛ ԿԳՆ, թե՛ առանձին բուհերի հակակոռուպցիոն միջոցառումների կապը Կառավարության կողմից հաստատված հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների ծրագրի հետ: Այս օղակների հակակոռուպցիոն ծրագրերը պետք է մշակվեն որպես միասնական համակարգի փոխկապակցված և փոխհամաձայնեցված տարրեր:

Առաջարկություններ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներից է մասնագիտացվածության պահանջը: Այդ պայքարը պահանջում է տարբեր դաշտերում հատուկ մասնագիտացվածություն, գիտելիքներ և ունակություններ: Մինչդեռ, ՀՀ հակակոռուպցիոն մարմիններում մասնագիտացվածության պահանջը լիովին պահպանված չէ՝ հատկապես հասարակական գիտությունների և կրթության փորձագետների առումով: Այս պահանջի համատեքստում է հնարավոր դիտարկել ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերը: Կոնկրետ ոլորտում հակակոռուպցիոն պայքարը պետք է տվյալ ոլորտի խորքային ուսումնասիրության վրա հիմնվի: Ընդհանուր բնույթի դեղատոմսերը յուրահատուկ բնագավառներում կիրառելի չեն: Կարևոր է կրթության ոլորտում կոռուպցիայի հանգամանակից ուսումնասիրությունը՝ դրա ինստիտուցիոնալ առանձնահատկությունների և յուրահատուկ կոռուպցիոն մշակույթի բացահայտմամբ: Շատ կարևոր է հասկանալ կոռուպցիոն գործողության անմիջական մոտիվները՝ ինչպես է կատարվում այս կամ այն գործողությունը, ինչն է դրդում կատարել այն, ո՞րն է մասնակիցների օգուտը և վնասը՝ համակարգի համար: Առանց մոտիվները հասկանալու, օգտագործելով միայն վերացական սխեմաներ, հնարավոր չէ իրատեսական լուծումներ առաջարկել:
2. Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը, որպես միջոցառում, կարիք չկա ընդգրկելու Միջոցառումների ծրագրի մեջ: Այն **նախապես իրագործված պետք է լինի**՝ նախքան միջոցառումների ծրագիր, և նույնիսկ՝ հակակոռուպցիոն հայեցակարգ և ռազմավարություն մշակելը: Այլապես անհաղթահարելի հակասություն է առաջ գալիս. միջոցառումները մշակվում են առանց կոռուպցիոն ռիսկերի բացահայտման: Ստացվում է, որ առաջարկվող միջոցառումները ենթադրությունների, նախկին փորձի կամ պրակտիկայի վրա են հիմնվում, սակայն ոչ գիտականորեն հիմնավորված հետազոտությունների արդյունքների:
3. Հետագա հակակոռուպցիոն հայեցակարգերում պետք է ամրագրել այն սկզբունքը, որ նախքան որևէ միջոցառման մշակումը՝ **պարտադիր է ՀՀ-ում կոռուպցիայի թե՛ համալիր, թե՛ ոլորտային հետազոտությունների** (քանակական ու որակական) անցկացումը: Սա առաջնահերթ լուծում պահանջող հայեցակարգային խնդիր է: Նման հետազոտությունների բացակայությունը կասկածի տակ է դնում պետական հակակոռուպցիոն քաղաքականության և ծախսերի արդյունավետությունը:
4. Հարկավոր է կոռուպցիոն հիմնախնդիրների բացահայտմանն ուղղված համալիր գործողություններ ամրագրել. ո՞ր կառույցների կողմից և ի՞նչ պարբերականությամբ պետք է իրականացվեն այդ հետազոտությունները, ինչպես է ապահովվելու հետազոտությունների անկախությունն ու անկողմնակալությունը, ինչպես են օգտագործվելու հետազոտության արդյունքները հակակոռուպցիոն ծրագրերում:
5. Նույնքան, որքան մեկանգամյա հետազոտությունները, կարևոր է նաև մոնիթորինգի համակարգի գործարկումը: Ցանկացած հետազոտություն, որքան էլ ընդգրկուն ու որակյալ լինի, պատկերացում է տալիս ժամանակի որոշակի պահին առկա խնդիրների վերաբերյալ: Անհրաժեշտ է մոնիթորինգի համակարգի գործարկում՝ խնդիրների հաղթահարման գործընթացն անընդհատ դիտարկման ներքո պահելու համար:
6. Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար հնարավոր է ապահովել այն դեպքում, եթե հնարավոր լինի հասնել կոռուպցիոն ռազմավարությունների դիսֆունկցիոնալությանը: Այսինքն, կոռուպցիան կարող է հաղթահարվել ոչ թե արտաքին ազդեցությամբ և պատիժների միջոցով, այլ՝ այնպիսի պայմաններ ստեղծելով, երբ կոռուպցիան կսպառի իրեն՝ որպես նպատակներին հասնելու ոչ արդյունավետ եղանակ:
7. Հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը ցանկալի է իրականացնել երկմակարդակ փորձագիտական խմբերի կողմից: Ընդհանուր մակարդակի փորձագիտական խումբը պետք է զբաղվի կոռուպցիայի՝ ընդհանուր բնույթ ունեցող դրսևորումների և պատճառների, դրանց սոցիոմշակութային պայմանավորվածության ուսումնասիրությամբ: Այս մակարդակում կարևոր է վերհանել կոռուպցիոն վարքի հիմքում ընկած սոցիալական նորմերը, հասկանալ կոռուպցիայի՝

- որպես համակարգային երևույթի հիմքերը: Փորձագիտական հաջորդ մակարդակում կարևոր է կոռուպցիայի ոլորտային և ինստիտուցիոնալ առանձնահատկությունների վերհանումը:
8. Քանի որ հակակոռուպցիոն պայքարը կարող է հանգեցնել կոռուպցիայի նոր, առավել ստվերային, կատարելագործված ձևերի առաջացմանը, ուստի հակակոռուպցիոն ծրագրերը պետք է ռիսկերի առաջանցիկ վերլուծությունն ներկայացնեն: Ոչ միայն առկա, այլև՝ հակակոռուպցիոն պայքարի արդյունքում ձևավորվելիք նոր իրավիճակի վերաբերյալ: Հարկավոր է կանխատեսել այն նոր կոռուպցիոն դրսևորումները, որոնք կարող են առաջանալ իրականացված միջոցառումների, բարեփոխումների հետևանքով: Ռազմավարությունը պետք է պրոակտիվ մոտեցման վրա հիմնվի՝ կանխատեսելով հնարավոր նոր կոռուպցիոն դրսևորումները և դրանց հաղթահարման ուղիները:
 9. Հարկավոր է ապահովել հակակոռուպցիոն ծրագրերի, միջոցառումների և դրանց արդյունքների հրապարակայնության առավել բարձր մակարդակ: Հրապարակայնությունը ևս առնվազն երկու մակարդակներում պետք է ապահովվի՝ 1. կառավարության կողմից հաստատված ռազմավարության և միջոցառումների ծրագրի և 2. պատասխանատու մարմինների կողմից իրականացվող ոլորտային ծրագրերի առնչությամբ:
 10. Հարկավոր է ապահովել հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների, ակնկալվող արդյունքների և այլ բաղադրիչների վերանայման հնարավորությունը, քանի որ դրանք կարող են կորցնել իրենց ակտուալությունը ծրագրի իրականացման ընթացքում: Յուրաքանչյուր տարեվերջին, ծրագրի իրականացման պատասխանատու մարմիններից ստացված առաջարկների հիման վրա, հարկավոր է վերանայել միջոցառումների ծրագիրը:
 11. Հակակոռուպցիոն միջոցառումների՝ վերնից-ներքև սկզբունքով, վարչահրամայական եղանակով իրականացման պատճառներից մեկն էլ դրանց բաց քննարկման համար անհրաժեշտ հարթակների բացակայությունն է: Հարկավոր է խրախուսել ծրագրի թիրախ հանդիսացող ոլորտների ներկայացուցիչների ներգրավումը ծրագրի միջոցառումների պլանավորման, իրականացման և մոնիթորինգի գործընթացում: Պետք է ապահովել դրա համար անհրաժեշտ կայուն հարթակի ձևավորումը: Այս հարթակում իրականացվող քննարկումները տվյալների լավ աղբյուր կարող են հանդիսանալ մոնիթորինգի համար: Դրանց հետևելով՝ կարելի է հասկանալ, թե որքանով են միջոցառումները ծառայում վերջնական նպատակներին և արդյոք անմիջական շահառուներն իրենց կյանքում փոփոխություններ են արձանագրում:
 12. Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի եղանակ է համարվել հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմները կրթական հաստատություններից դուրս գտնվող ուժերին հանձնելը: Այդ լծակները պետք է լինեն այն սուբյեկտների ձեռքում, որոնք կոռուպցիոն դաշտում չեն: Օրինակ՝ գործատուները, որոնք ավելի սերտ համագործակցության մեջ կմտնեն բուհերի հետ և կֆինանսավորեն ապագա աշխատողների կրթությունը, կարող են անուղղակի վերահսկողական գործառույթ իրականացնել կրթության որակի նկատմամբ: Գործատուն, որպես շահագրգիռ կողմ, կարող է զսպել կոռուպցիոն տարբեր մեխանիզմների գործառույթները:
 13. Ռազմավարության նախագծի մեջ կրթության ոլորտին առնչվող կոռուպցիոն հիմնախնդիրների ցանկը խիստ սահմանափակ է, ոչ լիարժեք: Այս ուսումնասիրության մաս կազմող «կոռուպցիոն հիմնախնդիրների այլընտրանքային վերլուծություն»-ը կամ դրա առանձին հատվածներն առաջարկվում է ներառել Ռազմավարության մեջ: Եթե նույնիսկ այս պահին իրատեսական չէ ներկայացված հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ համալիր միջոցառումների մշակումը, կարևոր է դրանց ներառումը Ռազմավարության մեջ՝ որպես հետագա գործունեության ուղենիշերի:
 14. Հարկավոր է վերանայել Ռազմավարության «Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները» հատվածում կիրառված ձևակերպումները՝ ամրագրելով դրանք որպես հիմնախնդիրներ (և ոչ նպատակներ): Հիմնավորված կլինեն հետևյալ հերթականությունը. սկզբում փաստերի շարադրանք, հետո՝ դրանց ամփոփում հանդիսացող հիմնախնդրի նկարագրությունը և միայն վերջում՝ որոշակի նպատակադրում:
 15. Հարկավոր է ընդլայնել կոռուպցիոն հիմնախնդիրների ինստիտուցիոնալ շրջանակը՝ ներառելով նաև գիտության ոլորտը: Ինչպես նաև՝ Ռազմավարության մեջ քննարկվող հանրակրթության և բարձրագույն կրթության օղակներից բացի, ներառել նախնական և միջին մասնագիտական,

- հետբուհական կրթության ենթահամակարգերը, կրթության կառավարման մարմինները՝ ԿԳՆ, Կրթության պետական տեսչություն, ՈԱԱԿ, և այլ ենթահամակարգեր:
16. Հակակոռուպցիոն միջոցառումներում հարկավոր է արտացոլել կրթության տարբեր օղակների միջև կոռուպցիոն վարքի ու պրակտիկաների փոխանցման խնդիրը: Հարկավոր է կանխարգելիչ միջոցներ նախատեսել, օրինակ՝ դպրոցից բուհ փոխանցվող կոռուպցիոն պրակտիկաների համար:
 17. Ցանկալի է Ռազմավարության մեջ ներառել կոռուպցիայի հաղթահարման՝ թե՛ ՀՀ, թե՛ արտերկրի դրական փորձի ուսումնասիրությունը: Հատուկ ուշադրություն դարձնել առանձին կրթական հաստատությունների հաջողված փորձի քննությանը:
 18. Անհրաժեշտ է կիրառել հակակոռուպցիոն պայքարի այնպիսի հայեցակարգ, որը ցույց կտա կրթության ոլորտում կոռուպցիայի հաղթահարման վերջնական նպատակը: Պետք է պարզ և ընկալելի լինեն այդ պայքարի ակնկալվող վերջնարդյունքները և ազդեցությունը, օրինակ, մարդկային զարգացման կամ կրթության որակի բարելավման վրա:
 19. Կարևոր է «կոռուպցիա», «կոռուպցիոն ռիսկ», «կոռուպցիոն հիմնախնդիր» և այլ հասկացությունների սահմանումը Հայեցակարգում կամ Ռազմավարության մեջ:
 20. Այն միջոցառումների համար, որոնց ժամկետները հնարավոր չէ ամրագրել ծրագրի պլանավորման պահին, կիրառել ժամկետներ նշելու հետևյալ տարբերակը. օրինակ՝ «գործողության իրականացման ժամկետ սահմանել համապատասխան օրենքի՝ ուժ մեջ մտնելու օրվանից մինչև 6-ամսյա ժամանակահատվածը»: Այս ձևակերպումը թույլ կտա խուսափել ժամկետների անընդհատ վերանայման պահանջից և միջոցառումների իրականացման միջև տրամաբանական կապ հաստատել:
 21. Ցանկալի է իրականացնել միջոցառումների խմբավորում՝ ըստ բովանդակության՝ նոր ենթավերնագրերի ներքո: Կարծում ենք, նպատակահարմար է սկզբում ներկայացնել այն միջոցառումները, որոնք ուղղված են խնդիրների բացահայտմանն ու վերլուծությանը, հետո՝ անցնել դրանց հաղթահարման գործողությունների թվարկմանը:
 22. Միջոցառումների ծրագրում **ազդեցության գնահատման** ցուցանիշների ներառումը պահանջված ու կարևոր է: Առանց այդ վերջնարդյունքների, միջոցառումների կատարումը ինքնանպատակ բնույթ է ստանում:
 23. Հարկավոր է ապահովել թե՛ ԿԳՆ, թե՛ առանձին բուհերի հակակոռուպցիոն միջոցառումների կապը Կառավարության կողմից հաստատված հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի հետ: Այս օղակների հակակոռուպցիոն ծրագրերը պետք է մշակվեն որպես միասնական համակարգի փոխկապակցված և փոխհամաձայնեցված տարրեր:
 24. Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի համար առաջարկվում է կիրառել հետևյալ ձևաչափը.

Միջոցառում	Գործողություն	Ակնկալվող արդյունքներ (ներառյալ մոնիթորինգային ցուցիչները)	Ակնկալվող ազդեցություն (վերջնարդյունքներ)	Կոռուպցիոն հիմնախնդիրներ և ռիսկեր
1	1.1	1..... 2..... 3.....	1..... 2..... 3.....	1
	1.2	1..... 2..... 3.....	1..... 2..... 3.....	2
2	2.1	1..... 2..... 3.....	1..... 2..... 3.....	3
	2.2	1..... 2..... 3.....	1..... 2..... 3.....	4
3	3.1	1..... 2..... 3.....	1..... 2..... 3.....	5
	3.2	1..... 2..... 3.....	1..... 2..... 3.....	6

Կարևոր է ցույց տալ միջոցառումների ակնկալվող ազդեցության կապը նախապես առանձնացված կոռուպցիոն հիմնախնդիրների և ռիսկերի հետ: Ինչպես տեսնում ենք, մեկ միջոցառումը կարող է

միաժամանակ մի քանի հիմնախնդրի հաղթահարմանը նպաստել, իսկ մեկ հիմնախնդրի հաղթահարմանը կարող են օժանդակել միաժամանակ մի քանի միջոցառումներ: Միեմատիկ կամ այլ եղանակով այդ կապի պատկերումը թույլ կտա տեսնել այն հիմնախնդիրները, որոնք թիրախավորված չեն, սպրդել են պլանավորման գործընթացից:

Մյուս կողմից, ակնհայտ կդառնան այն միջոցառումները, որոնք տեսանելի կապի մեջ չեն գտնվում կոռուպցիոն հիմնախնդիրների հետ: Դրանք կամ ինքնանպատակ են, չհիմնավորված կամ՝ այլ բնույթի խնդիրների (ոչ կոռուպցիոն) հաղթահարման են ուղղված:

25. Յուրաքանչյուր կոռուպցիոն գործողության (ԿԳ) համար առաջարկվում է կիրառել վերլուծության հետևյալ մոդելը: Մոդելի յուրաքանչյուր բաղադրիչ հարցադրումների համակարգ է ներկայացնում: Կոռուպցիոն տարբեր գործողությունների վերաբերյալ դրանց միջոցով ստացված և առավել հաճախ կրկնվող պատասխանները հնարավոր է խմբավորել ընդհանուր կատեգորիաներում: Օրինակ, այս մոդելի միջոցով հնարավոր է բացահայտել այն իրավական նորմը, որն առավել հաճախ է կրկնվում պատասխաններում որպես հակասական կամ թերի: Կրկնվող խնդիրների ուղղությամբ հնարավոր է մեկ միասնական միջոցառման պլանավորումը:

Կոռուպցիոն գործողության վերլուծության մոդել

1. Կոռուպցիոն գործողության նկարագրությունը

2. Կոռուպցիոն գործողության մասնակիցների կազմը

- Ազենտ (չարաշահում իրականացնող պաշտոնատար անձն է, ԿԳ սուբյեկտը)
- Կլիենտ (կոռուպցիոն գործարքի կողմ է, անձը, ով շահում է ԿԳ արդյունքում)
- Միջնորդ
- Շահագրգիռ այլ կողմեր, ԿԳ ուղղակի և անուղղակի այլ շահառուներ
- ԿԳ մեջ ուղղակի կամ անուղղակի ներգրավված ինստիտուտներ ու համակարգեր

3. Կոռուպցիոն գործողության բնութագրիչները

Պատճառը (ինչո՞ւ)	Օրինակ՝ այսպես ավելի արագ է/հեշտ է, Խնդրի լուծման այլ, օրինական միջոցներ չկան կամ դժվարհասանելի են, և այլն
Ինչպե՞ս (միջոցները)	Օրինակ՝ կաշառք, հովանավորչություն, սաբոտաժ, այլ
Ինչի՞ համար (երկուստեք՝ ազենտի և կլիենտի կողմից ակնկալվող օգուտը/նպատակը)	Օրինակ՝ աշխատանքի ընդունվել արտոնյալ պայմաններով, բարձր գնահատական ստանալ, բարելավել ֆինանսական դրությունը, և այլն
ԿԳ բացասական հետևանքները (ազենտի և կլիենտի / այլ կողմերի / համակարգի համար)	Օրինակ՝ բարձրագույն կրթության համակարգում «լուռ գործարքի» ֆենոմենը նկարագրելիս նշել էինք դասախոսների բարոյալքման, կրթության գործընթացի արժեզրկման, ուսանողների ցածր կրթական արդյունքների մասին
ԿԳ տարածվածությունը, հաճախականությունը, խորությունը (ցուցանիշների կազմը կարելի է շարունակել)	Նկարագրության համար հարկավոր է հիմնվել հետազոտությունների և մշտադիտարկման արդյունքների վրա, կիրառել միջազգային տարբեր ցուցիչներ:

4. Կոռուպցիոն գործողության արժեքա-նորմատիվ ասպեկտը

<i>Նորմեր</i>	Տնօրնայ, ամրագրված		Ոչ Ֆորմայ, չամրագրված	
	Իրավական (համընդհանուր բնույթ ունեցող)	Ինստիտուցիոնալ (բնորոշ տվյալ ինստիտուտին կանոնադրություն, ներքին կանոնակարգեր)	Մշակութային / Սոցիալական	Ինստիտուցիոնալ (բնորոշ տվյալ ինստիտուտին սովորույթներ/ծեսեր, ենթամշակույթ, լեզու, խմբային արժեքներ)
Նորմեր, որոնք նպաստում, դրդում կամ խթանում են տվյալ ԿԳ	<i>Օրինակ՝</i> Տվյալ ԿԳ համար պատիժների համակարգը բացակայում է կամ չափազանց մեղմ է: Առկա են հայեցողական լիազորություն նախատեսող օրենսդրական նորմեր:	<i>Օրինակ՝</i> Առկա են հայեցողական լիազորություններ նախատեսող նորմեր: Գնահատման համակարգը կամայական մոտեցման հնարավորություն է ընձեռում	<i>Օրինակ՝</i> Տվյալ ԿԳ ընդունելի է և խրախուսելի՝ որպես խնդիրների լուծման արագ տարբերակ: Խնդիրներն այդ կերպ լուծող անձը ուժեղ է, համակրելի, հեղինակավոր:	<i>Օրինակ՝</i> Նվիրատվության ծեսը դպրոցներում և բուհերում: «Բարձրագույն կրթության վկայականը կարևոր է, անկախ նրանից՝ թե հետագայում ինչպես է այն վերածվելու կապիտալի այլ ձևերի»:
Նորմեր, որոնք զսպում, կանխարգելում կամ խոչընդոտում են ԿԳ իրականացումը	<i>Օրինակ՝</i> Բացահայտման դեպքում սպառնացող վտանգը. ազատագրվում, ֆինանսական տույժ, այլ:	<i>Օրինակ՝</i> Բացահայտման դեպքում սպառնացող վտանգը. աշխատանքի կորուստ, պաշտոնի իջեցում, այլ:	<i>Օրինակ՝</i> Հասարակական պարսավանք, սոցիալական մեկուսացում:	<i>Օրինակ՝</i> «Չի կարելի կաշառք պահանջել գնահատականի անհիմն իջեցման սպառնալիքով»:

- Վերը բերված աղյուսակի առնչությամբ հարկավոր է լրացուցիչ հարցադրումներ կատարել.
1. Կա՞ն արդյոք ներքին հակասություններ որևէ նորմի շրջանակներում: Օրինակ՝ իրավական կարգավորումները հստակ չեն, տարընթերցումների տեղիք են տալիս, թերի են, և այլն:
 2. Ինչպիսի՞ հակասություններ ու հարաբերություններ են առկա տարբեր նորմերի միջև: Օրինակ՝ մշակութային չգրված նորմը խրախուսում է ԿԳ, իսկ իրավական նորմը պատիժ է նախատեսում: Կամ՝ մշակութային չգրված նորմը խրախուսում է ԿԳ, իսկ պատիժ սահմանող որևէ իրավական նորմ նախատեսված չէ: Կամ՝ X օրենքը երաշխավորում է բուհի ինքնավարությունը, մինչդեռ օրենքների մեկ այլ խումբ՝ հակասության մեջ մտնելով, հակառակ կարգավորումն է նախատեսում:
 3. Հակակշռո՞ւմ են արդյոք նորմերը մեկը մյուսին և դրանց հավասարակշռության ինչպիսի՞ խախտումն է հանգեցնում ԿԳ: Օրինակ՝ ինչո՞ւ է նորմերից մեկը գերակա նշանակություն ստանում մյուսների համեմատ: Ի՞նչ մեխանիզմներ են ազդում նորմերից որևէ մեկին գերակայություն տալու հարցում:

5. ԿԳ վերաբերյալ տեղեկատվության ստացում և բացահայտման մեխանիզմներ

1. Որո՞նք են տվյալ ԿԳ վերաբերյալ տեղեկատվության հնարավոր աղբյուրները և ինչպե՞ս է հնարավոր ընդլայնել դրանց ցանկը:
2. Որո՞նք են ԿԳ վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում շահագրգիռ կողմերը և ո՞րն է նրանց շահը:
3. Արդյո՞ք ԿԳ վերաբերյալ տեղեկատվություն հայտնելը անվտանգ է և արդյո՞ք այն խրախուսվում/դատապարտվում է հասարակական նորմերով:
4. Կա՞ն արդյոք տվյալ ԿԳ բացահայտման հատուկ ընթացակարգեր (պարբերական վերահսկողություն, ուսումնասիրություններ, ստուգումներ, այլ):
5. Ի՞նչ պարբերականությամբ և ո՞ր դեպքերում են իրականացվում ԿԳ բացահայտմանն ուղղված գործողություններ:
6. Առկա՞ է արդյոք ԿԳ բացահայտման հարցում պատասխանատու մարմին և ո՞րն է դրա շահը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ակադեմիական անագնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում / Անտոնյան Ք., 2013, <http://goo.gl/7ZCh0d>
2. Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն / Կենտրոնական եվրոպական համալսարանի Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, 2013, <http://goo.gl/0Khka6>
3. Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում / Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ, Երևան, Վան Արյան, 2014, <http://goo.gl/uZaDvI>
4. ԲՈՒՀ-երի ինքնավարության զարգացումը. առկա խնդիրների վերաբերյալ հետազոտություն / ՄԻԺԻ, Երևան, հունվար, 2014, <http://goo.gl/CIo6UH>
5. ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. համալիր միջոցառումների ծրագիր, <http://goo.gl/U28As3>
6. ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014թթ. համալիր միջոցառումների ծրագիր, <http://goo.gl/qInXRI>
7. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2013թ. հակակոռուպցիոն ռազմավարության (նպատակները, խնդիրները, իրագործման ուղղությունները և ուղիները), <http://goo.gl/hKG7ZO>
8. Կառավարման խնդիրների լուծումը` Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների կենտրոնում / Համաշխարհային բանկի կրթական թիմ, 2013, <http://goo.gl/47OQwL>
9. Կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա / Թադևոսյան Ա., Երևան, 2009, <http://goo.gl/h4iP1B>
10. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ձևավորման և գործունեության կարգը, խորհրդի կազմը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, <http://goo.gl/HMGGfN>
11. Կոռուպցիան և հակակոռուպցիոն պայքարը Հայաստանում. ընդհանուր իրավիճակի նկարագիր / Թրանսփարենսի Ինթերնեշնլ, հեղինակներ` Ուիլբերգ Ս., Հոկտանյան Վ., 2013, <http://goo.gl/wtrLNz>
12. Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիր, <http://goo.gl/EHs9jI>
13. Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագիր, <http://goo.gl/GxFZ5x>
14. Հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանում / Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան, Երևան, 2006, <http://goo.gl/nOFWIJ>
15. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը, <http://goo.gl/ICNpGK>, 04.02.2015, ժ. 15:40
16. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ, <http://goo.gl/qCYgC2>, 04.02.2015, ժ. 15:40
17. Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիր, <http://goo.gl/W75SSV>
18. Հայեցակարգ հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի, <http://goo.gl/uPvddf>, 04.02.2015, ժ. 15:45
19. ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները. սոցիոլոգիական հետազոտություն GS Index-2/13 / «Այ Փի Էս Մի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, հուլիս 2013, <http://goo.gl/iwcEqH>

20. ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները. սոցիոլոգիական հետազոտություն GS Index-3/11 / «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, հոկտեմբեր 2011, <http://goo.gl/3fDXQN>
21. ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, <http://goo.gl/5vmxO5>
22. ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների վերաբերյալ ՀԵԻԱ-ի և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկություններ, <http://goo.gl/anHXIe>
23. Տեղեկանք Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագրով 2013 թվականին նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ (տարեկան), <http://goo.gl/lj1nBe>
24. Տեղեկանք Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագրով 2014 թվականին նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ (տարեկան), <http://goo.gl/UBNGvW>
25. Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին / Ասլանյան Լ., Գյումրիքաշյան Կ., Գրիգորյան Ա., Խաչատրյան Ա., Հասասյան Ա., Երևան, 2010, <http://goo.gl/ZRQszz>
26. Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում կրթության բարեփոխումների համատեքստում / Խաչատրյան Ա., Պետրոսյան Ա., Թերզյան Գ., Բարև ՀԿ, 2013, <http://goo.gl/yCD4Eq>
27. Օրինավորության ազգային համակարգի գնահատում / Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2013, <http://goo.gl/7zNt1t>
28. Armenia - Second Education Quality and Relevance Project, Education Improvement Project / World Bank, Armenia, 2014, <http://goo.gl/MxKD78>
29. Социологический анализ проявлений коррупции в современном армянском обществе. Диссертация / Арутюнян Б., Ереван, 2007.

Մամուլի հրապարակումներ

1. Անընդունելի են համարում առանց հանրային քննարկումների «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգի ընդունումը / 168 ժամ, <http://goo.gl/LHJqSD>
2. Դպրոցների խորհուրդներում ամեն ինչ որոշված է / Անի Մկրտչյան, Ասպարեզ, <http://goo.gl/PC7plZ>
3. Ինչպե՞ս հասնել կոռուպցիայի կայուն նվազման. մեկնաբանում է Արմեն Աշոտյանը / Սիրանուշ Հայրապետյան, Առավոտ, <http://goo.gl/7RTSdL>
4. Կոռուպցիայի ընկալման համաթիվ. ԹԻ-ի 2014-ի տվյալներով՝ Հայաստանի գնահատականն ավելի բարձր է հարևանների համեմատությամբ / Սառա Խոջոյան, ԱրմենիաՆաու, <http://goo.gl/4qhCnb>